

110 կՎ Լալվար և Նոյեմբերյան օդային
Էլեկտրահաղորդման գծերի փոխարինում
Կրճատված Վերաբնակեցման գործողության պլան

Մաս 1՝ Ալավերդի, Մեծ Այրում, Ճոճկան և Այրում համայնքներ

Պայմանագիր

110 կՎ Լալվար և Նոյեմբերյան օդային էլեկտրահաղորդման գծերի փոխարինման
նախագծման, մատակարարման և տեղակայման գնում
Պայմանագիր No. ICB No: HV-W-1/2015 առ 11.08.2016թ-ի

Կազմված՝

Գամ Արակ արդյունաբերական ընկերության կողմից

Ներկայացման ամսաթիվը

Նոյեմբեր, 2017թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սահմանումներ	7
Ամփոփ նկարագիր	10
1. Ներածություն.....	14
1.1 Ծրագրի նկարագրություն	14
1.2 Ծրագրի աշխարհագրական դիրքը	14
1.3 Ծրագրի նկարագրությունը.....	15
1.4 Վերաբնակեցման Գործողության Պլանի կազմման հիմնավորում	15
1.5 Կրճատված Վերաբնակեցման գործողության պլանի նպատակը և շրջանակը	16
1.6 Ծրագրի վերջնաժամկետը	17
1.7 Փաստաթղթի հրապարակում	17
2. Ազդեցության գնահատում.....	18
2.1 Նախապատմությանը	18
2.2 Ուսումնասիրության մեթոդաբանությունը	18
2.3 Ազդեցությունը հողի վրա	19
2.3.1 Հողերի դասակարգումը, ըստ ՀՀ օրենքի	19
2.3.2 Հողի կորուստ.....	19
2.4 Ազդեցությունը մշակաբույսերի վրա	21
2.5 Ազդեցությունը ծառերի վրա	21
2.6 Ազդեցության ենթարկված տնային տնտեսությունների մարդահամարը և ազդեցությունը նրանց կենսամակարդակի վրա	22
2.6.1 Ազդեցության ենթարկված տնային տնտեսությունների սոցիալ-տնտեսական նկարագիրը	22
2.6.2 Ազդեցություն աղքատ և խոցելի տնային տնտեսությունների վրա.....	24
2.6.3 Եկամտի վրա զգալի ազդեցություն կրող ազդակիր ՏՏ-ներ	26
2.7 Ազդեցություն՝ ամփոփումը	26
3. Հանրային քննարկումներ և տեղեկատվության հրապարակում.....	27
3.1 Նկարագրություն.....	27
3.2 Հանրային քննարկումներ և հրապարակման պլան	27
3.3 Հանրային քննարկում	27
3.3.1 ՎԳՊ-ի կազմման ընթացքում պաշտոնական հանրային քննարկումներ	27
3.3.2 Ոչ-պաշտոնական հանրային քննարկումներ.....	28

3.3.3	ՎԳՊ-ի իրականացման և շինարարության ընթացքում հանրային քննարկումներ.....	29
3.4	Տեղեկատվության հրապարակում	29
4.	Բողոքների Կարգավորման Մեխանիզմ և Գործընթացներ	31
4.1	Ներածություն	31
4.2	Բողոքների Կարգավորման Մեխանիզմ.....	31
4.2.1	Առաջին փուլ	31
4.2.2	Երկրորդ փուլ.....	32
4.3	Հիմնական պատասխանատու կողմերը և առկա կապերը բողոքներ ներկայացնելու համար	32
4.4	Բողոքների գրանցման և հասցեագրման գործընթաց.....	33
4.4.1	Ուսումնասիրում և փաստաթղթավորում	33
4.4.2	Դիտարկում	34
4.5	Շինարարության փուլում ԲԿՄ	34
5.	Ինստիտուցիոնալ շրջանակ.....	35
5.1	Ներածություն	35
5.2	ԲԷՑ.....	35
5.2.1	Ընդհանուր նկարագրություն	35
5.2.2	Հիմնական պատասխանատվությունները.....	36
5.2.3	ՎԳՊ-ի իրականացման միավոր.....	36
5.3	ԲԷՑ-ի խորհրդատուները.....	36
5.3.1	Շինարար կապալառու.....	36
5.3.2	Իրականացմանն աջակցող խորհրդատու.....	37
5.3.3	Անկախ խորհրդատու.....	37
5.4	Պետական Կառավարման Մարմիններ	37
5.5	Մարզպետարաններ (Տարածաշրջանային լիազոր մարմիններ)	38
5.6	Տեղական Ինքնակառավարման Մարմիններ.....	38
5.7	Բողոքների Կարգավորման Հանձնաժողով.....	38
5.8	Հասարակական Կազմակերպություններ.....	38
5.9	Համաշխարհային Բանկ	39
6.	Օրենսդրական Հայեցակարգ	40
6.1	Տեղական օրենսդրական հայեցակարգ	40
6.2	Հայաստանի օրենքների և Համաշխարհային Բանկի Պարտադրված Վերաբնակեցման Քաղաքականության համեմատությունը	41

6.3	Օրենսդրական բացերի վերլուծություն.....	43
7.	Իրավունակություն և իրավունքի շրջանակ.....	44
7.1	Իրավասություն.....	44
7.2	Իրավունքի շրջանակը.....	44
7.2.1	Գյուղատնտեսական նշանակության հող.....	45
7.2.2	Պետական և համայնքային հողեր.....	45
7.2.3	Այլ փոխհատուցումներ և դրամական օժանդակություն.....	46
7.3	Իրավունքի մատրիցա.....	47
7.4	Վնասված գույքի գնահատում.....	48
8.	Վերաբնակեցման բյուջեն.....	49
8.1	Ներածություն.....	49
8.2	Աղբյուրների և դրամական միջոցների բաշխում.....	49
8.3	Փոխհատուցում հողի, մշակաբույսերի, ծառերի և այլ կորուստների դեպքում.....	49
8.3.1	Գնահատման և փոխհատուցման հաշվարկային մոտեցումը.....	49
8.3.2	Փոխհատուցում մասնավոր հողատարածքների կորստի համար.....	50
8.3.3	Փոխհատուցում մշակաբույսերի համար.....	51
8.3.4	Փոխհատուցում ծառերի համար.....	51
8.3.5	Զգալի ազդեցության համար դրամական աջակցություն.....	53
8.3.6	Դրամական աջակցություն խոցելի խմբերին.....	53
8.4	Գրանցման ծախսերը.....	53
8.5	Բյուջեի ամփոփում.....	55
9.	Վերաբնակեցման Գործողությունների պլանի իրականացման գործընթաց.....	56
9.1	Ներածություն.....	56
9.2	Վերաբնակեցման Գործողությունների Պլանի նախապատրաստական աշխատանքները.....	56
9.3	Վերաբնակեցման Գործողությունների Պլանի իրականացման նախապատրաստական աշխատանքները.....	57
9.4	Վերաբնակեցման Գործողությունների պլանի իրականացման կարևորագույն փուլերը.....	57
9.5	Վերաբնակեցման Գործողությունների Պլանի իրականացման ժամանակացույց	59
10.	Մշտադիտարկում.....	61
10.1	Ներածություն.....	61
10.2	Ներքին մշտադիտարկում.....	61

10.3 Արտաքին մշտադիտարկում	61
Հավելված 1	63
Հավելված 2	65
Հավելված 3	79
Հավելված 4	91
Հավելված 5	93
Հավելված 6	95
Հավելված 7	104
Հավելված 8	107
Հավելված 9	110
Հավելված 10	112
Հավելված 11	117
Հավելված 12	121

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

AP	Բեկման կետ
ԱՏ	Ազդակիր տնային տնտեսություն
ՇԿ	Շինարարության Կապալառու
ՉՈՒ	Չափագրման ուսումնասիրություն
ՎԱ	Վերաբնակեցված անձինք
ԳՕՉՊՆ	Գույքի օտարում հանրային և պետական նպատակներով
ԲՄԱԳ	Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատում
ԷՄՇՕ	Էլեկտրաէներգիայի մատակարարման հուսալիության ծրագիր
ՀՀկ	Հայաստանի Հանրապետության կառավարություն
ԲԿՄ	Բողոքների կարգավորման մեխանիզմ
ՏՏԳ	Տնային տնտեսության գլխավոր
ԲԷՑ	Բարձրավոլտ Էլեկտրական Ցանցեր ՓԲԸ
ԻԱԽ	Իրականացմանն աջակցող խորհրդատու
Գամ Արակ	Գամ Արակ արդյունաբերական ընկերություն
ՏԻ	Տեղական իշխանություններ
ՏԻՄ	Տեղական Ինքնակառավարման մարմիններ
ԱՍՉՑ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ԷԵԲՊՆ	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն
ՀԿ	Հասարակական Կազմակերպություն
ԳԶ	Գործառնական ձեռնարկ
ՕԳ	Օդային գիծ
ԱԵԱ	Ազդեցության ենթարկված անձինք
ՀՔ	Հանրային Քննարկում
ՀՔՀՊ	Հանրային Քննարկման և Հրապարակման Պլան
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՎԳՊ	Վերաբնակեցման գործողության պլան
ՀՎԳՊ	Հակիրճ վերաբնակեցման գործողության պլան
ԱԳ	Անվտանգության Գոտի
ՎՔՇ	Վերաբնակեցման Քաղաքակառուցության Շրջանակ
ԱԳԿՊԿ	Անշարժ Գույքի Կադաստրի Պետական Կոմիտե
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ԵԿ	Ենթակայան
ՏԱ	Տեխնիկական Առաջադրանք
ՀԲ	Համաշխարհային Բանկ

Սահմանումներ

Վերաբնակեցում՝ Բանկի տերմինաբանությամբ նշանակում է հողի զբաղեցումից կամ հողօգտագործման սահմանափակումից առաջացող բոլոր տնտեսական և սոցիալական վնասները, ինչպես նաև դրանից բխող փոխհատուցման և մեղմացման միջոցառումները: Վերաբնակեցումը չի սահմանափակվում իր սովորական նշանակությամբ՝ փաստացի վերաբնակեցում:

Կախված դեպքից, վերաբնակեցումը կարող է ներառել՝ (ա) հողի կամ հողի վրա գտնվող կառույցների ժամանակավոր կամ մշտական ձեռքբերում, ներառյալ ձեռնարկատիրական գործունեության հետ կապված կառույցները, (բ) փաստացի վերաբնակեցում և (գ) տեղահանման տնտեսական հետևանքների հասցեագրում տեղահանված անձանց (SU) եկամուտների և կենսամակարդակի բարելավման համար (կամ առնվազն նախկին մակարդակի վերականգնում):

Ազդեցության ենթարկված անձինք (ԱԵԱ) այն անձինք են, ովքեր տուժում են ծրագրի ուղղակի տնտեսական և սոցիալական ազդեցությունից, որը կարող է արտահայտվել հետևյալ կերպ.

- Ակտիվների կորուստ կամ վնաս,
- Պետական կարիքների համար հողի օտարում,
- Պարտադրված տեղահանում,
- Բացասական ազդեցություն ձեռքբերված կամ սեփականություն հանդիսացող (ժամանակավոր կամ մշտական) ցանկացած բնակելի շինության, հողի (ներառյալ հողի վրա գտնվող շինությունները, գյուղատնտեսական նշանակության հողերը և արտավայրերը) կամ ցանկացած այլ հիմնական միջոցի նկատմամբ իրավունքների, սեփականության իրավունքի կամ այլ տնտեսական շահերի վրա:
- Բացասական ազդեցություն արտադրական նշանակության ակտիվների հասանելիության վրա (ժամանակավոր կամ մշտական):
- Բացասական ազդեցություն ձեռնարկատիրական գործունեության, զբաղվածության, աշխատանքի կամ բնակության վայրի վրա:

Վերաբնակեցման քաղաքականության շրջանակը (ՎԳՇ)՝ վերաբնակեցումը կարգավորող փաստաթուղթ է, որը պատրաստվում է, երբ ծրագրի գնահատման փուլում վերաբնակեցման ծավալներն ու աշխարհագրական տեղանքները հստակ հայտնի չեն, քանի որ ծրագիրն ունի բազմաթիվ բաղադրիչներ կամ ծրագրի վերջնական նախագծի մշակումը (ինչպես որ այս դեպքում) ավարտվելու է ավելի ուշ (շինարարության փուլի աշխատանքային նախագծեր): Քաղաքականության շրջանակը սահմանում է ծրագրի իրագործման ընթացքում հնարավոր վերաբնակեցման գործողության նպատակներն ու սկզբունքները, կազմակերպական լուծումները և ֆինանսավորման մեխանիզմները: Շրջանակը նաև գնահատում է ազդակիր անձանց և վերաբնակեցումների հավանական թիվը, հատկապես ֆինանսական միջնորդություն ենթադրող ծրագրերում, և գնահատում հնարավոր վերաբնակեցման նախապատրաստման, իրականացման և վերահսկողության ինստիտուցիոնալ կարողությունները: Երբ ծրագրի իրականացման ընթացքում վերաբնակեցման չափերը հստակեցվում են, ապա մինչ ծրագրի ֆինանսավորման հաստատումը ՎԳՊ (կամ հակիրճ ՎԳՊ (ՀՎԳՊ))՝ կախված ազդեցությունների աստիճանից և խստությունից) է պատրաստվում (ԳՁ 4.12 Հարկադիր վերաբնակեցում, պարբ. 29–30):

Վերաբնակեցման գործողությունների պլանը (ՎԳՊ)՝ վերաբնակեցման փաստաթուղթ է, որը պատրաստվում է երբ հստակեցվում է ծրագրի աշխարհագրական դիրքը, այն է՝ հայտնի են էլեկտրահաղորդման գծի մանրամասն ծրագիրը և հենասյուների հստակ դիրքերը: Եթե էլեկտրահաղորդման գծի վերջնական ծրագիրը չի բավարարում օրենքով սահմանված անվտանգության գոտու նվազագույն պահանջները, ապա հողի ձեռքբերումը հանգեցնում է մարդկանց ֆիզիկական տեղահանման և/կամ ապաստանի կորստի, և/կամ եկամտի աղբյուրի կորստի, և/կամ տնտեսական ռեսուրսների անհասանելիության կամ հասանելիության սահմանափակման: ՎԳՊ-ն պատրաստում է մարդկանց կամ նրանց եկամուտների վրա ազդեցության սկզբնապատճառ հանդիսացող կողմը: ՎԳՊ-ն պարունակում է մանրամասն և իրավական տեսանկյունից պարտավորություն ունեցող պահանջներ, որին համաձայն պետք

է կատարվի մարդկանց վերաբնակեցումը և փոխհատուցումը մինչ բացասական հետևանքներ ունեցող միջոցառումների իրականացումը: ՎԳՊ-ն պարունակում է ծրագրի ազդեցությունը կրողների մարդահամարի արդյունքները, ներառյալ կադաստրային տեղեկատվությունը և կորուստների մանրամասն ցուցակը:

Փոխհատուցում¹՝ վճարում հողի օտարման կամ այլ ակտիվների, ներառյալ հիմնական միջոցների, մասնակի կամ ամբողջական կորստի դիմաց, որը կատարվում է բնափրային, դրամական կամ այլ ակտիվներով փոխհատուցման եղանակով:

Հողի ձեռքբերում¹՝ հողի, շինությունների կամ դրա վրա գտնվող այլ գույքի նկատմամբ ծրագրի իրականացման նպատակով իրավունքների ձեռքբերում կամ օտարում:

Գյուղատնտեսական նշանակության հողակտորների փոխհատուցման արժեք¹՝ հավասար արտադրողական կամ օգտագործման ներուժով և ծրագրից տուժած հողակտորի մոտակայքում գտնվող այլ հողակտորի մինչև ծրագրի սկիզբը կամ տեղահանումը ունեցած արժեքն է՝ գումարած հետևյալ ծախսերը՝ հողակտորի նախապատրաստման, որպեսզի այն ունենա նույն հատկանիշները, ինչ որ ծրագրի ազդեցությանը ենթարկված հողակտորը, պետական գրանցման տուրքերն ու վճարները, փոխանցման հետ կապված հարկերը և այլ հողակտորի տրամադրման հետ կապված վճարներն ու տուրքերը:

Տների կամ այլ շինությունների փոխհատուցման արժեք¹՝ ծրագրից տուժած շինությունների որակին հավասար կամ ավելի լավ որակի և նույն տարածքում գտնվող կառույցների շուկայական արժեքը: Այդ արժեքը պետք է ներառի.

- ա) շինարարական նյութերը,
- բ) շինհրապարակ շինանյութերի տեղափոխման ծախսերը,
- գ) վարձու աշխատողների և կապալառուների վարձատրությունը,
- դ) գրանցման բոլոր ծախսերը:

Վերջնաժամկետը՝ որոշվում է ՀՀ օրենսդրության համապատասխան և ազդակիր գույքի/ակտիվի նկարագրության արձանագրության¹՝ որտեղ արտացոլվում են իրականացված գույքագրման և մարդահամարի տվյալները, կազմման օրն է (ԱԵԱ-ի և ձեռքբերողի կողմից արձանագրության ստորագրման օրը): Դա այն ամսաթիվն է, որից հետո ծրագրի համար անհրաժեշտ հողամասի կամ շինության ցանկացած բարելավում, ցանկացած նոր իրավունք (ցանկացած հողի հանդեպ վարձակալական, օգտագործման, ուզուֆրուկտի կամ այլ գույքային իրավունքի (բացառությամբ սեփականության իրավունքի) կամ համայնքային հողի հանդեպ սեփականության իրավունքի ձեռք բերում) ենթակա չէ փոխհատուցման: Քանի որ ՀՀ օրենսդրությունը չի սահմանում փոխհատուցում ապօրինի հողօգտագործման համար, վերջինիս կողմից սահմանված վերջնաժամկետն այդ դեպքի համար կիրառելի չէ: Այդ պատճառով ապօրինի հողօգտագործման համար վերջնաժամկետը ծրագրի սահմաններում ԱԵԱ-երի մարդահամարի և ակտիվների գույքագրման աշխատանքների մեկնարկի ամսաթիվն է:

Խոցելի տնային տնտեսություններ¹՝ տնային տնտեսություններ, որոնք չեն կարող համակերպվել ճգնաժամային կամ շոկային իրավիճակներին և ապահովել իրենց բարօրությունը և կենսամակարդակը: Գործնականում այդ մարդկանց թվին սովորաբար դասվում են.

- Այրի կանայք, հաշմանդամները, ցածր եկամտով տնային տնտեսությունները և ստվերային ոլորտում գործունեություն իրականացնողները:
- Եկամուտ վաստակողից զուրկ տնային տնտեսությունները:
- Երեխաների գլխավորած տնային տնտեսությունները և անօթևան երեխաները:

¹ ՀՀ օրենսդրությամբ սահմանված վերջնաժամկետն ավելի շահավետ է ԱԵԱ-ի համար, քանի որ այն արտացոլում է փաստացի իրավիճակն այն պահին, երբ ուսումնասիրություն և գույքագրում իրականացնող թիմը հասնում է կոնկրետ սեփականությանը/հողին:

Այս տնային տնտեսությունները սովորաբար տառապում են թերսնուցումից, ունեն ցածր կրթական մակարդակ կամ ընդհանրապես կրթություն չունեն, գործազուրկ են և չունեն եկամտի աղբյուր, ծեր են, հանդիսանում են էթնիկ փոքրամասնություն և առկա է գենդերային անհավասարություն:

Ծրագրի շրջանակներում խոցելի տնային տնտեսություն են համարվում`

- Աղքատ տնային տնտեսությունները, որոնք գրանցված են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (ԱՍՀՆ) «Ընտանեկան նպաստ համակարգում» և ստանում են համապատասխան դրամական նպաստ` սահմանված ՀՀ օրենսդրությամբ:
- Միայնակ, այրի կամ ընտանիքի կերակրողին կորցրած կանանցից բաղկացած տնտեսությունները, որտեղ բացի թոշակառուից, ՀՀ զինված ուժերում ծառայողից, 1-ին և 2-րդ կարգի հաշմանդամից կամ մինչև 23 տարեկան առկա համակարգում սովորող ուսանողից բացի ուրիշ աշխատունակ տարիքի անձ չկա:
- Թոշակառուներից բաղկացած տնտեսությունները, որտեղ թոշակառուից, ՀՀ զինված ուժերում ծառայողից, 1-ին և 2-րդ կարգի հաշմանդամից կամ մինչև 23 տարեկան առկա համակարգում սովորող ուսանողից բացի ուրիշ աշխատունակ տարիքի անձ չկա:

Անվտանգության գոտի` ՕԳ երկայնքով տարածք, որը երկու կողմից սահմանափակվում է գծի երկու կողմից 20 մետր հեռավորությունների վրա ուղղաձիգ հարթություններով:

Ամփոփ նկարագիր

Համաշխարհային Բանկի կողմից (ՀԲ) ֆինանսավորվող 110 կՎ Լավար և Նոյեմբերյան օդային էլեկտրահաղորդման գծերի փոխարինման ծրագիրը (Ծրագիր) իրականացվում է «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի (ԲԷՑ) կողմից, Հայաստանի Հանրապետության կառավարության (ՀՀԿ) ենթավարկով: Ծրագիրը ներառում է մոտավորապես 25 կմ երկարությամբ օդային գծերի (ՕԳ) փոխարինում՝ ա) Նոյեմբերյան 110 կՎ ՕԳ Ալավերդի-2 220/110կՎ ենթակայանից (Հյուսիսում) Նոյեմբերյան 110/6 կՎ ենթակայան (Հյուսիս-արևելքում), և բ) Լավար 110 կՎ ՕԳ նույն Ալավերդի-2 ենթակայանից Նոյեմբերյան ենթակայան և եռաբաշխիչով դեպի Սաղախլո ենթակայան Վրաստանում (Հյուսիս-արևելքում):

Ծրագիրը նախատեսում է նոր հենասյունների մոնտաժում, ներառյալ հիմքերը, ինչպես նաև էլեկտրահաղորդման լարերի, մեկուսիչների և այլ առանցքային ենթակառուցվածքների փոխարինում: Գործող գիծը հին է (մոտ 50 տարվա) և կիսախարխուլ, ինչը հաստատվել է նաև մետաղի փորձարկման արդյունքներով: Փոխարինման արդյունքում ներկայիս 150 մ² լայնակի կտրվածքի մակերեսով էլեկտրահաղորդիչ լարերը կփոխարինվեն նոր 185 մ² տրամագծով էլեկտրահաղորդիչ լարերով գծի թողունակությունը և հուսալիությունը բարելավելու համար:

Նոր գիծը մեծամասամբ գուգահեռ է լինելու հնին (մոտ 50 մետր հեռավորության վրա): Այն հիմնականում անցնելու է նույն միջանցքով: Այնուամենայնիվ, ներկայիս գիծն անցնում է հինգ գյուղական և մեկ քաղաքային համայնքներով, որտեղ միջանցքը առանց հողերի ձեռքբերման հնարավոր չի լինի 50 մետրով տեղաշարժել: Այդ իսկ պատճառով, բնակավայրերից և բնակիչների պարտադրված վերաբնակեցումից խուսափելու համար ընտրվել են շրջանցման ուղիներ: Շեղումները նախագծվել են ոչ միայն բնակավայրերը, այլ նաև մշակութային նշանակության հատվածները և բարդ տեղանքները շրջանցելու համար:

Ծրագրով չի պահանջվում հողերի էական ձեռքբերում և չի ներառելու ԱԵԱ-երի ֆիզիկական վերաբնակեցում: Այդ իսկ պատճառով կազմվել է հակիրճ վերաբնակեցման գործողությունների պլան (ՀՎԳՊ), ըստ ԳՁ 4.12 Հարկադիր վերաբնակեցում, Հավելված Ա, պարբ. 2-ի:

Բարդ տեղանքի պատճառով ՀՎԳՊ Մաս 2-ում ընդգրկված (Հաղպատ և Նեղոց համայնքներ) հենարանների տեղակայման վայրերը ավելի ուշ են հաստատվել, քան ՀՎԳՊ Մաս 1-ի տեղակայման վայրերը: ՀՎԳՊ-ի կազմման և իրականացման գործընթացն ամբողջ Ծրագրի համար արագացնելու նպատակով Ծրագիրը բաժանվել է հետևյալ երկու հատվածների, որոնց համար կազմվել են հետևյալ երկու ՀՎԳՊ-երը՝


1. Մաս 1՝ AP1-AP5, AP27-AP41, երկշղթա 14.5 կմ (Ալավերդի, Մեծ Այրում, Ճոճկան, Այրում)
2. Մաս 2՝ AP6-AP26, երկշղթա 10.5 կմ (Հաղպատ, Նեղոց):

Սույն ՀՎԳՊ-ում ներկայացվում են Մաս 1 (AP1-AP5, AP27-AP41, երկշղթա 14.5 կմ) վերաբնակեցման խնդիրները: Վերջինս հիմնված է ուղեգիծ (Rev.2)-ի վրա, որը ուղարկվել է Կապալառուի կողմից 2017 թվականի հունվարի 25-ին և հաստատվել է ԲԷՑ-ի կողմից 2017 թվականի հունվարի 31-ին:

Նկար 1՝ Մաս 1-ի տեղակայման վայրը



Մաս 1՝ AP1-AP5



Մաս 1՝ AP27 - AP41

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԱՍՓՈՓՈՒՄ

ԱԵԱ-երի ազդեցության ուսումնասիրության, մարդահամարի և գույքագրման արդյունքում պաշվել է, որ Ծրագրի համար ձեռք է բերվելու ընդհանուր առմամբ 6 890 քմ մակերեսով 63 հողակտոր՝ Լոռու մարզի 3 համայնքում և Տավուշի մարզի 1 համայնքում: 3 447 քմ մակերեսով 31 հողակտոր մասնավոր է (որը կազմում է ընդհանուր ձեռք բերվող հողերի 49%), 2 043 քմ մակերեսով 19 հողակտոր համայնքային է (որը կազմում է ընդհանուր ձեռք բերվող հողերի 30%), 1 400 քմ մակերեսով 13 հողակտոր չգրանցված հողեր են (որը կազմում է ընդհանուր ձեռք բերվող հողերի 21%):

Բոլոր 31 մասնավոր հողերը գյուղատնտեսական նշանակության են, որից 9-ը օգտագործվում են սեփականատերերի կողմից մշակաբույսեր աճեցնելու համար: 22 հողամաս ծածկված է խոտող և ծառայում են որպես արոտավայր անասունների համար: 19 համայնքային հողամասից 3-ը ֆորմալ վարձակալված են և 5-ը օգտագործվում են ապօրինի (առանց ֆորմալ իրավունքի): Վարձակալված 3 հողամասից 2-ը օգտագործվում են (մշակվում են) իսկ մեկը ոչ: Մնացած 11 համայնքային հողամասերը չեն օգտագործվում որևէ ԱԵԱ-ի կողմից: Վերջիններս ծածկված են խոտող և ծառայում են որպես արոտավայր համայնքային անասունների համար: Չգրանցված 13 հողամասից 3-ը օգտագործվում են մշակաբույսեր աճեցնելու համար: Մնացած 10 հողերը ծածկված են խոտող և ծառայում են որպես արոտավայր անասունների համար:

Սույն ՀՎԳՊ-ում կա 3 տեսակի մշակաբույս, որոնք հայտնաբերվել են 16 ազդակիր հողերի (27 ազդակիր SS) վրա՝ 1832 քմ հողամաս: Ընդհանուր առմամբ, մշակաբույսի տարեկան կորուստը կկազմի 572,508 կգ:

Սույն ՀՎԳՊ-ում կա ազդեցության ենթարկված 11 տիպի հասուն բերքատու, հասուն ոչ բերքատու ծառեր և տնկիներ, որոնք հայտնաբերվել են 3 հողամասի վրա (3 ազդակիր SS): Ընդհանուր առմամբ, այս հատվածում կա 44 ազդակիր ծառ:

Մարդահամարն անցկացվել է 71 ազդակիր SS-ից 51² ընտանիքում, ընդհանուր առմամբ 247 ազդեցության ենթարկված անձ (ԱԵԱ), որից 11-ը խոցելի տնային տնտեսություններն են, ներառյալ ՀՀ «Ընտանեկան տպաստ համակարգում» գրանցված և անապահովության նպաստ ցտացող SS-եր կամ կանանց և տարեցների կողմից դեկավարվող SS-եր:

ԲԱՑԱՌԻՎ՝ ԳԵՐԱԿԱ ՀԱՆՐԱՅԻՆ ՇԱՀԻ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

Որոշումը ուղարկվել է ԷԵԲՊՆ 2017 թվականի օգոստոսի 2-ին: Սպասվում է, որ որոշումը կընդունվի մինչև 2017 թվականի նոյեմբերի 30-ը:

ԲՈՂՈՔՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄ

Բողոքների լուծման մեխանիզմը (ԲԼՄ) հաստատվել է յուրաքանչյուր համայնքում: Բողոքների համակարգման պատասխանատուն և ազդակիր համայնքի առաջադրված ներկայացուցիչն (տես աղյուսակ 1.1) ապահովում են ԱԵԱ-երի համար ԲԼՄ հասանելիությունը և որպեսզի ԱԵԱ-ն կարողանա բողոքարկել հողի կամ այլ գույքի փոխհատուցման արդյունքում առաջացած ցանկացած որոշում, գործունեություն կամ գործողություն: ԱԵԱ-երը տեղեկացված են իրենց բողոքները ԲԼՄ միջոցով կամ այլ հանրային իշխանություններին ուղղելու իրավունքների և ընթացակարգերի վերաբերյալ: Բացի ԲԼՄ-ի հասանելիությունից, ԱԵԱ-երը ազատ են դիմելու երկրի իրավական համակարգին ԲԼՄ գործընթացի ցանկացած փուլում:

² Հետազոտության ժամանակ 20 տնային տնտեսություն հասանել չէին, քանի որ վերջիններս մշտապես բնակվում են արտերկրում: Բացակայող տեղեկատվությունը հավաքելու համար 8 SS-երի ժողովրդագրական, կենսապահովման միջոցների և սեփականության վերաբերյալ տեղեկատվությունը ձեռք են բերվել հարազատներից, համայնքապետարանից, անշարժ գույքի պետական կադաստրից, ինչպես նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից: 20 SS-երի մեջ խոցելի SS չկա: ԱԵԱ-ների խոցելիությունը ձեռք բերումից առաջ կրկին կվերագնահատվի և եթե SS-ներից որևէ մեկը կլինի խոցելի, ապա վերջինս կստանա խոցելիության նպաստ և ՎԳՊ-ն կվերանայվի համապատասխանաբար:

Աղյուսակ 1.1՝ Ազդակիր համայնքների առաջադրված ԲԼՄ ներկայացուցիչները

N	Համայնք	Պաշտոնը	Անուն, ազգանուն	Հեռախոսահամար
1	Այրում (Հաղթանակ)	Համայնքի ղեկավար	Պարանյան Արայիկ	(+374) 98 00 30 48
2	Ալավերդի	Համայնքի ղեկավար	Փարեմուզյան Մերգեյ	(+374 253) 2-41-00
3	Ճոճկան	Համայնքի ղեկավար	Արկադի Թամազյան	(+374) 99 24 92 49
4	Մեծ Այրում	Համայնքի ղեկավար	Սահակ Նազարյան	(+374) 77 91-85-41

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

Բոլոր ազդեցության ենթակա համայնքներում ԱԵԱ-երի ներկայացուցիչների և տեղական իշխանությունների հետ գույքագրող և գնահատող ընկերության կողմից ոչ պաշտոնական քննարկումներ են կազմակերպվել չափագրման, գույքագրման և մարդահամարի իրականացումից առաջ և ընթացքում:

ԲԷՑ-ը հանրային քննարկումներ է անցկացրել ԱԵԱ-երի հետ ՀՎԳՊ պատրաստման, իրականացման և փոխհատուցումների հարցերով, ներառյալ ՀՀ կառավարության կողմից նախնական ուսումնասիրության մասին որոշման ընդունման և գույքագրման աշխատանքների մեկնարկի հարցերով: Սույն ՀՎԳՊ ներառված ԱԵԱ-երի համար հանրային քննարկումներ (ՀՔ) են անցկացվել 2017 թվականի մարտի 22-ից 23ը: Ընդհանուր առմամբ ՀՔ-երին մասնակցել է 44 մարդ (տես 3-րդ բաժնի աղյուսակ 13-ը): ՀՔ ժամանակ ԱԵԱ-երին և տեղական ինքնակառավարման մարմիններին տրամադրվել է ՀՎԳՊ տեղեկատվական գրքույկ՝ հայերեն լեզվով:

ՀԲ կողմից հաստատվելուց հետո ՀՎԳՊ հայերեն տարբերակը հասանելի կլինի յուրաքանչյուր ազդակիր համայնքում և ԲԷՑ-ի գրասենյակում: Վերջնական վերանայված ՀՎԳՊ-ի անգլերեն տարբերակը կհրապարակվի ՀԲ կայքում: Վերջնական ՀՎԳՊ հայերեն և անգլերեն տարբերակները կհրապարակվեն ԲԷՑ-ի կայքում:

ՎԳՊ ԲՅՈՒՋԵՆ

Սույն մասի ՀՎԳՊ-ի իրականացման ընդհանուր արժեքը կկազմի 11 809 993 ՀՀ դրամ (24 553 ԱՄՆ դոլար):

ՄՇՏԱՂԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ՎԳՊ իրականացումը ենթարկվում է ներքին մշտադիտարկման ԲԷՑ-ի ու Վերահսկման խորհրդատուի կողմից և մշտադիտարկման արդյունքները ներկայացվում են ՀԲ Ամսական և Եռամսյակային վերահսկման հաշվետվություններում: Արտաքին մշտադիտարկման խորհրդատու (ԱՄԽ) է վարձվելու ԲԷՑ-ի կողմից արտաքին մշտադիտարկում անցկացնելու համար: ԱՄԽ-ն կիրականացնի ՎԳՊ իրականացման մշտադիտարկում և կներառի իր մշտադիտարկման արդյունքները համապատասխանության հաշվետվության մեջ, որը պետք է ընդունելի լինի ՀԲ համար, որպես շինարարական աշխատանքները սկսելու նախապայման:

1. Ներածություն

1.1 Ծրագրի նկարագրություն


1. Համաշխարհային Բանկի կողմից (ՀԲ) ֆինանսավորվող 110 կՎ Լավար և Նոյեմբերյան օդային էլեկտրահաղորդման գծերի փոխարինման ծրագիրը (Ծրագիր) իրականացվում է «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի (ԲԷՑ) կողմից, Հայաստանի Հանրապետության կառավարության (ՀՀԿ) ենթավարկով: Ծրագիրը ներառում է մոտավորապես 25 կմ երկարությամբ օդային գծերի (ՕԳ) փոխարինում՝ ա) Նոյեմբերյան 110 կՎ ՕԳ Ալավերդի-2 220/110կՎ ենթակայանից (Հյուսիսում) Նոյեմբերյան 110/6 կՎ ենթակայան (Հյուսիս-արևելքում), և բ) Լավար 110 կՎ ՕԳ նույն Ալավերդի-2 ենթակայանից Նոյեմբերյան ենթակայան և եռաբաշխիչով դեպի Սադախլո ենթակայան Վրաստանում (Հյուսիս-արևելքում):

1.2 Ծրագրի աշխարհագրական դիրքը

2. Հայաստանի Հանրապետությունը լեռնային երկիր է 29,743 կմ² տարածքով: Հյուսիսում այն սահմանակից է Վրաստանին, արևելյան մասում Ադրբեջանին, հարավում՝ Իրանին և արևմուտքում՝ Թուրքիային: Ծրագրի տարածքը Հայաստանի հյուսիսային հատվածն է, որի մեջ մտնում են ՀՀ Լոռու և Տավուշի մարզերը:

3. Առաջարկվող մոտավորապես 25կմ երկարությամբ 110 կՎ Լավար և Նոյեմբերյան ՕԳ նախատեսվում է որպես երկշղթա գիծ նոր ուղեգծով, որը կանցնի առկա գծից 50 մետր հեռավորության վրա: Գիծը սկիզբ է առնում Ալավերդի-2 ենթակայանից (ծովի մակարդակից բարձրությունը՝ մոտ 960մ) և ավարտվում է Նոյեմբերյան ենթակայանում:

Պատկեր 1. Ծրագրի աշխարհագրական դիրքը



1.3 Ծրագրի նկարագրությունը

4. Ծրագիրը նախատեսում է նոր հենասյունների մոնտաժում, ներառյալ հիմքերը, ինչպես նաև էլեկտրահաղորդման լարերի, մեկուսիչների և այլ առանցքային ենթակառուցվածքների փոխարինում: Գործող գիծը հին է (մոտ 50 տարվա) և կիսախարխուլ, ինչը հաստատվել է նաև մետաղի փորձարկման արդյունքներով: Փոխարինման արդյունքում ներկայիս 150 մմ² լայնակի կտրվածքի մակերեսով էլեկտրահաղորդիչ լարերը կփոխարինվեն նոր 185 մմ² տրամագծով էլեկտրահաղորդիչ լարերով գծի թողունակությունը և հուսալիությունը բարելավելու համար:

5. Նոր գիծը մեծամասամբ զուգահեռ է լինելու հին (մոտ 50 մետր հեռավորության վրա): Այն հիմնականում անցնելու է նույն միջանցքով: Այնուամենայնիվ, ներկայիս գիծն անցնում է հինգ գյուղական և մեկ քաղաքային համայնքներով, որտեղ միջանցքը առանց հողերի ձեռքբերման հնարավոր չի լինի 50 մետրով տեղաշարժել: Այդ իսկ պատճառով, բնակավայրերից և բնակիչների պարտադրված վերաբնակեցումից խուսափելու համար ընտրվել են շրջանցման ուղիներ: Շեղումները նախագծվել են ոչ միայն բնակավայրերը, այլ նաև մշակութային նշանակության հատվածները և բարդ տեղանքները շրջանցելու համար:

1.4 Վերաբնակեցման Գործողության Պլանի կազմման հիմնավորում

6. Քանի որ նոր գիծը ամբողջությամբ չի գտնվելու գոյություն ունեցող գծի անվտանգության գոտու սահմաններում, հողակտրոնների և հողօգտագործման³ վրա մշտական ազդեցության դեպքում առաջանալու է հողի ձեռքբերման անհրաժեշտություն:

Փոխհատուցում կպահանջվի.

- Հետազոտական աշխատանքների ժամանակ բերքին/ծառերին հասցված վնասի դեպքում;
- Շինհրապարակի հասանելիությունն ապահովող ճանապարհների կառուցման ժամանակ բերքը/ծառերը վնասելու դեպքում;
- Հենարանների մոնտաժման նախապատրաստման և էլեկտրահաղորդման լարերի մոնտաժման ժամանակ բերքի/ծառերի վնասման դեպքում;
- Հենարանների հիմքերի կառուցման համար հողի ձեռք բերում;
- ԱԳ-ում գտնվող բնակավայրերի նշանակության հողերի ձեռք բերում

7. Ծառերին և բերքին հետազոտման, մոտեցման ճանապարհների կառուցման, հենարանների մոնտաժման նախապատրաստման և էլեկտրահաղորդման լարերի մոնտաժման ժամանակ պատճառված վնասը կգրանցվի և կվճարվի սույն ՎԳՊ-ի Հավելված 9-ում ներկայացված ընթացակարգին համապատասխան:

8. ԱԳ-ի (ՕԳ երկայնքով տարածք, որը երկու կողմից սահմանափակվում է գծի երկու կողմից 20 մետր հեռավորությունների վրա ուղղաձիգ հարթություններով) հողերը կարող են օգտագործվել գյուղատնտեսական նպատակներով: Եթե գծի անվտանգության գոտում հայտնվեն տներ և անվտանգ հեռավորության նվազագույն պահանջները չբավարարվեն, ապա կառաջանա վերաբնակեցման անհրաժեշտություն: Այնուամենայնիվ, ծրագրի մանրամասն նախագծման շնորհիվ հնարավոր է եղել գտնել լուծումներ, որոնք թույլ են տվել խուսափել ազդակիր անձանց ուղղակի տեղահանումից:

³ ԱԳ սահմաններում բնակելի շենքերի կառուցումը չի թույլատրվում:

9. Ծրագրով չի պահանջվում հողերի էական ձեռքբերում և չի ներառելու ԱԵԱ-երի ֆիզիկական վերաբնակեցում: Այդ իսկ պատճառով կազմվել է հակիրճ Վերաբնակեցման գործողությունների պլան (ՎԳՊ), ըստ ԳՁ 4.12 Հարկադիր վերաբնակեցում, Հավելված Ա, պարբ. 2:

1.5 Կրճատված Վերաբնակեցման գործողության պլանի նպատակը և շրջանակը

10. ՎԳՊ-ի հիմնական նպատակը ծրագրի ազդեցությանն ենթարկված անձանց հայտնաբերելն ու աջակցելն է, նրանց կյանքի որակը և կենսակերպը վերականգնելու և առնվազն այն մակարդակին հասցնելու համար, որը նրանք ունեցել են մինչև Ծրագիրը:

11. Մանրամասն նախագիծը մշակելուց հետո, հիմնվելով կադաստրային քարտեզների վրա որոշվել են անվտանգության գոտու մեջ ընկնող ազդակիր գույքերը և ՀՀ կառավարության կողմից ընդունել է 2017թ-ի հունվարի 26 N62-Ն նախնական ուսումնասիրության վերաբերյալ որոշումը: Վերջինիս համաձայն ուսումնասիրություն իրականացնող թիմին թույլատրվում է կատարել գույքագրում և կազմել ազդակիր գույքերի վերջնական ցանկը բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին որոշման համար: Այդ որոշմամբ նաև Ծրագիրը կճանաչվի հանրային շահ ներառող ծրագիր: Որոշումը ԷԵԲՊՆ է ուղարկվել 2017 թվականի օգոստոսի 2-ին: Սպասվում է, որ որոշումը կընդունվի մինչև 2017 թ.-ի նոյեմբերի 30-ը:

12. Նախնական ուսումնասիրության վերաբերյալ որոշումն ընդունվելուց հետո ՎԳՊ-ի կազմման համար ձեռնարկվում են հետևյալ քայլերը՝

1. ԱԵԱ , ազդակիր տնային տնտեսությունների մարդահամարի և կորուստների գույքագրման վերջնականացում,
2. Մանրամասն չափագրման, նկարագրության արձանագրությունների կազմման և ազդակիր հողերի և մշակաբույսերի գնահատման վերջնականացում,
3. ԱԵԱ հետ հանրային քննարկումների ավարտում,
4. Բոլոր տեսակի կորուստների համար փոխհատուցման մանրամասն բյուջեի կազմում:

13. Այս ՎԳՊ-ն ներկայացնում է մանրամասներ, որոնք անհրաժեշտ են փոխհատուցման, վերաբնակեցման և վերականգնման համար՝ որոշելով.

1. ԱԵԱ նկարագիրը,
2. Ենթածրագրի կորուստների և ազդեցությունների չափը,
3. Տեղեկատվության հրապարակումը, հանրային քննարկումները և մասնակցությունը,
4. Փոխհատուցումների վճարման և վերականգնման քաղաքականությունը և շրջանակը,
5. Բողոքների կարգավորման մեխանիզմը,
6. Վերաբնակեցման բյուջեն և ֆինանսավորման պլանը, ներառյալ գնահատումը և փոխհատուցումը կորցրած ակտիվների և վերականգնման համար,
7. Վերաբնակեցման պլանի իրականացման ժամանակացույցը և ինստիտուցիոնալ շրջանակը, և
8. ՎԳՊ-ի իրականացման մշտադիտարկումը:

1.6 Ծրագրի վերջնաժամկետը

14. Ծրագրի վերջնաժամկետը ազդակիր գույքի/ակտիվի նկարագրության արձանագրության կազմման օրն է (ԱԵԱ-ի և ձեռքբերողի կողմից արձանագրության ստորագրման օրը) և ապօրինի օգտագործման համար՝ 2017թ-ի մարտի 22-ը, որն այն օրն է, երբ սկսվել է մարդահամարը և գույքագրումը: Բոլոր մարդիկ, կազմակերպությունները, որոնք վերջնաժամկետից հետո տեղափոխվում են Ծրագրի տարածք և/կամ մարդիկ, որոնք իրականացնում են շինարարական աշխատանքներ, տնկում են ծառեր, իրականացնում են այլ բարելավումներ և այլն, համարվում ենք իրավունք չունեցող ԱԵԱ, և այսպիսով չեն ստանում ոչ մի փոխհատուցում: Վերջնաժամկետի վերաբերյալ հայտարարությունը փակցվում է տեղական ինքնակառավարման մարմնի (ՏԻՄ) գրասենյակներում (տես Հավելված 11-ը) յուրաքանչյուր բնակավայրում հանրային քննարկումների սկսման ամսաթվին: Վերջնաժամկետի որոշման վերաբերյալ մանրամասները հրատարակվել են ԱԵԱ-երին պաշտոնական հանրային քննարկումների (ՀՔ) ժամանակ և ծանուցվել են նկարագրության արձանագրությունների հետ միասին:

1.7 Փաստաթղթի հրապարակում

15. Վերանայված ՎԳՊ-ն կհրապարակվի ԲԷՑ-ի կայքում հայերեն և անգլերեն լեզուներով, Համաշխարհային բանկի կողմից հաստատվելուց հետո: ՎԳՊ-ն կազմվել է մասնակցային եղանակով: ՎԳՊ-ի կազմման ժամանակ մի շարք հանրային լսումներ են իրականացվել ազդակիր համայնքներում (մանրամասները ներկայացված են համապատասխան գլխում): Վերջինս կհրապարակվի և կներկայացվի հանրային քննարկումների ժամանակ և կվերանայվի հաշվի առնելով ԱԵԱ-երի ու շահագրգիռ կողմերի առաջարկությունները և դիտողությունները: Վերանայված ՎԳՊ-ն հասանելի կլինի ազդակիր բոլոր համայնքներում՝ տեղական ինքնակառավարման մարմինների գրասենյակներում:

2. Ազդեցության գնահատում

2.1 Նախապատմությանը

16. Սույն ՎԳՊ-ի կազմման համար ընդունված հիմնական սկզբունքներից մեկն այն է, որ փոխհատուցման բոլոր վճարումները և կենսակերպի վերականգնման աջակցությունը պետք է հիմնվի ազդակիր անձանց Ծրագրի ազդեցությունների մանրամասն ուսումնասիրման վրա: Սույն ՎԳՊ-ի համար մի շարք ուսումնասիրություններ են իրականացվել 2017թ-ի փետրվարից մինչև 2017թ-ի մարտը: Ծրագրի վերաբնակեցման ազդեցությունների չափը ճշգրիտ կերպով գնահատելու համար կատարվել են հետևյալ ուսումնասիրությունները.

1. **Մանրամասն չափագրման ուսումնասիրություն (ՄՉՈՒ)** – հողերի ազդեցության ենթարկված տարածքները չափելու, ինչպես նաև վնասված գույքի քանակն ու տեսակը որոշելու համար:
2. **Կորուստների գույքագրում** – հողերի և ձեռքբերման ենթակա ակտիվների բնութագրերը որոշելու և գնահատելու համար:
3. **Վնասված գույքի փոխհատուցման արժեքի գնահատումը** – ՎԳՊ-ի բյուջեն կազմելու նպատակով կորցրած գույքի փոխհատուցման, եկամտի, կենսամակարդակի այլ աղբյուրների և նպաստների որոշման համար:
4. **Մարդահամարի անցկացում** – ազդակիր տնային տնտեսությունների և նրանց աղաների ճշգրիտ քանակը որոշելու համար՝ ներառելով որոշ տարրական սոցիալական բնութագրեր՝ սեռը, էթնիկ պատկանելիությունը, կրթությունը, կենսամակարդակի աղբյուրները:

2.2 Ուսումնասիրության մեթոդաբանությունը

17. Գամ Արակ ընկերությունը վարձել է լիցենզավորված քարտեզագրող և չափագրող ընկերություն, ինչպես նաև լիցենզավորված գնահատող ընկերություն, որպես ենթակապալառուներ՝ որոշելու, չափագրելու և գնահատելու ցանկացած գույք, որը պետք է ձեռք բերվի: ՄՉՈՒ և գույքագրման ծավալի մեջ մտնում է հետևյալ գույքերի կամ ակտիվների որոշումը, դասակարգումը, չափագրումը և գնահատումը, որոնք են՝ հողը (գյուղատնտեսական, բնակավայրերի, արդյունաբերական և առևտրային նպատակներով կիրառվող տարածքներ), ներառյալ վերջինիս վրա բարելավումները, շենքերը/շինությունները (բնակելի և բիզնես կառույցները, ներառյալ շենքերի կատեգորիան և շինությունների տեսակները), ԱԵԱ հողի տիրապետման իրավական կարգավիճակը, մշակաբույսերի տարածքը և տեսակը, ծառերի քանակը և տեսակը, բիզնեսի վրա ազդեցությունը (ազդեցության տեսակը և իրավական կարգավիճակը), զբաղվածության կորուստները, համայնքային/հանրային գույքերի քանակը, տեսակը և տարածքը:

18. Չափագրումը իրականացվել է, համաձայն ՀՀ Կառավարությանն առընթեր Անշարժ Գույքի Կադաստրի Պետական Կոմիտեի (ԱԳԿՊԿ) Նախագահի 2011թ-ի հոկտեմբերի 20-ի No 283-Ն Որոշման Հավելված 1-ի պահանջների (անշարժ գույքի չափագրման (գրանցման) հրահանգ): Ազդակիր անձինք տեղանք այցելելուց մեկ օր առաջ հեռախոսով տեղեկացվում են ուսումնասիրության ամսաթվի և ժամանակի մասին: Այս գործընթացը երաշխավորում է, որ գույքագրման ընթացքը վերահսկվում է ԱԵԱ կողմից:

19. Որպես գույքագրման ուսումնասիրության արդյունք, **52** նկարագրության արձանագրություններ է պատրաստվել: Արձանագրության ստորագրման գործընթացը նախատեսված է ՀՀ օրենքով՝ երաշխավորելու, որ բոլոր ազդեցությունները պաշտոնապես ներկայացվել են արձանագրությունում, այնուհետև ստուգվել և հաստատվել են ԱԵԱ կողմից:

20. Ազդակիր տնային տնտեսությունների մարդահամարը իրականացվել է փորձառու հարցազրուցավարների կողմից: Բոլոր ազդակիր անձինք հարցվել են հարցաթերթերի դեմ առ դեմ հարցազրույցի միջոցով կամ հեռախոսով⁴ (հարցաթերթը կցվում է՝ Հավելված 1): Յուրաքանչյուր հարցաթերթ լրացնելու համար պահանջվել է 15-20 րոպե: Հավաքված տվյալները մշակվել են՝ օգտագործելով SPSS 22 վիճակագրական փաթեթը: 71 ազդակիր տնային տնտեսություններից ուսումնասիրվել են 51-ը: Ազդեցության ենթարկված 20 տնային տնտեսություններ չեն մասնակցել հետազոտությանը, քանի որ ազդակիր ընտանիքները մշտապես բնակվում են արտերկրում⁵:

2.3 Ազդեցությունը հողի վրա

2.3.1 Հողերի դասակարգումը, ըստ ՀՀ օրենքի

21. ՀՀ հողային օրենսգիրքը (մայիս 2001) դասակարգում է հողը հետևյալ ինը կատեգորիաների՝ (1) գյուղատնտեսական, (2) բնակավայրերի, (3) արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, (4) եներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների, (5) հատուկ պահպանվող տարածքների, (6) հատուկ նշանակության, (7) անտառային, (8) ջրային և (9) պահուստային հողերի: Նպատակային կարևորության յուրաքանչյուր հողատարածք, հիմնվելով իր օգտագործման տիպի վրա, դասակարգվում է ըստ գործառնական նշանակության:

22. Ազդեցության ենթարկված հողերը խմբավորվում են հետևյալ երեք տիպերի՝ ըստ սեփականության իրավունքի սուբյեկտի.

- **Մասնավոր հողեր**՝ այն հողատարածքներն են, որոնք պատկանում են ֆիզիկական անձի կամ ընկերության, և այս իրավունքը գրանցված է անշարժ գույքի կադաստրում:
- **Համայնքային հողեր**՝ այն հողատարածքներն են, որոնք պատկանում են համայնքին և վերջիններս տնօրինվում են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից: Համայնքային հողերը կարող են լինել չօգտագործվող, օգտագործվող ընդհանուր նպատակներով, օրինակ՝ որպես արոտավայր համայնքի անդամների կողմից, վարձով տրված անհատին/ընկերությանը, անօրինական (չգրանցված) օգտագործվող տնային տնտեսության/ընկերության կողմից:
- **Պետական հողեր**՝ հողատարածքներ են, որոնք պատկանում են ՀՀ-ին: Պետական հողերը կարող են լինել չօգտագործվող, օգտագործվող հիմնական ճանապարհների, պետական օբյեկտների, զինվորական նպատակների համար և այլն: Որոշ պետական հողեր կարող են տրվել վարձով կամ անօրինական (չգրանցված) ձևով օգտագործվել տնային տնտեսության/ընկերության կողմից:

2.3.2 Հողի կորուստ

23. Ընդհանուր առմամբ կան 63 հողատարածքներ 6890,3մ² մակերեսով: Ստորև ներկայացված աղյուսակներ 1-ում և 2-ում նշված են հողի ազդեցության մանրամասները յուրաքանչյուր ազդակիր համայնքների համար:

⁴ Որոշ ԱԵԱ-երի հարցաթերթիկը լրացվել է հեռախոսով, քանի որ հարցման պահին վերջիններս համայնքում չէին:

⁵ Սեփականատերերը տեղեկացվել են բարեկամների կամ հարևանների միջոցով, երբ հնարավոր է եղել: Ավելին, լիազորագրերի հայերեն և ռուսերեն օրինակները ուղարկվել են Հայաստանում գտնվող համասեփականատերերին և տեղական ինքնակառավարման մարմիններին, ԱԵԱ-երին օգնելու նպատակով: Եթե սեփականատերերին այդպես էլ հնարավոր չլինի գտնել իրականացման ընթացքում կամ եթե նրանք լիազորագիր չուղարկեն լիազորված անձանց, գույքը կօտարվի դատարանի միջոցով և ԲԷՑ-ը կպահի փոխհատուցման միջոցները ավանդային հաշվի վրա:

24. Ազդակիր հողատրածքները դասակարգվում են հետևյալ երեք խմբերի՝ ըստ սեփականության իրավունքի սուբյեկտի.

- **Մասնավոր հողատրածքներ՝** ընդհանուր առմամբ 31 հողատրածքներ պատկանում են անձանց, ովքեր ունեն սեփականության իրավունք ազդակիր հողատրածքների վերաբերյալ: Բոլոր մասնավոր հողերը գյուղատնտեսական նպատակային նշանակության են, որից 9 սեփականատերերի կողմից օգտագործվում են մշակաբույսերի աճեցման համար: 22 հողամաս ծածկված է խոտով և ծառայում է որպես արոտավայր անասունների համար:
- **Համայնքային հողատրածքներ՝** հետագոտման միջոցով հայտնաբերվել են 19 համայնքային հողեր: 19 հողից 3-ը վարձակալված են և 5-ը օգտագործվում են ապօրինի (առանց գրանցած իրավունքի): Վարձակալված 3 հողամասից 2-ը օգտագործվում են (մշակվում են), իսկ մեկը չի օգտագործվում: Ապօրինի օգտագործվող 5 հողամասերը մշակված էին ուսումնասիրության պահին: Մնացած 11 համայնքային հողերը չեն օգտագործվում որևէ ԱԵԱ-ի կողմից: Այդ հողերը ծածկված են խոտով և ծառայում են որպես արոտավայր համայնքային անասունների համար:
- **Առանց գրանցման հողատրածքներ՝** սույն ՎԳՊ-ի 13 ազդակիր հողատրածք չունի պետական գրանցում: 13 հողամասից 3 օգտագործվում են մշակաբույսերի աճեցման համար: Մնացած 10 հողերը ծածկված են խոտով և ծառայում են որպես արոտավայր համայնքային անասունների համար: 13 հողերի փաստացի սեփականատերերն արդեն հայտնաբերվել են և հողի նկատմամբ նրանց իրավունքները կգրանցվեն պետական կադաստրում ՎԳՊ-ի իրականացման ընթացքում: Այս առաջադրանքն ընդգրկված է Կապալառուի աշխատանքների շրջանակի մեջ և վերջինիս իրականացումն արդեն սկսվել է: ԱԵԱ-երը կփոխհատուցվեն որպես օրինական սեփականատերեր օրինականացման գործընթացն ավարտելուն հետո: Օրինականացման գործընթացի համար բոլոր ծախսերը կփոխհատուցվեն ծրագրի կողմից: Փոխհատուցումը կկատարվի միայն այն դեպքում, երբ ԱԵԱ-երն կօրինականացնեն գույքի նկատմամբ իրենց իրավունքը: Եթե հողը օրինականացված չէ, բայց օգտագործվում է ապօրինի, տվյալ ԱԵԱ-երին կցուցաբերվի օժանդակություն (մանրամասների համար տես՝ Գլուխ 7 Իրավասության և իրավունքների շրջանակ):

Աղյուսակ 1՝ Ազդեցության ենթարկված հողերը, ըստ համայնքների

n/n	Համայնք	Մասնավոր հող		Համայնքային հող		Պետական գրանցում չունեցող		Ընդամենը	
		Հող (N)	Տարածք (M2)	Հող (N)	Տարածք (M2)	Հող (N)	Տարածք (M2)	Հող (N)	Տարածք (M2)
Տավուշ									
1	Այրում (Հաղթանակ)	1	143	3	298	0	0	4	441
Լոռի									
2	Ալավերդի	4	439	2	112	4	423	10	974
3	Ճոճկան	19	2,062	9	1,031	3	319	31	3,412
4	Մեծ Այրում	7	803	5	602	6	658	18	2,063
	Ընդամենը	31	3,447	19	2,043	13	1,400	63	6,890

Աղյուսակ 2՝ Ազդեցության ենթարկված հողերը, ըստ հողի կատեգորիայի և հողի սեփականության/օգտագործման կարգավիճակի

Հողի կատեգորիա		Agricultural										Ընդամենը	
		վարելահող		այգի		արոտ		այլ		խոտհարք			
		Հող (N)	Տարածք (M2)	Հող (N)	Տարածք (M2)	Հող (N)	Տարածք (M2)	Հող (N)	Տարածք (M2)	Հող (N)	Տարածք (M2)	Հող (N)	Տարածք (M2)
Մասնավոր	չօգտ*	19	2 088	3	316							22	2 404
	օգտ**	7	794	2	250							9	1 044
Առանց պետ. գրանցման	չօգտ	8	803	1	94					1	142	10	1 039
	օգտ	2	266	1	94							3	360
Համայնքային	չօգտ (1-վարձ. է)	8	1 060			2	223	2	57			12	1 340
	օգտ(2-վարձ և 5-ապօր. օգտ)	4	454	1	94			2	155			7	703
Total		48	5 464	8	848	2	223	4	213	1	142	63	6 890

* Հողերը չեն օգտագործվում, ծածկված են խոտով և ծառայում են որպես արոտավայր համայնքային անասունների համար

** Հողերը մշակվում են

2.4 Ազդեցությունը մշակաբույսերի վրա

25. Սույն ՎԳՊ-ում կա **3** տեսակի մշակաբույս, որոնք հայտնաբերվել են **16** ազդակիր հողերի (27 ազդակիր SS) վրա՝ **1832** ք.մ. հողամաս: Ընդհանուր առմամբ, մշակաբույսի տարեկան կորուստը կկազմի **572,508** կգ (Աղյուսակ 3):

Աղյուսակ 3. Ազդեցության ենթարկված մշակաբույսեր

n	Մշակաբույսի տեսակը	Հողակտորների քանակը	Տարեկան արտադրողականությունը կգ/մ2	Ազդեցության ենթարկված մակերես (մ2)	Ընդհանուր կորուստը (կգ)
1	Wheat (ցորեն)	13	0.30	1471.8	441.54
2	Barley (զարի)	2	0.28	266.1	74.508
3	Corn (եգիպտացորեն)	1	0.60	94.1	56.46
	Ընդամենը/Total	16	-	1832	572,508

2.5 Ազդեցությունը ծառերի վրա

26. Սույն ՎԳՊ-ում կա ազդեցության ենթարկված **11** տիպի հասուն բերքատու, հասուն ոչ-բերքատու ծառեր և տնկիներ, որոնք հայտնաբերվել են 3 հողամասի վրա (3 ազդակիր SS): Ընդհանուր առմամբ, այս հատվածում կա **44** ազդակիր ծառ (Աղյուսակ 4):

Աղյուսակ 4. Ազդեցության ենթարկված ծառեր

n/n	Type of tree	Հասուն բերքատու	Հասուն ոչ բերքատու	Տնկիներ	Ընդամենը
		No	No		
1	Ficus թզենի	1			1
2	Cerasus բալենի	1			1
3	Mulberry tree թթենի	1			1
4	Rubus մոշ	20			20
5	Grape խաղող	9			9

6	Punica granatum նոնենի	1			1
7	Pear տանձենի	5	1	1	7
8	Peach դեղձենի	1			1
9	Apple tree խնձորենի		1		1
10	Cherry կեռասենի	1			1
11	Prunus սալորենի			1	1
	Total	40	2	2	44

2.6 Ազդեցության ենթարկված տնային տնտեսությունների մարդահամարը և ազդեցությունը նրանց կենսամակարդակի վրա

2.6.1 Ազդեցության ենթարկված տնային տնտեսությունների սոցիալ-տնտեսական նկարագիրը

27. Մարդահամարն անցկացվել է 71 ազգակիր SS-ից 51⁶ ընտանիքում, ընդհանուր առմամբ 247 ազդեցության ենթարկված անձ (ԱԵԱ): ԱԵԱ կանանց քանակը ավել է, քան ԱԵԱ տղամարդկանց քանակը (121 տղամարդ (49%) և 126 կին (51%)): Բոլոր ԱԵԱ ազգությամբ հայ են:

28. Հարցվածների տարիքային բաշխվածությունը ցույց է տալիս, որ ազգակիր բնակչության 76%-ը 50 տարեկան կամ ավելի երիտասարդ են: Միայն 11% է բարձր 65 տարեկանից:

Աղյուսակ 5. Տնային տնտեսությունների գլխավորների և անդամների տարիքները

Տարիք	Ազգակիր SS գլխավոր		SS անդամներ		Ընդամենը	
	No	%	No	%	No	%
0-17	0	0%	78	40%	78	32%
18-35	4	8%	58	30%	62	25%
36-50	11	22%	36	18%	47	19%
51-64	18	35%	14	7%	32	13%
65+	18	35%	10	5%	28	11%
Ընդամենը	51	100%	196	100%	247	100%

29. Սոցիալ-տնտեսական հետազոտությունը բացահայտեց SS-երում ոչ ֆորմալ, սուբյեկտիվորեն որոշվող գլխավոր անդամներին: Ավանդաբար դրանք տնային տնտեսության ամենատարեց անձինք են: Աղյուսակ 6-ը ցույց է տալիս, որ SS գլխավորների 100%-ը ունեն նվազագույնը միջնակարգ կրթամակարդակ: Գրագիտության բարձր մակարդակ է գրանցված նաև ընտանիքի անդամների մեջ (նրանցից 70%-ը ունեն նվազագույնը միջնակարգ կրթություն): Տնային տնտեսությունների գլխավորների մոտ 20%-ը և ընտանիքի այլ անդամների 8%-ը ունեն համալսարանական կրթություն:

⁶ Հետազոտության ժամանակ 20 տնային տնտեսություն հասանել չէին, քանի որ վերջիններս մշտապես բնակվում են արտերկրում: Բացակայող տեղեկատվությունը հավաքելու համար 8 SS-երի ժողովրդագրական, կենսապահովման միջոցների և սեփականության վերաբերյալ տեղեկատվությունը ձեռք են բերվել հարազատներից, համայնքապետարանից, անշարժ գույքի պետական կադաստրից, ինչպես նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից: 20 SS-երի մեջ խոցելի SS չկա: ԱԵԱ-ների խոցելիությունը ձեռք բերումից առաջ կրկին կվերագնահատվի և եթե SS-ներից որևէ մեկը կլինի խոցելի, ապա վերջինս կստանա խոցելիության նպաստ և ՎԳՊ-ն կվերանայվի համապատասխանաբար:

Աղյուսակ 6 Ազգակիր SS գլխավորների և անդամների կրթամակարդակը

	Կրթություն	SS գլխավորներ		SS անդամներ		Ընդամենը	
		No	%	No	%	No	%
1	Ոչ մի ֆորմալ կրթություն կամ տարրականից ցածր	0	0%	17	9%	17	7%
2	Տարրական կրթություն	0	0%	18	9%	18	7%
3	Միջնակարգ	4	8%	17	9%	21	9%
4	Ավագ դպրոց	15	29%	79	40%	94	38%
5	Հատուկ մասնագիտացված	22	43%	26	13%	48	19%
6	Բարձրագույն (բակալավր կամ մագիստրոս)	10	20%	15	8%	25	10%
7	Կիրառելի չէ (մինչև 6 տարեկանը)	0	0%	24	12%	24	10%
	Ընդամենը	51	100%	196	100%	247	100%

30. Այս մասում SS գլխավորների 39% աշխատում են: SS գլխավորների 6% և SS այլ անդամների 14% չեն աշխատում, այսինքն չեն աշխատում և աշխատանք են փնտրում (Աղյուսակ 7):

31. SS գլխավորների 45%-ը թռչակառու են՝ համեմատած 5% SS այլ անդամների հետ: Սա ավանդական հայկական հասարակության ցուցանիշ է, որտեղ SS ընտանիքի ամենատարիքով անդամը, սովորաբար, անկախ կրթական մակարդակից և զբաղվածության կարգավիճակից, SS գլխավոր է հանդիսանում է: Ազգակիր SS-ների զբաղվածության տվյալները ներկայացված են 7-րդ աղյուսակում:

Աղյուսակ 7. Ազգակիր SS գլխավորների և անդամների աշխատանքային/զբաղվածության կարգավիճակը

	Զբաղվածություն	SS գլխավոր		SS անդամ		Ընդհանուր SS անդամներ	
		N	%	N	%	N	%
1	Աշխատող	20	39%	53	27%	73	30%
2	Թռչակառու	23	45%	10	5%	33	13%
3	Ուսանող (ներառյալ դպրոցական աշակերտները)	0	0%	58	30%	58	23%
4	Չաշխատող և աշխատանք չփնտրող	3	6%	27	14%	30	12%
5	Չաշխատող և աշխատանք փնտրող	5	10%	25	13%	30	12%
6	Զինծառայող	0	0%	2	1%	2	1%
7	Կիրառելի չէ (մինչև 6 տարեկանը և այլ հատուկ դեպքեր)	0	0%	21	11%	21	9%
	Ընդամենը	51	100%	196	100%	247	100%

32. Ստորև ներկայացված 8.1 և 8.2 աղյուսակները ցույց են տալիս SS տարեկան եկամտի ինքնահաշվետվությունը (ըստ եկամտային խմբերի) և տարեկան եկամտի բաշխվածությունն ըստ եկամտի աղբյուրների:

Աղյուսակ 8.1. Ազգակիր SS ներկայացրած տարեկան եկամուտը

	Ազգակիր SS տարեկան եկամուտը (ՀՀ դրամ)	N	%
1	500,000 - 730,000	2	4%
2	731,001 - 1,000,000	3	6%
3	1,000,001 - 1,350,000	4	8%
4	1,350,001 - 1,700,000	10	20%
5	1,700,001 - 2,000,000	9	18%

6	2,000,001 - 3,000,000	13	25%
7	3,000,001 և ավելի	9	18%
	Ընդամենը պատասխաններ	50	98%
	Հրաժարումներ *	1	2%
	Ընդամենը	51	100%
* Մեկ SS տեղեկություն չի տրամանդրել իր տարեկան եկամուտների մասին:			

Աղյուսակ 8.2. SS կողմից ներկայացված տարեկան եկամուտը, ըստ եկամտի աղբյուրի

	Եկամտի աղբյուր	Հարցված SS (N)	% ընդամենից	Տարեկան եկամուտ (ՀՀ դրամ)	% ընդամենից
1	Գյուղատնտեսական	41	82%	21,872,000	20%
2	Անասնապահություն	25	50%	11,610,000	10%
3	Աշխատավարձ	32	64%	46,238,000	41%
4	Ինքնագրավածություն	0	0%	0	0%
5	Ձեռնարկատիրություն	0	0%	0	0%
6	Կենսաթոշակ	1	2%	56,000	0%
7	Թոշակ	25	50%	15,982,000	14%
8	Հաշմանդամության նպաստ*	3	6%	3,168,000	3%
9	Աղքատության ընտանեկան նպաստ	7	14%	2,922,000	3%
10	Այլ տիպի նպաստներ	3	6%	1,140,000	1%
11	Աշխատանք արտերկրում	8	16%	7,450,000	7%
12	Եկամտի այլ աղբյուրներ	1	2%	1,440,000	1%
	Ընդամենը պատասխաններ	50	-	111,878,000	100%
	Հրաժարումներ	1	-	-	-
	Ընդամենը	51	-	-	-

*SS-երը ներառված են խողելի SS-երի կազմում և իրավունք ունեն խոցելիության նպաստ ստանալու

33. Հարցմանը մասնակցած SS-երից **41-ը (82%)** նշել են գյուղատնտեսությունը որպես եկամտի աղբյուր: Գյուղատնտեսական գործունեությունը հանդիսանում է Մաս 1-ի ազդակիր SS-երի եկամտի հիմնական աղբյուր:

34. Այս մասում հարցմանը մասնակցած SS-երի եկամտի ամենատարածված աղբյուրը գյուղատնտեսական գործունեությունն է՝ **82%**, որից հետո աշխատավարձը՝ **64%** և անասնապահությունը՝ **50%**: Թոշակը նույնպես հանդիսանում է հիմնական եկամտի աղբյուր՝ **50%**: Վերջինիս հաջորդում է արտագնա աշխատանքը՝ **16%**, աղքատության ընտանեկան նպաստը՝ **14%**, հաշմանդամության նպաստը՝ **6%** և այլ տիպի նպաստներ՝ **6%**:

2.6.2 Ազդեցություն աղքատ և խոցելի տնային տնտեսությունների վրա

35. Ծրագիրը նախատեսում է լրացուցիչ աջակցություն խոցելի խմբերի համար, որոնք սահմանվում են որպես աղքատ, միայնակ կին կամ տարեց SS գլխավոր ունեցող տնային տնտեսություններ: Ըստ ՎՔԾ-ի, հետևյալ ազդակիր տնային տնտեսությունները համարվում են խոցելի.

- Աղքատ տնային տնտեսությունները, որոնք գրանցված են ՀՀ ԱՍՀՆ Ընտանեկան Նպաստների Համակարգում և ստանում են համապատասխան դրամական նպաստ՝ սահմանված ՀՀ օրենսդրությամբ:
- Միայնակ, այրի կամ ընտանիքի կերակրողին կորցրած կանանցից բաղկացած տնտեսությունները, որտեղ բացի թոշակառուից, ՀՀ զինված ուժերում ծառայողից, 1-ին և 2-րդ կարգի հաշմանդամից

կամ մինչև 23 տարեկան առկա համակարգում սովորող ուսանողից բացի ուրիշ աշխատունակ տարիքի անձ չկա:

- Թոշակառուներից բաղկացած տնտեսությունները, որտեղ թոշակառուից, ՀՀ զինված ուժերում ծառայողից, 1-ին և 2-րդ կարգի հաշմանդամից կամ մինչև 23 տարեկան առկա համակարգում սովորող ուսանողից բացի ուրիշ աշխատունակ տարիքի անձ չկա:

36. Այս սահմանումներին հետևելով, հարցման ժամանակ հայտնաբերվել են **11** խոցելի SS այս Մասում (Աղյուսակ 9):

Աղյուսակ 9. Ազգակիր խոցելի SS, ըստ խոցելիության կարգավիճակի

Խոցելիության կարգավիճակը	SS (N)
A. Աղքատ SS	5
B. Կանանց գլխավորությամբ SS	1
C. Տարեցների գլխավորությամբ SS	3
D. Կրկնակի խոցելիությամբ SS (աղքատ և կանանց գլխավորությամբ)	2
Ընդամենը	11

37. ՎՔՇ-ում նաև նշված է, որ եթե նախնական ուսումնասիրությունների ընթացքում ԲԷՑ-ի խորհրդատվական ընկերությունները հայտնաբերեն, որ ազգակիր SS-ն աղքատ է, բայց ներառված չէ Ընտանեկան նպաստների համակարգում, ապա ԲԷՑ-ը պետք է տեղեկացնի ՀՀ ԱՍՀՆ-ին և տվյալ տարածաշրջանի սոցիալական ծառայություններ մատուցող մարմիններին, որպեսզի այսպիսի SS-ներին ներառեն Ընտանեկան նպաստների համակարգում, համաձայն օրենքով սահմանված կարգի: Հենց որ SS-ն գրանցվի ԸՆՀ-ում իրավունք կունենա ստանալ խոցելիության նպաստ:

38. Պահանջներին հետևելու համար աղքատության վերլուծություն է իրականացվել՝ հիմնվելով SS կողմից ներկայացված եկամուտների վրա⁷ (մանրամասները ներկայացված են Աղյուսակ 10-ում): Այս մասում **25** SS (հարցված SS-երի **49%**-ը) ներկայացվել են որպես պաշտոնապես սահմանված աղքատության շեմից ցածր (հիմնվելով SS կողմից ներկայացված եկամուտի վերաբերյալ տվյալների վրա): Այդ SS-երի ցանկը ներկայացվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, որը լրացուցիչ այցելություններ կկատարվեն համայնքներ և կգնահատի արդյոք այս SS-ներից որոշն իրավասու են ստանալ աղքատության նպաստ և գրանցվել Ընտանեկան նպաստների համակարգում: Այս գործընթացն ընթացքում է և կավարտվի մինչև ՎԳՊ իրականացումը: Առաջընթացը կներակայցվի Ամսական վերահսկման հաշվետվություններում, որը կմշակվի ԻԱԽ-ի կողմից:

Աղյուսակ 10. Ազգակիր SS-ները, ըստ աղքատության կարգավիճակի՝ հիմնվելով ներկայացված տվյալների վրա

Աղքատության կարգավիճակը	USS (N)	%
<i>Աղքատության շեմից բարձր</i>		
Ոչ աղքատ USS (ամսական եկամուտը մեկ չափահաս մարդու	25	

⁷ Կիրառվել է Ազգային Վիճակագրական Ծառայության մեթոդաբանություն, ըստ որի աղքատ են համարվում այն ընտանիքները, որտեղ յուրաքանչյուր չափահաս մարդու վրա կատարված ծախսերը ցածր են վերին ընդհանուր աղքատության սահմանից, մինչդեռ ծայրահեղ աղքատ են համարվում այն ընտանիքները, որտեղ չափահաս մարդու վրա կատարված ծախսերը ցածր են պարենային աղքատության շեմից: 2012թ-ին ընդհանուր առմամբ և վերին, և ստորին, և ծայրահեղ աղքատ շեմի ընտանիքում յուրաքանչյուր չափահաս մարդու համար ամեն ամիս գնահատվում է համապատասխանաբար 37.044 ՀՀ դրամ, 30.547 ՀՀ դրամ և 21.732 ՀՀ դրամ: <http://armstat.am/file/doc/99471658.pdf>

համար > 37,044 ՀՀ դրամ)		49%
<i>Աղքատության շեմից ցածր</i>		
Աղքատ USS (ամսական եկամուտը մեկ չափահաս մարդու համար 30,547 - 37,044 ՀՀ դրամ)	5	10%
Շատ աղքատ USS (ամսական եկամուտը մեկ չափահաս մարդու համար 21,732 - 30,547 AMD)	11	22%
Ծայրահեղ աղքատ USS (ամսական եկամուտը մեկ չափահաս մարդու համար ≤ 21,732 AMD)	9	18%
Ընդհանուրը (աղքատության շեմից ցածր)	25	49%
Ընդամենը հարցման մասնակիցները	50	
Հրաժարումներ	1	
ԸՆԴԱՄԵՆԸ	51	
<i>Ծանուցում՝ Տվյալների աղբյուրը այս ՎԳՊ-ի համար իրականացված մարդահամարն է</i>		

2.6.3 Եկամտի վրա զգալի ազդեցություն կրող ազդակիր SS-ներ

39. Սույն ՎԳՊ-ում էական ազդեցություն կրող ԱԵԱ-եր չկան: 71 SS-երից որևէ մեկը չի կորցնում արտադրողական ակտիվների (ներառյալ հողի, մշակաբույսերի և ծառերի վրա ազդեցությունը) 10%-ից ավելի:

2.7 Ազդեցություն՝ ամփոփումը

40. Գծի այս հատվածը կառուցումը չի առաջացնում ազդեցություն շենքերի, շինությունների, բիզնեսների և զբաղվածության ցուցնիշների վրա: Այնուամենայնիվ, այս հատվածում ազդեցություն կա մշակաբույսերի և ծառերի վրա: Հիմնական ազդեցությունը մասնավոր և համայնքային հողերի վրա է, ինչպես նաև մշակաբույսերի, տնկիների և հասուն ծառերի (մրգատու և ոչ մրգատու): Ազդակիր SS-ների և ազդակիր անձանց տարբեր կատեգորիաների վերաբերյալ տվյալները առանց կրկնակի հաշվարկի բերված են Աղյուսակ 12-ում: Ընդհանուր առմամբ, այս հատվածում ազդեցության են ենթարկվում **71** SS, որից **11** SS-ներ խոցելի են:

Աղյուսակ 12. Ազդեցությունների ամփոփում

Ազդեցության տեսակը	Հող (N)	Մակերես (մ2)/ծառերի քանակը	USS (N)
(A) Ազդակիր հող			
(A1) Մասնավոր հող	31	3447.2	71
(A2) Համայնքային հող, որից	19	2043.7	7
Ապօրինի օգտագործում	5	490	4*
Վարձակալություն	3	369	3
(A3) Առանց գրանցման հող	13	1400.0	13
Ընդամենը (A)	63	6890	71
(B) ազդեցության ենթարկված մշակաբույսեր	16	1832	21 (ներառված են A-ում, որից 20-ը A1-ում, 4-ը A2-ում, 3-ը A3-ում)
(C) ազդեցության ենթարկված ծառեր	3	44 ծառ	3 (ներառված են A2-ում)
(D) Խոցելի SS	11	-	11 (ներառված են A-ում, որից 10-ը A1-ում, 1-ը A2-ում)
*Երկու հող օգտագործվում է նույն SS-ի կողմից			

3. Հանրային քննարկումներ և տեղեկատվության հրապարակում

3.1 Նկարագրություն

41. Համաձայն Համաշխարհային Բանկի ԳՁ 4.12 Հարկադիր վերաբնակեցում ուղեցույցի և ծրագրի ՎՔԾ-ի, ԱԵԱ պետք է լիովին խորհրդատվություն տրամադրվի և հնարավորություն տրվի մասնակցելու ՎԳՊ-ն պատրաստելու և իրականացնելու բոլոր փուլերին: Նույն սկզբունքով, մասնակցության և խորհրդատվության գործընթացը պետք է ներառի խորհրդատվություն ԱԵԱ, համայնքների, տեղական լիազոր մարմինների, ինչպես նաև ընդհանուր հանրության հետ, ներառյալ Հասարակական կազմակերպությունները (ՀԿ): ԲԷՑ-ը պետք է երաշխավորի, որ ԱԵԱ և ազդակիր համայնքները ժամանակին կստանան ամբողջ անհրաժեշտ տեղեկատվությունը և, որ կունենան հնարավորություն մասնակցելու վերաբնակեցման գործողությունների պլանավորմանը, իրականացմանը և մշտադիտարկմանը:

42. Այս գլխում նկարագրվում է ազդակիր հանրության և շահառուների խորհրդատվության/մասնակցության գործընթացը վերաբնակեցման պլանավորման, իրականացման և մոնիթորինգի մեջ, ինչպես նաև ԱԵԱ և շահառուներին ՎԳՊ-ի հետ կապված տեղեկատվության հրապարակման պլանը, ներառյալ կորցրած գույքերի փոխհատուցման, վերաբնակեցմանն աջակցելու և բողոքարկման մեխանիզմի վերաբերյալ տեղեկատվությունը: Հատուկ ենթագլխում ազդակիր համայնքներում հանրային քննարկման հանդիպումների վերաբերյալ մանրամասներ են ներկայացված՝ ներառյալ արտահայտված տեսակետների ամփոփումը, և ինչպես են այս տեսակետները հաշվի առնվել վերաբնակեցման պլանը կազմելու ժամանակ:

3.2 Հանրային քննարկումներ և հրապարակման պլան

43. Ըստ ծրագրի ՎՔԾ-ի, որպես ՎԳՊ-ի կազմման առաջին քայլերից մեկը, պատրաստվել է Հանրային Քննարկման և Հրապարակման Պլան (ՀՔՀՊ): ՀՔՀՊ-ն մշակվել է 2014թ-ի օգոստոսին և վերանայվել է 2017թ-ին սույն Ծրագրի համար: ՀՔՀՊ-ն նպատակ ունի զարգացնել կիրառելի գործընթացները, մեխանիզմները և ՀՔ սկզբունքներն ու տեղեկատվության հրապարակումը: ՀՔՀՊ-ի պատճենը կցված է հաշվետվությանը (Հավելված 2):

3.3 Հանրային քննարկում

44. ՎԳՊ-ի կազմման ընթացքում ԲԷՑ-ը Կապալառուի միջոցով իրականացրել է լայնածավալ հանրային քննարկումներ (տես ստորև ներկայացված աղյուսակը) պաշտոնական և ոչ պաշտոնական հանդիպումների միջոցով ԱԵԱ և ՏԻՄ-ի ներկայացուցիչների հետ, ինչպես նաև գրավոր ծանուցումներ է ներկայացրել հողի ձեռքբերման և վերաբնակեցման գործողությունների վերաբերյալ՝ սահմանված ՀՀ օրենքով:

3.3.1 ՎԳՊ-ի կազմման ընթացքում պաշտոնական հանրային քննարկումներ

45. ԲԷՑ-ն իրականացրել է հանրային քննարկումներ Մաս 1-ի ԱԵԱ հետ ՎԳՊ-ի կազմման, իրականացման, փոխհատուցման ինչպես նաև ՀՀ Կառավարության նախնական ուսումնասիրության մասին որոշման վերաբերյալ հարցերի շուրջ և սկսել է գույքագրումը: Հանրային քննարկումները (ՀՔ) կազմակերպվել են 2017թ-ի մարտի 22-ից մինչև 23-ը այն ԱԵԱ համար, ովքեր ներառված էին սույն ՎԳՊ-ի մեջ: ՀՔ իրականացվել են ՏԻՄ-ի գրասենյակներում, որոնք հասանելի են եղել ԱԵԱ համար: Բոլոր ԱԵԱ ՀՔ-ից մեկ շաբաթ առաջ հեռախոսով տեղեկացվել են ՀՔ-ի տեղի և ժամանակի վերաբերյալ: Խորհրդատուները

մեկ օր առաջ հիշեցրել են ԱԵԱ ՀՔ-ի վերաբերյալ: Համապատասխան հայտարարությունը ՀՔ-ից մեկ շաբաթ առաջ էլ. փոստով ուղարկվել է տեղական լրագրող մարմիններին և յուրաքանչյուր համայնքում փակցվել է հայտարարությունների տախտակի վրա: Տեղական ՀԿ-ները տեղեկացվել են էլ. փոստով և ՀԿ-ի ցանցերով:

46. ՀՔ-ները իրականացվել են ԲԷՑ-ի կողմից Կապալառուի սոցիալական հարցերով մասնագետի հետ միասին:

47. Ընդհանուր առմամբ 44 մարդ է մասնակցել ՀՔ-ը, որոնցից 8-ը կանայք էին: Ստորև բերված աղյուսակում մանրամասն ներկայացված է տեղի, ժամանակի և մասնակիցների քանակի վերաբերյալ: Հանդիպման արձանագրությունները և մասնակիցների ցանկը ներկայացված է Հավելված 3-ում:

Աղյուսակ 13 Յուրաքանչյուր համայնքում ծրագրի ազդակիր անձանց քանակը, որոնք մասնակցել են հանրային քննարկումներին

N	Համայնք	Օր	Վայր	Մասնակիցների քանակը			Ազդակիր մասնավոր հոդերի քանակը	Ազդակիր հոդերի քանակը, որոնց սեփականատերերը մասնակցել են ՀՔ-ներին
				Կին	Տղամարդ	Ընդհանուր		
1	Ալավերդի	մարտի 22, 2017թ.	համայնքապետարան	1	9	10	8	4
2	Մեծ Այրում	մարտի 22, 2017թ.	համայնքապետարան	1	8	9	13	4
3	Հաղթանակ	մարտի 23, 2017թ.	համայնքապետարան	1	4	5	1	1
4	Ճոճկան	մարտի 23, 2017թ.	համայնքապետարան	5	15	20	22	15
	Ընդամենը	-	-	8	36	44	44	24

48. Յուրաքանչյուր հանդիպման ժամանակ ներկայացվել են վերաբնակեցման գործընթացի հիմնական փուլերը, ներառյալ ծրագրի հետ կապված տեղեկատվությունը, ժամանակացույցը, փոխհատուցման իրավունքները, գնահատման մեթոդաբանությունը և ձեռքբերման գործընթացը: Ի լրումն, տարածվել են ԲԷՑ-ի և ՇԿ-ի մանրամասն կոնտակտային տվյալները: Ծրագրի տեղեկատվական գրքույկը, որը տրամադրվել է մասնակիցներին, կցված է Հանրային քննարկման հրապարակման պլանին (ՀՔՀՊ) Հավելված 2-ում: Հիմնվելով ԲԷՑ-ի կողմից հանդիպումների ժամանակ ստացած տվյալների վրա՝ ԱԵԱ, որոնք մասնակցել են, գոհ են եղել քննարկումների գործընթացից: Հիմնական հարցերը, խնդիրները և մտահոգությունները, համապատասխան պատասխաններով և պլանավորված/նախաձեռնած գործողություններով, ներկայացված են Հավելված 3-ում՝ հանդիպումների ամփոփում:

3.3.2 Ոչ-պաշտոնական հանրային քննարկումներ

49. ԱԵԱ ներկայացուցիչների և տեղական կառավարական մարմինների հետ չափագրման, գույքագրման և մարդահամարի ընթացքում և դրանցից առաջ պաշտոնական լուսմներ են անցկացվել գույքագրող և գնահատող ընկերության կողմից: Մասնավորապես, ՎԳՊ-ի կազմման ընթացքում ԱԵԱ տեղեկացվել են վերաբնակեցման մասին՝ հետազոտման, ժամանակացույցի և վերջնաժամկետի վերաբերյալ: Ամենօրյա խորհրդատվություններ են իրականացվում նաև հեռախոսով խորհրդատուի անվտանգության մասնագետի կողմից:

3.3.3 ՎԳՊ-ի իրականացման և շինարարության ընթացքում հանրային քննարկումներ

50. ԱԵԱ հետ լրացուցիչ ոչ պաշտոնական քննարկումներ կիրականացվեն ՎԳՊ-ի կատարման փուլում, մասնավորապես ՎԳՊ-ն իրականացնող մասնագետի/խմբի կողմից պայմանագրերի ստորագրման ընթացքում:

51. Հանրային Քննարկման հանդիպումներն ընդհանուր հանրության համար կազմակերպվել են շինարարությունն իրականացնող կապալառուի և ԲԷՑ-ի կողմից բոլոր համայնքներում համայնքի անդամներին շինարարության ժամանակացույցի, մոտեցումների, անվտանգության և բողոքարկման մեխանիզմների վերաբերյալ տեղեկացնելու համար:

3.4 Տեղեկատվության հրապարակում

52. ՎԳՊ-ի կազմման, իրականացման և մոնիթորինգի ընթացքում իրականացվել են և կիրականացվեն տեղեկատվության հրապարակման հետևյալ գործողությունները:

- **ՀՀ օրենքով նախատեսված ծանուցումներ՝** Որոշ տեղեկատվության հրապարակման վերաբերյալ օրենքի պահանջները վերաբերում են պլանավորման, իսկ մյուսները իրականացման գործընթացին: Հենց որ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին որոշումը ՀՀ կառավարության կողմից հաստատվի, այն կիրատարակվի ավելի քան 3000 տպաքանա ունեցող թերթում (համաձայն ՀՀ օրենսդրության), և հողի յուրաքանչյուր ազդակիր սեփականատեր կստանա գրություն պաշտոնական ծանուցմամբ: Բոլոր ԱԵԱ ծանուցվել են գույքի գնահատման ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ պաշտոնական գրություններով գույքի նկարագրման արձանագրությունների հետ միասին⁸: ԱԵԱ պաշտոնապես կուղարկվեն նաև գնահատման արդյունքներով և փոխհատուցման գումարներով պայմանագրերի նախագծերը, հենց որ ՎԳՊ-ն վերջնականացվի և հաստատվի: Պաշտոնական ծանուցման միջոցով ԲԷՑ-ը կուղարկի տվյալների վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև ՎԳՊ-ի իրականացման հետ կապված տեղեկատվություն, մասնավորապես Հայաստանից⁹ դուրս գտնվող սեփականատերերի և/կամ համասեփականատերերի համար: ԲԷՑ-ը կկցի նոտարական հաստատման ենթակա լիազորագրի օրինակելի ձև հայերեն և ռուսերեն լեզուներով, ՎԳՊ-ի կազմման գործընթացը արագացնելու համար:
- **Հանրային տեղեկատվական գրքույկների բաժանում՝** Հանրային Քննարկման հանդիպումների ընթացքում ԲԷՑ-ը բաժանել է հանրային տեղեկատվական գրքույկներ հայերեն լեզվով (պատճենը ներկայացված է Հավելված 2-ում): Գրքույկում ներկայացված են ծրագրի նկարագրությունը, իրավունքները և փոխհատուցման աղյուսակը, հաճախակի տրվող հարցերը, բողոքարկման մեխանիզմը, ինչպես նաև ԲԷՑ-ի կոնտակտային անձի և կապալառուի սոցիալական հարցերով մասնագետի տվյալները:
- **ՎՔՇ-ի հրապարակումը՝** ՎՔՇ-ի պատճենը, ինչպես նաև ծրագրի տեղեկատվական գրքույկների լրացուցիչ պատճենները հրապարակվել են ՏԻՄ-ում և ընդունելի են ԱԵԱ համար:
- **ՎԳՊ-ի նախագծի հրապարակում՝** ՎԳՊ-ի նախագիծը կհրապարակվի 20 օրացուցային օրյա ժամկետի ընթացքում՝ ՎՔՇ դրոյթներին համապատասխան, որը ժամանակ կտա բոլոր շահագրգիռ և ազդակիր կողմերին ներկայացնել իրենց առաջարկությունները և դիտողությունները ՎԳՊ

⁸ ՎԳՊ-ի իրականացման ընթացքում բոլոր ԱԵԱ-ք հնարավորություն ունեն ներկայացնել իրենց, ծանոթանալ և ստորագրել արձանագրություններ (մանրամասները ներկայացված են ազդեցություն գլխում): Ըստ ՀՀ ընթացակարգի, ԲԷՑ-ը նույնպես պետք է ստորագրի արձանագրությունը և այն պաշտոնապես ուղարկի ԱԵԱ-ց: Նրանք կունենան 10 օր արձանագրության բովանդակությունը դատարանում վիճարկելու համար:

⁹Տեղեկատվությունը տրամադրվել է սեփականատերերին կամ Հայաստանից դուրս գտնվող ազդակիր ՏՏ-երի ընտանքի անդամներին փոխանցելու արտասահմանում գտնվող ԱԵԱ-ց:

վերաբերյալ: ՎԳՊ-ի նախագծի հայերեն լեզվով տարբերակը կուղարկի ՏԻՄ-ի բոլոր ազդակիր համայնքներ: ԱԵԱ հնարավորություն կունենա հեռախոսով ԲԷՑ-ին ներկայացնել իրենց մեկնաբանությունները և հարցերը՝ ՏԻՄ-երի միջոցով կամ անձնապես հանրային քննարկումների ժամանակ, որոնք կկազմակերպվեն Ալավերդի, Ճոճկան, Մեծ Այրում և Այրում համայնքներում: Բոլոր ԱԵԱ հնարավորության վերաբերյալ կտեղեկացվեն հեռախոսով Գամ Արակի սոցիալական հարցերով մասնագետի կողմից: Հանրային քննարկումները կկազմակերպվեն Գամ Արակի կողմից ՎԳՊ հաստատվելուց հետո:

- **Վերջնական ՎԳՊ-ի հրապարակում**՝ Հենց որ ՎԳՊ-ն հաստատվի ՀԲ-ի կողմից, ՎԳՊ-ի հայերեն և անգլերեն տարբերակները կհրապարակվեն ԲԷՑ-ի և ՀԲ-ի կայքերում: Հաստատված ՎԳՊ-ի պատճենն առկա կլինի ազդակիր համայնքներում տարածաշրջանային լիազոր մարմինների և ՏԻՄ-ի գրասենյակներում:

4. Բողոքների Կարգավորման Մեխանիզմ և Գործընթացներ

4.1 Ներածություն

53. Եվ Ծրագրի, և ԱԵԱ օգտին է մշակել մեխանիզմ, որի միջոցով բողոքները և անհամաձայնությունները, որոնք վերաբերում են ՎԳՊ-ի իրականացմանը, կարող են լուծվել: ԲԷՑ-ը մշակել է Բողոքարկման Մեխանիզմ (ԲՄ) վստահեցնելու, որ դա պատասխան է մտահոգությունների և բողոքների, մասնավորապես ծրագրի տարածքում գտնվող ԱԵԱ: Շատ դեպքերում բողոքարկման մեխանիզմը կարող է որոշման հնարավորություն տալ անկախ միջնորդության կամ վեճերի լուծման այլընտրանքային միջոցով դատական երկարատև գործընթացին կամ բողոքների ուսումնասիրմանը հակառակ: ԲՄ-ի հատուկ նպատակը կլինի արագացնել գործընթացը, երաշխավորել արդյունավետ և ժամանակին կայացված որոշում՝ սույնով նվազեցնելով վեճերի առաջացման ռիսկը և խուսափելով ավելորդ ուշացումներից: Հանրային Քննարկումների հանդիպումների, ինչպես նաև ծրագրի տեղեկատվության հրապարակված գրքույկների միջոցով բոլոր ազդակիր անձանց ծանուցվել է ԲՄ-ի վերաբերյալ:

4.2 Բողոքների Կարգավորման Մեխանիզմ

4.2.1 Առաջին փուլ

54. Առաջին փուլում փորձ կարվի բողոքները լուծել համայնքային մակարդակով բանակցային գործընթացով ոչ պաշտոնական միջնորդի և համայնքային լիազոր մարմինների հետ: Համայնքային լիազոր մարմինները կխորհրդակցեն ԲԷՑ-ի բողոքները համակարգողի հետ, որպեսզի պատրաստեն պատասխանները ԱԵԱ մտահոգությունների վերաբերյալ: Երաշխավորելու համար, որ բոլոր բողոքները կարգավորվում են պատշաճ ձևով, ԲԷՑ-ը Հանրային քննարկումների հանդիպումների ժամանակ կազմակերպել է դասընթացներ ՏԻՄ-ի ներկայացուցիչների համար և բացատրել է գործընթացը, որին պետք է հետևել բողոքների գրանցման և հասցեագրման ժամանակ (մանրամասները ներկայացված են Բաժին 4.4-ում):

55. Միաժամանակ, ԱԵԱ կարող են ներկայացնել բողոքները ՏԻՄ-ի միջոցով կամ անմիջապես ԲԷՑ-ին: ԲԷՑ-ը ունի բողոքները համակարգող անձ (Վարկային Բաժին 1-ի մասնագետ՝ Վահան Գրիգորյան, հեռ՝ 010 72 02 70) և հանրային քննարկումների ժամանակ ԱԵԱ տրամադրվել է նրա կոնտակտային տվյալները: Յուրաքանչյուր բողոքի պետք է պատասխան տրվի առավելագույնը 30 օրացուցային օրվա ընթացքում: Տարբեր մակարդակների ԲԿՄ մուտքային կետերի, ներառյալ տեղական կառավարման մարմինների և ԲԷՑ-ի, կոնտակտային տվյալներով քարտերը տրամադրվել են ԱԵԱ-երին ուսումնասիրության ժամանակ և կտրամադրվեն ամեն անգամ երբ ծրագրի հետ առնչություն ունեցող որևէ անձ (ԲԷՑ, ՇԿ-ի ճարտարագետներ և այլն) կայցելի համայնքը, ազդակիր գույքը կամ կխոսի ԱԵԱ-ի հետ ՎԳՊ իրականացման և շինարարության ընթացքում:

4.2.2 Երկրորդ փուլ

56. Եթե բողոքը շարունակվում է, ԱԵԱ կարող ներկայացնել բողոքի ձևը էլեկտրոնային կամ տպված տարբերակով անձամբ կամ ՏԻՄ-ի¹⁰ մշոցով Բողոքների կարգավորման հանձնաժողովին (ԲԿՀ), որը պետք է ձևավորվի ԲԷՑ-ի կողմից: ԲԿՀ-ի հետ հանդիպումը կկազմակերպվի Երևանում, ԲԷՑ-ի գրասենյակում բողոքը ստանալուց հետո 15 օրացուցային օրվա ընթացքում: Հանձնաժողովը բաղկացած կլինի մշտական և ոչ մշտական անդամներից:

1. Մշտական անդամներ՝ ԲԷՑ, ԻԱԽ, Կապալառու:

2. Ոչ մշտական անդամներ՝ համապատասխան մարզի համայնքի և ՀԿ-ի ներկայացուցիչներ:

57. Ոչ պաշտոնական անդամները կծանուցվեն հանդիպման ամսաթվի և տեղի վերաբերյալ հանդիպումից 10 օրացուցային օր առաջ: Ոչ մշտական անդամների բացակայությունը չի կարող պատճառ հանդիսանալ հանդիպումը չեղյալ համարելու համար: Մշտական անդամները կարող են ներկայացված լինել Վերաբնակեցման մասնագետով/Իրավաբանով, Ճարտարագետով, Գյուղատնտեսով, Գնահատման կամ այլ մասնագետով՝ ըստ պահանջի: Իրավաբանը պետք է ներկայացնի մշտական անդամներից որևէ մեկին: Հանձնաժողովը պետք է որոշում կայացնի և ծանուցի ԱԵԱ-ին 15 օրացուցային օրվա ընթացքում:

58. Բողոքների կարգավորման մեխանիզմը ձախողվելու դեպքում ԱԵԱ կարող իր պահանջը ներկայացնել դատարան:

4.3 Հիմնական պատասխանատու կողմերը և առկա կապերը բողոքներ ներկայացնելու համար

59. ԱԵԱ-ը կարող են ներկայացնել իրենց հարցերը, բողոքները և մտահոգությունները մի քանի կապերի միջոցով, մասնավորապես,

- Տեղական Կառավարություն
- ԲԷՑ-ին հեռախոսի, էլ. փոստի միջոցով կամ անձամբ այցելելով
- Բողոքների կարգավորման կոմիտե

60. Շինարարական աշխատանքներն իրականացնող կապալառու կազմակերպությունը պարտավոր է իրականացնել աշխատանքը, համաձայն պայմանագրային պահանջների, որը ներառում է.

- անձնակազմի անդամ, ով պատասխանատու է բողոքարկման գործընթացի համար և կտրամադրի տեխնիկական աջակցություն ԲԷՑ-ին կարգավորելու ցանկացած բողոք, որը կարող է առաջանալ ՎԳՊ-ի կազմման և իրականացման ընթացքում,
- եթե մարդահամարի արդյունքում հայտնաբերվել են խոցելի ազդակիր անձինք, ապա կապալառուն պետք է մասնագիտացված փաստաբաններ նշանակի (սոցիալական աշխատողներ/իրավաբաններ) աջակցելու այս մարդկանց ամբողջ գործընթացի ժամանակ և նրանց համար գործի որպես անկախ իրավաբան, եթե որևէ բողոք առաջանա:
- ԲԷՑ-ի և ԱԵԱ հետ բողոքների որոշում արբիտրաժի միջոցով:

61. ԲԷՑ-ը իրականացրել է և կշարունակի իրականացնել հետևյալը.

- Անձնակազմի անդամ, ով պատասխանատու է բողոքարկման գործընթացի կարգավորման համար, այսուհետ՝ բողոքները կարգավորող (ներառյալ ԱԵԱ-ի հետ առաջին կոնտակտը):

¹⁰ Բոլոր ՏԻՄ գրասենյակները ունեն համակարգիչներ, էլ. փոստեր և ինտերնետ

- Կատարել դաշտային այցելություններ՝ Կապալառուի կողմից մեղմացնող միջոցառումների իրականացումը ստուգելու նպատակով:
- Հեռախոսի համարը, էլ. փոստի հասցեն և կոնտակտային անձի անունը ծրագրի համար նախատեսված հայտարարությունների տախտակների վրա:
- Կապալառուի և ԱԵԱ հետ բողոքների որոշում արբիտրաժի միջոցով:
- Կապը դատարանի հետ:
- ԲԷՑ-ը կվերահսկի տեղական լիազոր մարմինների կողմից ստացված բոլոր բողոքները, երաշխավորելու համար, որ դրանք պատշաճ կերպով կարգավորվում են և ներառվում են ԻԱԽ-ի կողմից մշակվող առաջընթացի հաշվետվության մեջ:

62. Իրականացմանն աջակցող խորհրդատուն կիրականացնի հետևյալը.

- անձնակազմի անդամ, ով պատասխանատու է բողոքարկման գործընթացի և մշտադիտարկման պարբերական հաշվետվությունների համար,
- կանոնավոր մշտադիտարկման հաշվետվությունների պատրաստում ՎԳՊ-ի կազմման և իրականացման կարգավիճակի վերաբերյալ, ներառյալ ցանկացած առաջացած բողոքի վերաբերյալ մանրամասներ և ինչպես են դրանք կարգավորվել,
- ԲԷՑ-ի և Կապալառուի հետ բողոքների որոշում արբիտրաժի միջոցով:

63. Բողոքարկման Հանձնաժողովի տեխնիկական առաջադրանքը (SU) հետևյալն է.

- հստակ հասկանալ ԱԵԱ կողմից բարձրացված հարցերը՝ կապված Հայաստանում էլեկտրահաղորդման գծի անցկացման հետ,
- արբիտրաժ և բանակցություն հիմնվելով ԱԵԱ և իրականացնող գործակալությունների միջև վեճերի դեպքում կողմերի դեպքերի թափանցիկ և անկողմնակալ լսումների վրա,
- կայացնել անաչառ և արդարացի որոշումներ նրանց կողմից ներկայացված բոլոր բողոքների վերաբերյալ,
- խորհուրդ տալ ԲԷՑ-ին ինչպես լավագույն կերպով կարգավորել ԱԵԱ բողոքները,
- իրականացնել ԱԵԱ-ի բողոքների լուծման կարգավիճակի մշտադիտարկում:

64. ՀԲ-ն անմիջապես Բողոքարկման գործընթացի մաս չէ, բայց պետք է ստանա հաշվետվություններ, ինչպիսի բողոքներ են ստացվել և ինչպես են դրանք հետևել/մեղմացվել:

4.4 Բողոքների գրանցման և հասցեագրման գործընթաց

65. Մշակվել է հետևյալ գործընթացը, երաշխավորելու, որ բոլոր հարցերն ու մտահոգությունները գրանցվել, գնահատվել և պատշաճ կերպով հասցեագրվել են: Կապալառուն, ԲԷՑ-ը և ԻԱԽ-ն կվարեն բողոքների մատյան:

4.4.1 Ուսումնասիրում և փաստաթղթավորում

66. Բողոքները համակարգի միջոցով պետք է ուսումնասիրվեն և մշտադիտարկվեն: Բողոքները կարգավորողի կողմից պետք է վարվեն հետևյալ փաստաթղթերը.

- սկզբնական բողոքի ստացում և գրանցում
- բողոքի մանրամասներ և հանգամանքներ, ներառյալ ուսումնասիրման համարները
- բողոքի դասակարգում և տրամադրված ծանուցումներ
- բողոքները կարգավորելու համար ռեսուրսների ակտիվացում
- պատասխան(ներ) բողոքին և վերջնական արդյունքին
- շահառուների պատասխան(ներ)ը և պահանջները լրացուցիչ գործողության համար, եթե կա անհրաժեշտություն

- հատուկ գործողության պլանների իրականացում
- գործողության պլանների վերաբերյալ առաջընթացի կարգավիճակի հաշվետվություններ
- ԲԿՄ մատյան ձեռնարկած գործողությունների արդյունավետության վերաբերյալ:

4.4.2 Դիտարկում

67. ՎԳՊ-ի կազմման/իրականացման հետ կապված բողոքների թարմացումը կտրամադրվի ծրագրի առաջընթացի յուրաքանչյուր եռամսյակային հաշվետվության մեջ:

4.5 Շինարարության փուլում ԲԿՄ

68. Խրախուսելի է Ազդակիր անձանց (ԱԵԱ) կողմից հետևյալ ձևով գործելը.

- կապ հաստատել կապալառուի կողմից նշանակված բողոքարկման անձնակազմի հետ անձամբ պարբերաբար տեղանք այցելելու ժամանակ կամ նշանակված հեռախոսահամարով¹¹ կամ համայնքի ղեկավարի կամ ՀԿ-ի անձնակազմի միջոցով
- բողոք ներկայացնել և դեպքի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրել
- համաձայնվել կապալառուի հետ մեղմացման միջոցների վերաբերյալ
- համաձայնվել կապալառուի հետ բողոքների լուծման համար ժամանակի սահմանափակման վերաբերյալ: Բողոքները պետք է լուծվեն երկու շաբաթվա ընթացքում կամ այլ կերպ հատկորոշվեն մշակված համաձայնագրում
- ստորագրել, եթե մեղմացման միջոցը կիրառվել է, ինչպես համաձայնեցվել էր
- լուծումը փնտրել ԲԷՑ-ից, եթե բավարարված չէ վերը նշված գործընթացով
- լուծումը փնտրել Բողոքների կարգավորման հանձնաժողովից, եթե գոհ չէ ԲԷՑ-ի պատասխանից
- լուծումը փնտրել դատարանում, եթե այս բոլորը ձախողվում է:

69. Այնուամենայնիվ, վերը նշված բողոքների մեխանիզմը չի սահմանափակում քաղաքացու իրավունքը դեպքի համար դիմել անմիջապես դատարան բողոքարկման մեխանիզմի հենց սկզբնական փուլում: Բողոքների մեխանիզմը նախատեսված է խուսափելու համար երկարատև դատական գործընթացից:

70. ԻԱԽ-ն կիրականացնի մշտադիտարկում և կաջակցի ԲԷՑ-ին ԲԿՄ շրջանակներում անհատական բողոքների կարգավորման հարցում, ինչպես նաև կապահովի Կապալառուի/ԲԷՑ-ի կողմից բարձրացված բողոքի պատասխանը և վերջինիս մշտադիտարկումը՝ ԳՁ 4.12 Հարկադիր վերաբնակեցում, տեղական օրենսդրության և ՎԳՊ համապատասխան: ԻԱԽ-ն պետք է ունենա սոցիալական մասնագետ, ով կհամագործակցի ԱԵԱ-ի հետ, կաջակցի ԲԷՑ-ին պատասխանների մշակման հարցում, կհետևի, որ ՇԿ գրանցի բոլոր բողոքները, և կապահովի սույն ՎԳՊ-ի ԲԿՄ դրույթների իրականացումը:

¹¹ Մինչև շինարարական աշխատանքներն սկսելը հանրային քննարկման ժամանակ տրամադրված տեղեկատվական գրքույկներում նշված կլինի մանրամասն կոնտակտային համարները:

5. Ինստիտուցիոնալ շրջանակ

5.1 Ներածություն

71. Մի քանի հաստատություններ, յուրաքանչյուրը տարբեր դերերով և պատասխանատվությամբ, պատասխանատու են ՎԳՊ-ի վերահսկման և իրականացման համար՝ ՎՔԾ-ի սկզբունքների և նպատակների, ՀՀ օրենսդրության, ՀԲ ԳԶ 4.12 Հարկադիր վերաբնակեցում և համապատասխան պայմանագրերի պահանջներին համապատասխան: Ներառված հաստատությունների գործառնական դիրքը ներկայացվում է ստորև:

5.2 ԲԷՑ

5.2.1 Ընդհանուր նկարագրություն

72. ԲԷՑ-ը էլեկտրահաղորդման ոլորտում պետական ընկերություն է, որը հիմնադրվել է 1998թ-ին և պատասխանատու է երկրում բարձր լարման էլեկտրահաղորդման ցանցի շահագործման, շինարարության և տեխնիկական սպասարկման համար: Ծրագրի այս բաղադրիչ մասը, ինչպես նաև ԲԷՑ-ի ամբողջ գործողությունները, կվերահսկվեն ԲԷՑ-ի Կառավարման Խորհրդի կողմից ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության գլխավորությամբ և բաղկացած ութ անդամներից, որոնք ներկայացնում են ԲԷՑ-ը, Կառավարությունը և Էներգետիկ սեկտորի կազմակերպությունները: ԲԷՑ-ի հիմնադրման իրավական հիմքն է՝ 1998թ-ի հուլիսի 20-ի Կառավարության No 450 Որոշումը: 1998թ-ի օգոստոսի 21-ին ԲԷՑ-ը վերակազմավորվել է որպես փակ բաժնետիրական ընկերություն: ԲԷՑ-ի կանոնադրությունը հաստատվել է 1998թ-ի օգոստոսի 21-ին ՀՀ Էներգետիկայի նախարարության No 254-ԳՄ Որոշմամբ: ԲԷՑ-ի բաժնետոմսերի բացառիկ սեփականատերը Հայաստանի Հանրապետությունն է: Բաժնետոմսերի ղեկավարումը փոխանցվել է ՀՀ Էներգետիկայի նախարարությանը, համաձայն ՀՀ Կառավարության 2003թ-ի նոյեմբերի 6-ի No 1694-Ն Որոշման:

73. ԲԷՑ-ի հիմնական գործունեությունը հետևյալն է՝ էլեկտրահաղորդում, էլեկտրականության արտադրություն (հողմակայան), կառուցում, վերակառուցում, արդիականացում, Էներգետիկ օբյեկտների վերականգնում, բարձր լարման ցանցերի կառուցում, Էներգետիկ օբյեկտների հետազոտման և զարգացման աշխատանքներ:

74. **Աշխատանքային սկզբունքները.** Համաձայն Էներգետիկայի մասին ՀՀ Օրենքի Հոդված 23-ի (Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորում) էլեկտրաէներգիայի տեղափոխումը, ինչպես նաև էլեկտրահաղորդման ցանցերի կառուցումը լիցենզավորման ենթակա գործողություն է Հայաստանում: Միայն էլեկտրահաղորդման գծի շահագործման համապատասխան լիցենզիա ունեցողը կարող է զբաղվել էլեկտրական և ջերմային էներգիայի և բնական գազի վաճառքով/առքով (գնում վաճառելու նպատակով), համաձայն լիցենզիայի պայմանների եւ շուկայի կանոնների: Ի լրումն դրան, համաձայն էլեկտրահաղորդման գծերի (հաղորդման (փոխադրման) լիցենզիա) վերաբերյալ Հոդված 36-ի՝ էլեկտրաէներգիայի տեղափոխման լիցենզիայի իրավունք տրվում է Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում էլեկտրաէներգիա փոխադրելու և Հայաստանի Հանրապետության տարածքով երրորդ երկիր էլեկտրաէներգիա արտահանելու համար: Էլեկտրաէներգիայի (հզորության) փոխադրման լիցենզիան պետք է համապատասխանի շուկայական կանոններին և պայմանագրերին:

75. **Գործառնական Սկզբունքները.** ԲԷՑ-ը իրականացնում է գոյություն ունեցող բարձր լարման էլեկտրահաղորդման ցանցի և դրվածքների նախագծում, շահագործում և տեխնիկական սպասարկում, ներառելով, բայց չսահմանափակվելով բարձր լարման ենթակայաններով (220կՎ/ 110կՎ /35կՎ /6կՎ), բարձր լարման էլեկտրահաղորդման գծերով (330կՎ /220կՎ /110կՎ), Պուշկինի լեռնանցքում տեղադրված հողմակայանով (2.64 ՄՎ հզորությամբ): ԲԷՑ-ն իրականացնում է նաև կառուցման համար ներդրման նոր ծրագրեր, ներառելով, բայց չսահմանափակվելով բարձր լարման ենթակայաններով (220կՎ), բարձր լարման էլեկտրահաղորդման գծերով (400կՎ/ 220կՎ):

5.2.2 Հիմնական պատասխանատվությունները

76. ԲԷՑ-ն ամբողջապես պատասխանատվություն է կրում Ծրագրի համար, ներառյալ նախապատրաստական աշխատանքները, իրականացումը և բոլոր փոխհատուցումների և վերաբնակեցման առաջադրանքների ֆինանսավորումը և միջգերատեսչական համակարգումը, հանրային քննարկումները, խորհրդատուների վարձակալումը և այլն: ԲԷՑ-ը լիովին պատասխանատվություն է կրում սույն ՎԳՊ-ի ներքո գտնվող բոլոր գործողությունների վերահսկման ու մշտադիտարկման համար:

5.2.3 ՎԳՊ-ի իրականացման միավոր

77. Ծրագրի համար ՎԳՊ-ն իրականացնելու նպատակով ԲԷՑ-ում կազմավորվել է հատուկ միավոր: Միավորը բաղկացած է հինգ մասնագետից, որոնցից մեկը խմբի ղեկավարը, երկուսը՝ տեղանքում վերաբնակեցման մասնագետներ, մեկ հոգի՝ կես դրույքով աշխատող իրավաբան և երկու հոգի՝ մասնագետներ, որոնք աշխատում են գրասենյակում: Ծրագրում վերաբնակեցման իրականացման նպատակով ՎԳՊ-ի իրականացման միավորը պատասխանատու է հետևյալ առաջադրանքների համար, մասնավորապես՝ երաշխավորելով, որ ԱԵԱ արագ կերպով կծանուցվեն ըստ ՎԳՊ-ի և ՀՀ օրենքների ու կանոնակարգերի, պայմանագրի ստորագրման, անհրաժեշտության դեպքում բռնագրավման գործընթացի կազմակերպման, ազդեցության ենթարկված ունեցվածքների գրանցման և վերագրանցման, պայմանագրի ստորագրման գործընթացի ընթացքում ԱԵԱ աջակցության, իրականացման ընթացքում ստացված բողոքների հավաքման և համակարգման համար (մանրամասները ներկայացված են Հավելված 5-ում):

5.3 ԲԷՑ-ի խորհրդատուները

78. Հաշվի առնելով վերաբնակեցման գործողությունների մեծ մասշտաբը՝ վերաբնակեցման հետ կապված առաջադրանքների և գործողությունների համար ԲԷՑ-ին աջակցություն են ցուցաբերում տարբեր խորհրդատուներ, մասնավորապես շինարար կապալառու Գամ Արակ ընկերությունը և իրականացմանը աջակցող խորհրդատուն (Tractebel&EA Energy Advisory):

5.3.1 Շինարար կապալառու

79. Շինարար Կապալառուն (ՇԿ) կազմել է նախագիծ Ծրագրի համար: ՇԿ-ն պատասխանատու է ծրագրի ծրագծի և հենարանների գտնվելու վայրի որոշման համար, համաձայն ՎՔՇ-ի սկզբունքների, Ծրագրի ազդեցությունից խուսափելու կամ այն նվազագույնի հասցնելու համար: ՇԿ-ն պատասխանատու է ՎԳՊ-ի կազմման համար, ներառյալ բոլոր պահանջվող չափագրումները, գույքի նկարագրման արձանագրությունների կազմումը և գնահատումը: ՇԿ-ն աջակցել է ԲԷՑ-ին ՎԳՊ-ի կազմման ընթացքում հանրային քննարկումների և տեղեկատվության հրապարակումը կազմակերպելու հարցում: ՇԿ-ն կվարձի անձնակազմի անդամ, ով պատասխանատու կլինի բողոքարկման գործընթացի համար և կտրամադրի

տեխնիկական աջակցություն ԲԷՑ-ին կարգավորելու ցանկացած բողոք, որը կարող է առաջանալ ՎԳՊ-ի կազմման և իրականացման ընթացքում և հանդես կգա ՇԿ-ի անունից որպես բողոքների լուծման հանձնաժողովի մշտական անդամ: Եթե լինեն ազդակիր անձինք, ովքեր չունեն ազդակիր գույքի հանդեպ իրավունքը հաստատող վկայական կամ չունեն իրենց կողմից զբաղեցված հողի օգտագործման գրանցված իրավունք, ապա Կապալառուն կտարամադրի անհրաժեշտ տեխնիկական և իրավական աջակցություն ազդակիր անձանց կարգավորման հարցում աջակցելու համար:

80. ՇԿ նաև մասնագիտացված փաստաբաններ կնշանակի (սոցիալական աշխատողներ/իրավաբաններ) ամբողջ գործընթացի ժամանակ ազդակիր խոցելի անձանց աջակցելու և որպես անկախ իրավաբան գործելու համար՝ որևէ բողոք առաջանալու դեպքում: ԱԵԱ-երը փոստով կտեղեկացվեն այս հնարավորության մասին մինչև ՎԳՊ իրականացման մեկնարկը:

5.3.2 Իրականացմանն աջակցող խորհրդատու

81. Իրականացմանն Աջակցող Խորհրդատուն (ԻԱԽ) նշանակվել է շինարարական աշխատանքները վերահսկելու, նախագծի, ինչպես նաև սոցիալական և շրջակա միջավայրի լրիվ պահանջների հետ համապատասխանությունը երաշխավորելու համար: ԻԱԽ-ն ծրագրի համար վերանայել է ՎՔՇ-ն և ԲԷՑ-ին կտրամադրի սոցիալական մասնագետների վերաբերյալ մոնիթորինգի հաշվետվություններ ամբողջ շինարարության ընթացքում:

82. ԻԱԽ-ն կիրականացնի մշտադիտարկում և կաջակցի ԲԷՑ-ին ԲԿՄ շրջանակներում անհատական բողոքների կարգավորման հարցում, ինչպես նաև կապահովի Կապալառուի/ԲԷՑ-ի կողմից բարձրացված բողոքի պատասխանը և վերջինիս մշտադիտարկումը:

5.3.3 Անկախ խորհրդատու

83. ԲԷՑ-ը կվարձի անկախ խորհրդատու ՎԳՊ-ի իրականացման համապատասխանության հաշվետվություն կազմելու նպատակով (տես նաև պարբերություն 10.4, էջ 48):

5.4 Պետական Կառավարման Մարմիններ

84. Վերաբնակեցման շրջանակներում ԲԷՑ-ը կարող է համագործակցել մի շարք նախարարությունների և կոմիտեների հետ: ՎԳՊ-ի իրականացման ընթացքում բոլոր պետական կառավարման մարմինները կարող են հաշվի առնվել և անհրաժեշտության դեպքում դառնալ Բողոքների կարգավորման կոմիտեի անդամ: Հիմնական նախարարություններից ՎՔՇ-ում նշվում է հետևյալները՝ (ա) Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունը, (բ) Բնապահպանության նախարարությունը՝ Պահպանվող տարածքների բաժնի և բնապահպանական փորձաքննության ՊՈԱԿ-ի հետ միասին, (գ) Գյուղատնտեսության նախարարությունը և վերջինիս Հայանտառ ՊՈԱԿ-ը (անտառ), (դ) Մշակույթի նախարարությունը և վերջինիս կազմում ներառված Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալությունը, (ե) Ֆինանսների նախարարությունը:

85. ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն (ԱԳԿՊԿ) ՎԳՊ-ի կազմման և իրականացման մեջ ներգրավված ամենահիմնական պետական կազմակերպությունն է, մասնավորապես կապված ԱԵԱ ունեցվածքի և գույքի իրավունքների որոշման, վավերականացման, գրանցման, վերագրանցման և այլնի հետ:

5.5 Մարզպետարաններ (Տարածաշրջանային լիազոր մարմիններ)

86. Մարզպետարաններում պետական լիազոր մարմինները վարում են ՀՀ Կառավարության տարածքային քաղաքականությունը հետևյալ ոլորտներում՝ ֆինանսավորում, քաղաքաշինություն, բնակարանային շինարարություն և կոմունալ տնտեսություն, տրանսպորտ և ճանապարհաշինություն, գյուղատնտեսություն և հողօգտագործում, կրթություն, առողջապահություն, սոցիալական ապահովագրություն, մշակույթ և սպորտ, բնության և շրջակա միջավայրի պահպանություն, առևտուր, հանրային սննդի սպասարկում: Վերը նշված ոլորտներում տարածքային քաղաքականությունը իրականացվում է մարզպետարանների, ինչպես նաև համապատասխան մարզերին ենթակա կազմակերպությունների միջոցով: Մարզպետարանի ներկայացուցիչները ՎԳՊ-ի կազմման և իրականացման ընթացքում հաշվի են առնվել և հաշվի կառնվեն որպես տեղական պետական լիազոր մարմիններ հողային հարաբերության կարգավորման համար: ԲԷՑ-ը դիմել է մարզպետարաններ Հանրային քննարկումների կազմակերպմանը աջակցելու համար: Նախագծման փուլում մարզպետարանները նույնպես մասնակցել են ՀՔ-երին, ինչպես նաև մասնակցել են Բնապահպանական Սոցիալական ազդեցության գնահատման (ԲՄԱԳ) մեջ ներկայացված ՀՔ-ներին:

5.6 Տեղական Ինքնակառավարման Մարմիններ

87. Քանի որ Ծրագիրն իրականացվելու է գյուղական տարածքներում, Տեղական Ինքնակառավարման Մարմինները (ՏԻՄ) կարևոր դեր կխաղան և Ծրագրի ընդհանուր իրականացման և վերաբնակեցման հետ կապված գործողությունների ընթացքում: ՏԻՄ հետ արդեն խորհրդակցել են ՎԳՊ-ի կազմման ժամանակ և ակտիվ կերպով ներգրավվել են համայնքներում ԱԵԱ հետ Հանրային Քննարկումներ կազմակերպելու ընթացքի մեջ: Նրանք աջակցել են գույքագրման հետազոտման ընթացքում ազդակիր հողատարածքների սեփականության կարգավիճակը, ԱԵԱ որոշելու, հետազոտությունները կազմակերպելու հարցում: Նրանց հետ խորհրդակցել են և նրանք կներգրավվեն որպես միջնորդներ բողոքների կարգավորման գործընթացի ժամանակ, մինչև կներկայացվեն Բողոքների Կարգավորման Հանձնաժողով:

5.7 Բողոքների Կարգավորման Հանձնաժողով

88. Բողոքների կարգավորման հանձնաժողովը (ԲԿՀ) Ծրագրի ընթացքում նշանակվել է, որպեսզի ներկայացվեն վերաբնակեցման հետ կապված բողոքները և լուծվեն դատարան ներկայացված բոլոր անհամաձայնությունները (մանրամասները ներկայացված են Բաժին 4-ում):

5.8 Հասարակական Կազմակերպություններ

89. Հայաստանում և մասնավորապես ծրագրի հետ կապված տարածքներում գործող Հասարակական Կազմակերպությունները (ՀԿ-ներ) սերտորեն ներառված են համայնքային կյանքի մեջ: Մեծամասամբ ՀԿ-ներն են օգնում լուծել համայնքային խնդիրները, առաջ քաշել խոցելի խմբերի շահերը, պահպանել շրջակա միջավայրը, տրամադրել հիմնական սոցիալական ծառայություններ, կազմակերպել տեղեկատվական քարոզարշավներ և այլն: ՎԳՊ-ի կազմման ընթացքում ՀԿ-ները¹² հրավիրվել են մասնակցել ԱԵԱ հետ Հանրային Քննարկումներին ծրագրի ազդեցությանը ենթարկված տարածքներում: ՀԿ-ները կներառվեն նաև ՎԳՊ-ի իրականացման գործընթացում, մասնավորապես ազդակիր համայնքներում կազմակերպվող բոլոր հանրային քննարկումներում, որտեղ նրանք կկարողանան արտահայտել իրենց տեսակետը և ներկայացնել

¹² ՎԳՊ-ին է կցված Հանրային քննարկումների և Տեղեկատվության Հրապարակման Պլանի ներկայացման ժամանակ ներկա գտնված ՀԿ-ների ցանկը:

գործընթացի վերաբերյալ իրենց առաջարկությունները և աջակցել ԱԵԱ: ՀԿ-ներին առաջարկվել է ցանկության դեպքում նաև մասնակցել Բողոքների կարգավորման մեխանիզմի գործընթացին:

5.9 Համաշխարհային Բանկ

90. ՀԲ-ն Ծրագիրը ֆինանսավորող կազմակերպությունն է: Ծրագիրը պարբերաբար վերահսկելուց բացի, ՀԲ-ն իրականացնում է նաև համապատասխանության մոնիթորինգ, ՎԳՊ-ի վերանայում և հաստատում և թույլտվություն է տալիս պայմանագիր կնքելու և ստորագրելու համար շինարարական աշխատանքները սկսելու նպատակով:

6. Օրենսդրական Հայեցակարգ

6.1 Տեղական օրենսդրական հայեցակարգ

91. ՀՀ-ում հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ սահմանադրությամբ, «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական կատերով: Համաձայն ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 5 մասի՝ հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարումն իրականացվում է օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով՝ միայն նախնական և համարժեք փոխհատուցմամբ: Սեփականության օտարման համար սահմանադրական հիմքը բացառիկ՝ գերակա հանրային շահն է: Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման սահմանադրական պայմաններն են՝ a) սեփականության օտարումն իրականացվում է օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով, b) միայն նախնական և համարժեք փոխհատուցմամբ:

92. «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» (ՀՊԿՀՍՕՍ օրենք) ՀՀ օրենքը սահմանում է հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման հիմքը, կարգը, օտարվող սեփականության դիմաց փոխհատուցման տրման կարգը, բացառիկ՝ գերակա հանրային շահի հասկացության և դրա որոշման կարգը: Սույն օրենքի գործողությունը տարածվում է ֆիզիկական և իրավաբանական անձանց, ինչպես նաև համայնքների (այսուհետ՝ սեփականատերեր) սեփականության իրավունքով պատկանող և Հայաստանի Հանրապետությունում գտնվող կամ Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված կարգով պետական գրանցում ստացած կամ հաշվառված սեփականության իրավունքի բոլոր օբյեկտների (անշարժ կամ շարժական գույք, գույքային իրավունքներ, արժեթղթեր և այլն) վրա (այսուհետ՝ օտարվող սեփականություն): Սույն օրենքը չի տարածվում ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ, արտակարգ իրավիճակների պայմաններում սեփականության օտարման հարաբերությունների վրա: Գերակա հանրային շահը կարող է հետապնդել հետևյալ նպատակները՝ պետության պաշտպանության, պետության ու հասարակության անվտանգության ապահովումը; էներգետիկայի, հեռահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, ջերմամատակարարման, քաղաքաշինական, ընդերքի հետախուզման, ընդերքօգտագործման, տրանսպորտի, հաղորդակցության ուղիների կամ բնակավայրերի ենթակառուցվածքների զարգացման բնագավառում համապետական կամ համայնքային կամ միջհամայնքային կարևոր նշանակություն ունեցող ծրագրերի իրականացման ապահովումը; շրջակա միջավայրի պահպանության ապահովումը: ՀՊԿՀՍՕՍ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ «Եթե օտարվում է սեփականության մի մասը, ապա սեփականատերն իրավունք ունի պահանջելու նաև սեփականության չօտարված մասի օտարում հետևյալ դեպքերում՝ 1) գույքի չօգտագործվող մասը սեփականատիրոջ համար կորցնում է տնտեսական կամ գործառության այն նշանակությունը, որն ուներ մինչև օտարվող մասի առանձնացվելը՝ անկախ սեփականության օտարվող և չօտարվող մասերի համամասնությունից. 2) գույքի չօտարվող մասը օտարվող մասի համեմատությամբ աննշան է: Չօտարված մասն օտարելու պահանջ սեփականատերը կարող է ներկայացնել բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին կառավարության որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկամսյա ժամկետում:»:

93. «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքն ընդունվել է 2005թ.-ին: Սույն օրենքը սահմանում է անշարժ գույքի գնահատման գործունեության իրականացման հիմունքները և կանոնակարգում անշարժ գույքի գնահատման գործունեության հետ կապված հարաբերությունները: Համաձայն «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի անշարժ գույքի գնահատման գործունեությունը ենթակա է

լիցենզավորման: Օրենքի 6-րդ հոդվածը սահմանում է անշարժ գույքի գնահատման օբյեկտները: Համաձայն օրենքի 8-րդ հոդվածի՝ անշարժ գույքի գնահատումը պարտադիր է՝

- պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի օտարման դեպքերում, բացառությամբ պետական գույքի մասնավորեցման և պետական կամ համայնքային հողերի օտարման դեպքերի.
- անշարժ գույքը պետության կամ համայնքների կարիքների համար ձեռք բերելու (վերցնելու) դեպքերում.
- անշարժ գույքն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում կամ հիմնադրամներում ներդնելու դեպքերում.
- անշարժ գույքի բռնագանձման հետևանքով իրացման դեպքերում.
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

6.2 Հայաստանի օրենքների և Համաշխարհային Բանկի Պարտադրված Վերաբնակեցման Քաղաքականության համեմատությունը

Աղյուսակ 15՝ ՀՀ օրենքների և ՀԲ-ի ԳՁ 4.12 Հարկադիր վերաբնակեցում համեմատությունը

Համեմատվող կատեգորիան	ՀՀ օրենքներ և իրավական ակտեր	Համաշխարհային Բանկի ԳՁ 4.12 Հարկադիր վերաբնակեցում	Կիրառելի փաստաթուղթը
Փոխհատուցման ենթակա ազդեցություն	Միայն գրացված գույքային իրավունքներն են ենթակա փոխհատուցման	(a) Հողամասի հարկադիր օտարումը, որը հանգեցնում է՝ (i) տեղափոխում կամ կացարանի կորստ. (ii) ակտիվների կամ դեպի ակտիվներ մուտքի կորստ. (iii) եկամուտների աղբյուրների կամ ապրուստի միջոցների կորուստ՝ անկախ նրանից, թե ազդակիր անձինք պետք է տեղափոխվեն մեկ այլ վայր, թե ոչ. կամ (b) օրինական ճանապարհով սահմանված այգիների և պահպանվող տարածքների մուտքի հարկադիր սահմանափակում, որը բացասաբար է ազդում տեղահանված անձանց ապրուստի վրա:	ԳՁ 4.12
Հողամասի համար փոխհատուցում ստանալու իրավունքը	Միայն գրանցված գույքային իրավունքների սեփականատերերն են իրավասու ստանալու հողամասի դիմաց փոխհատուցում	Օրինական սեփականատերերը և օրինականացման ենթակա ԱԵԱ-երը ստանում են փոխհատուցում կորցրած հողամասի համար: Օրինականացման ոչ ենթակա ԱԵԱ-երին տրամադրվում է վերաբնակեցման աջակցություն՝ իրենց կողմից զբաղեցված հողամասի փոխհատուցման փոխարեն:	ԳՁ 4.12
Հողամասից զատ այլ ակտիվների կորստի համար փոխհատուցում ստանալու իրավունքը	Միայն գրանցված գույքային իրավունքների սեփականատերերն են իրավասու ստանալու հողամասից զատ այլ ակտիվների կորստի դիմաց փոխհատուցում	Օրինական սեփականատերերին, Օրինականացման ենթակա ԱԵԱ-երին և Օրինականացման ոչ ենթակա ԱԵԱ-երին տրամադրվում է հողամասից զատ այլ ակտիվների կորստի դիմաց փոխհատուցում	ԳՁ 4.12

Համեմատվող կատեգորիան	ՀՀ օրենքներ և իրավական ակտեր	Համաշխարհային բանկի ԳՁ 4.12 Հարկադիր վերաբնակեցում	Կիրառելի փաստաթուղթը
Մշակաբույսի կորստի համար փոխհատուցում ստանալու իրավունքը	Չի սահմանում որևէ փոխհատուցում մշակաբույսի կորստի համար:	Օրինական սեփականատերերին, Օրինականացման ենթակա ԱԵԱ-երին և Օրինականացման ոչ ենթակա ԱԵԱ-երին տրամադրվում է մշակաբույսի կորստի դիմաց փոխհատուցում	ԳՁ 4.12
Ակտիվների գնահատման մեթոդաբանություն (հողամաս)	Հողամասի գնահատում շուկայական արժեքով գումարած գնահատված արժեքի 15% (ի լրումն գրանցման և փոխանցման ծախսերի)	Գյուղատնտեսական հողի համար դա մինչ ծրագրի կամ մինչ տեղահանման մեկնարկը (որը ավելի բարձր է) հավասար արտադրական ներուժով կամ օգտակարությամբ այդ հողի մերձակայքում գտնվող հողի շուկայական արժեքն է, գումարած այն ծախսերը, որոնք անհրաժեշտ են հողամասն ազդակիր հողամասի մակարդակին հասցնելու համար, գումարած գրանցման և փոխանցման հետ կապված ցանկացած ծախս: Քաղաքային տարածքների հողերի համար դա մինչ տեղահանման մեկնարկը նույն չափի և օգտակարությամբ հողի շուկայական արժեքն է, որը գտնվում է այդ հողի մերձակայքում և ունի նմանատիպ կամ ավելի լավ հասանելիություն դեպի ենթակառուցվածքներ և ծառայություններ, գումարած գրանցման և փոխանցման հետ կապված ցանկացած ծախս:	ԳՁ 4.12
Ակտիվների գնահատման մեթոդաբանություն (տներ և այլ շինություններ)	Անշարժ գույքի գնահատում շուկայական արժեքով գումարած գնահատված արժեքի 15% (ի լրումն գրանցման և փոխանցման ծախսերի)	Տների և այլ շինությունների համար դա շինանյութի շուկայական արժեքն է, որը անհրաժեշտ է նույն կամ ավելի մեծ մակերեսով և որակով փոխարինող շինություն կառուցելու համար, կամ մասամբ վնասված շինությունը վերականգնելու համար, գումարած շինանյութը շինարարական հրապարակ տեղափոխելու ծախսերը, աշխատուժի կամ կապալառուի վարձատրությունը և գրանցման ու փոխանցման հետ կապված ցանկացած ծախսերը:	ԳՁ 4.12
Հանրային քննարկումներ և տեղեկատվության հրապարակում	Ազդեցության չափի, իրավունքների և փոխհատուցման չափի վերաբերյալ տեղեկատվությունը պետք է հրապարակվի ԱԵԱ-երին մինչև բացառիկ՝ գերակա հանրային շահի կամ	Հանրային քննարկումները և տեղեկատվության հրապարակումն իրականացվում է ազդակիր անձանց մասնակցությամբ համայնքային մակարդակի վրա: ՀՔՀՄ մշակվել է և կցվում է սույն ՎԳՊ-ին:	ԳՁ 4.12

Համեմատվող կատեգորիան	ՀՀ օրենքներ և իրավական ակտեր	Համաշխարհային բանկի ԳՁ 4.12 Հարկադիր վերաբնակեցում	Կիրառելի փաստաթուղթը
	նախնական ուսումնասիրության մասին որոշումով սահմանված ժամկետը:		
Եկամուտների մակարդակի վերականգնում	Եկամուտների/դրանց աղբյուրների վերականգնման, ծրագրից խիստ տուժածներին և խոցելի խմբերին օգնության տրամադրման կամ տեղահանման ծախսերի փոխհատուցման հարցերը կարգավորված չեն:	Համաշխարհային բանկը պահանջում է եկամուտների մակարդակի վերականգնում, խիստ ազդեցության և տեղահանման ծախսերի փոխհատուցման համար:	ԳՁ 4.12
ԱԳ սահմաններում բնակավայրերի նշանակության հողերի փոխհատուցում	ՀՀ օրենսդրությունը սահմանում է, որ ՕԳ պետք է տեղակայվի բնակավայրերի հեղերի սահմանից ԱԳ հեռավորության վրա:	ԳՁ 4.12 որևէ կերպ չի կարգավորում այս հարցը:	ՀՀ օրենսդրության պահանջն ապահովելու համար, այն մասերում, որտեղ հնարավոր չէ խուսափել բնակավայրերի հողերի հետ փոխհատուցից, ԲԷՑ-ը կգնի հողամասերը կամ կփոխի ազդակիր հողամասի նշանակությունը գյուղատնտեսական նշանակության և կվճարի փոխհատուցում արժեզրկման համար:

6.3 Օրենսդրական բացերի վերլուծություն

94. ՀՀ օրենսդրական դաշտի և ԳՁ 4.12 (Հարկադիր վերաբնակեցում) -ի հիմնական տարբերությունն այն է, որ ՀՀ օրենսդրությունը փոխհատուցում նախատեսում է հողի և շինությունների գրանցված սեփականության իրավունքների առկայության դեպքում, իսկ ըստ Համաշխարհային բանկի ԳՁ 4.12 (Հարկադիր վերաբնակեցում)-ի՝ փոխհատուցում պետք է տրամադրվի նույնիսկ գրանցված իրավունքների բացակայության դեպքում: Սույն ծրագրի շրջանակներում, ինչպես ներկայացված է վերևի աղյուսակում, որոշ դեպքերում երկու մոտեցումներն էլ կիրառվում են, և մեկ դեպքում տեղական օրենսդրության պահանջը գերակայում է: Դա նշանակում է, որ ԳՁ 4.12 (Հարկադիր վերաբնակեցում) և ՀՀ օրենսդրության պահանջների միջև անհամապատասխանությունների դեպքում կկիրառվի ավելի խիստ պահանջը: Խնդիրներ են առաջանում նաև իրականացման և մոնիտորինգի մասով, քանի որ ՀՀ օրենսդրությունն այս առումով զերծ է հստակությունից և երկիմաստ է: Համաշխարհային բանկի ԳՁ 4.12 (Հարկադիր վերաբնակեցում) -ի կիրառումը զգալիորեն տարբերվում է ՀՀ օրենքի կիրառումից: Այդ տարբերությունը նվազեցնելու համար առաջարկվում է ՎԳԾ պատրաստման համար միջազգային խորհրդատու վարձել, օժանդակել հանրային քննարկումներին, ուսուցողական դասընթացներ կազմակերպել բնապահպանական և սոցիալական անձնակազմի համար և իրականացնել մոնիտորինգ:

7. Իրավունակություն և իրավունքի շրջանակ

7.1 Իրավասություն

95. Ծրագրի շրջանակներում փոխհատուցում և վերաբնակեցման աջակցություն ստացող ԱԵԱ են.
- Բոլոր ԱԵԱ, ովքեր կորցրել են օրինականացված հողատարածքներ կամ ուղղակի մշակվող հողեր, որոնք հնարավոր է սեփականաշնորհել կամ հողեր առանց իրավական կարգավիճակի,
 - Սեփականատերեր և վարձակալներ, որոնք գրանցված չեն,
 - Հողին կցված կառույցների, բույսերի, ծառերի կամ այլ օբյեկտների սեփականատերեր, անկախ հողի հանդեպ իրավունքի իրավական կարգավիճակից,
 - ԱԵԱ, ովքեր կորցրել են բիզնեսը, եկամուտը և աշխատավարձերը, հողի ժամանակավոր կամ մշտական ձեռքբերման հետևանքով:
96. Փոխհատուցման ստացման իրավունքը սահմանափակվում է վերջնաժամկետով՝ 2017 թվականի փետրվարի 04-ը, որը մարդահամարի և վնասների գույքագրման մեկնարկի ամսաթիվն է: Սահմանված վերջնաժամկետից հետո նոր բնակեցում հաստատողները, ակտիվները բարելավողները և նոր գործունեություն սկսողները փոխհատուցում չեն ստանա: Այնուամենայնիվ, ԱԵԱ պատշաճ ձևով կծանուցվեն և իրենցից կպահանջվի լքել գույքը: ԱԵԱ հնարավորություն կունենան ապամոնտաժել ազդակի կառույցները նախքան ծրագրի իրականացումը, բայց նրանք ստիպված չեն լինի իրենց վրա վերցնել ապամոնտաժման բոլոր ծախսերը: Շինանյութը, որը ԱԵԱ ընտրում է կրկին օգտագործելու համար, չի առգրավվի, և վերջիններս չեն ենթարկվի ոչ մի տույժ ու տուգանքի: Մնացած կառույցները կամ չօգտագործված նյութերը կապամոնտաժվեն իրականացնող ընկերության կողմից:

7.2 Իրավունքի շրջանակը

97. Հողատարածք, եկամուտ, տուն և այլ կառույցներ կորցրած ԱԵԱ տրամադրվող աջակցությունը կներառի երկարաժամկետ կամ ժամանակավոր հողամասի, շինությունների, մշակաբույսերի և ծառերի կորուստի համար աջակցություններ, տեղահանման նպաստ և բիզնեսի կորստի նպաստ՝ հիմնվելով հարկային հաշվետվության կամ միանվագ վճերների վրա: Մանրամասն իրավունակության շրջանակը՝ ազդեցության բոլոր հնարավոր կատեգորիաներով, ներկայացված է Ծրագրի համար մշակված Վերաբնակեցման քաղաքականության շրջանակում (ՎՔՇ): Ստորև ներկայացվում են գծի միայն այս հատվածի ազդեցությունները:

98. ԱԵԱ կարող են դասակարգվել ստորև նշված խմբերից մեկին.

(ա) Օրինական սեփականատերեր՝ անձինք, ովքեր հողի նկատմամբ ունեն ֆորմալ իրավունք (ներառյալ նախադեպային և ավանդական իրավունքները, որոնք ճանաչվում են երկրի օրենսդրությամբ)։

(բ) Օրինականացման ենթակա ԱԵԱ՝ անձինք, ովքեր մարդահամարի մեկնարկի պահին հողի նկատմամբ ֆորմալ իրավունք չունեն, սակայն ունեն հողի կամ ակտիվի նկատմամբ ՀՀ օրենսդրությամբ ճանաչելի պահանջներ կամ այնպիսի պահանջներ, որոնք դառնում են ճանաչելի ծրագրի շրջանակներում վերաբնակեցման գործողությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ իրավական միջոցառումների իրականացման դեպքում և, որոնք բխում են օրենսդրությունից և ավանդական օգտագործումից։

(գ) Օրինականացման ոչ ենթակա ԱԵԱ՝ անձինք, ովքեր իրենց կողմից զավթած հողի նկատմամբ չունեն ճանաչելի իրավունք կամ պահանջ:

7.2.1 Գյուղատնտեսական նշանակության հող

99. **Օրինական սեփականատերերին (մասնավոր)** կտրամադրվի՝ (i) դրամական փոխհատուցում հողակտորի շուկայական կամ կադաստրային (որը որ ավելի մեծ է) արժեքի չափով գումարած 15 տոկոս հավելավճար: Այն դեպքերում, երբ գոյություն չունի հողերի առքուվաճառքի ակտիվ շուկա, դրամական փոխհատուցումը հաշվարկվում է նույն համայնքի վարչական սահմաններում գտնվող և նույն արժեքով/արտադրողականությամբ նմանատիպ հողակտորի արժեքի հիման վրա, որն ընդունելի է ԱԵԱ համար գումարած 15 տոկոս հավելավճար, կամ (ii) նույն համայնքի վարչական սահմաններում գտնվող և նույն արժեքով/արտադրողականությամբ նմանատիպ հողակտոր, որն ընդունելի է ԱԵԱ համար (Այս տարբերակը փաստացի կիրառելի չէ, քանի որ հողերի վրա ազդեցությունը փոքր է՝ մոտավորապես 120 քմ հող է անհրաժեշտ յուրաքանչյուր հենարանի տեղակայման համար): Այն հողակտորները, որոնք ծրագրի անուղղակի ազդեցության հետևանքով կդառնան անհասանելի կամ մշակման և այլ օգտագործման համար անպիտան, կներառվեն ազդեցության ենթարկված հողակտորների մեջ: Երբ ԱԵԱ (սեփականատերեր, վարձակալներ, բնավարձակալներ) հողակտորի ավելի քան 10 տոկոսը տուժում է, ապա ծրագրի ԱԵԱ կստանա ստորև նշված զգալի վնասների նպաստը (տես 22-րդ էջը): Փոխհատուցումը չի նվազեցվի գործարքի և գրանցման ծախսերով: Օրինականացման ենթակա ԱԵԱ աջակցություն կտրամադրվի ՎԳՊ իրականացման գործընթացի ժամանակ և վերջիններս կստանան ամբողջական փոխհատուցում, հողամասի հանդեպ իրավունքը անշարժ գույքի կադաստրում գրանցելուց հետո: ՀՊԿՀՍՕՍ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն, հողամասի սեփականատերը կարող է դիմել ազդակիր հողամասն ամբողջությամբ գնելու պահանջով բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում (մանրամասների համար տես 6.1 բաժինը):

100. **Վարձակալները** կստանան փոխհատուցում ինչպես օրինական սեփականատեր՝ սեփականության իրավունքը գրանցելուց հետո, կամ կստանան նոր վարձակալություն: Եթե դա հնարավոր չէ (Եթե ՀՀ օրենսդրության համաձայն վարձակալը չի կարող ստանալ սեփականության իրավունք կամ վերջինս հրաժարվում է սեփականության իրավունքից և նախընտրում է ստանալ փոխհատուցումը) ԱԵԱ կստանա փոխհատուցում ազդակիր հողակտորի շուկայական կամ կադաստրային (որը որ ավելի մեծ է) արժեքի չափով:

101. **Օրինականացման ոչ ենթակա ԱԵԱ (տեղափոխման դեպքում)** կփոխհատուցվեն ազդակիր հողի շուկայական կամ կադաստրային արժեքից (որն ավելի բարձր կլինի) որոշակի տոկոսի չափով միանվագ դրամական նպաստով, որը կհաշվարկվի հիմնվելով օգտագործման անցած տարիների վրա՝ 1) < 1 տարի – 5%, 2) < 15 տարի – 14%, 3) < 25 տարի – 20%, 4) 25 տարի և ավելի – 25%: Նրանք նաև իրավունք կունենան ստանալ խոցելիության նպաստ, եթե ընդգրկվեն խոցելի մարդկանց խմբում: Այս մասում Օրինականացման ոչ ենթակա ԱԵԱ-երի տեղափոխման դեպքեր չկան, ինչպես նաև վերջիններս իրավունք ունեն հողից բացի այլ ակտիվների կորստի դիմաց փոխհատուցում ստանալու իրավունք:

7.2.2 Պետական և համայնքային հողեր

102. Պետական և համայնքային/մունիցիպալ հողերը կօտարվեն ՀՀ Հողային օրենսգրքի 66-րդ Հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն, և միայն համայնքների կողմից հողի կատեգորիան «Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների» կատեգորիայի փոխելուց հետո: ՀՀ հողային օրենսգրքի 66 հոդվածի 2 մասի համաձայն, հողերը կօտարվեն «Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների» կատեգորիայի հողերի կադաստրային արժեքով: Պետական և համայնքային հողերի կատեգորիաները փոխելու հետ կապված ծախսերը կվճարվեն ԲԷՑ կողմից:

103. Եթե ԱԵԱ-ն օգտագործում է համայնքային/պետական հողամաս, ապա վերջինս դասակարգվում է որպես վարձակալ կամ ապօրինի օգտագործող և փոխհատուցվում է համապատասխանաբար: Դրանից հետո միայն հողամասը կարող է օտարվել սույն դրույթին համապատասխան:

7.2.3 Այլ փոխհատուցումներ և դրամական օժանդակություն

104. **Մշակաբույսեր՝** փոխհատուցումը հաշվարկվում է մեկ տարվա համախառն բերքի շուկայական արժեքի չափով: Մշակաբույսերի դիմաց փոխհատուցումը վճարվում է ինչպես հողի սեփականատերերին, այնպես էլ վարձակալներին՝ հաշվի առնելով երկուսի միջև վարձակալության հետ կապված հատուկ համաձայնագիրը: Անօրինական հողօգտագործողները նույնպես իրավունք ունեն ստանալ մշակաբույսերի համար փոխհատուցում, համաձայն ԳՁ 4.12 (Հարկադիր վերաբնակեցում), նույն պայմաններով ինչ որ վարձակալները:

105. **Ծառեր՝** Դրամական փոխհատուցում շուկայական գներով՝ կախված ծառերի տեսակից, տարիքից և բերքատվությունից: Այլ ընդունելի վայրում երկու անգամ ավելի մեծ թվով տնկիների տնկում՝ պետական կամ համայնային ծառերի դեպքում:

106. **Դրամական աջակցություն ՎԳՊ իրականացման հետ կապված փաստաթղթերի վճարների փոխհատուցման համար՝** ԱԵԱ կստանան հետևյալ ֆինանսական աջակցությունը՝ (ա) լիազորագրի համար ծախսեր/տուրքեր (տրամադրված արտերկրից/ՀՀ տարածքում), (բ) անձնագրի (նույնականացման քարտի) վերանայման հետ կապված ծախսերը/տուրքերը, այն դեպքում, երբ ժամկետը լրացել է, (գ) ժառանգության ճանաչման հետ կապված ծախսերը/տուրքերը, (դ) գործարքային հարկերի ծախսերը և հողի ձեռքբերման հետ կապված տուրքերը կվճարվեն Ծրագրի կողմից, որպես փոխհատուցման մաս:

107. **Խոցելիության նպաստ՝** Սոցիալապես խոցելի խմբերին (աղքատության շեմից ներքև և այրիների կամ տարեցների գլխավորությամբ տնային տնտեսությունները) կտրամադրվի խոցելիության նպաստ, որը հավասար է նվազագույն աշխատավարձի՝ 55000 ՀՀ դրամ (ՀՀ օրենսդրությամբ սահմանված) վեցապատիկին և նախապատվություն ծրագրի իրականացման հետ կապված թափուր աշխատատեղերի համալրման ժամանակ:

108. **Խոցելի SS են համարվում՝**

- Աղքատ տնային տնտեսությունները, որոնք գրանցված են ՀՀ ԱՍՀՆ Ընտանեկան Նպաստների Համակարգում և ստանում են համապատասխան դրամական նպաստ՝ սահմանված ՀՀ օրենսդրությամբ:
- Միայնակ, այրի կամ ընտանիքի կերակրողին կորցրած կանանցից բաղկացած տնտեսությունները, որտեղ բացի թոշակառուից, ՀՀ զինված ուժերում ծառայողից, 1-ին և 2-րդ կարգի հաշմանդամից կամ մինչև 23 տարեկան առկա համակարգում սովորող ուսանողից բացի ուրիշ աշխատունակ տարիքի անձ չկա:
- Թոշակառուներից բաղկացած տնտեսությունները, որտեղ թոշակառուից, ՀՀ զինված ուժերում ծառայողից, 1-ին և 2-րդ կարգի հաշմանդամից կամ մինչև 23 տարեկան առկա համակարգում սովորող ուսանողից բացի ուրիշ աշխատունակ տարիքի անձ չկա:

7.3 Իրավունքի մատրիցա

109. Ստորև ներկայացված է Ծրագրի իրավունակության մատրիցան: Այն արտացոլում է իրավունքները, որոնք սահմանվել են գծի այս հատվածի համար:

Աղյուսակ 16 ՎԳՊ իրավունքի մատրիցա

ԱԵԱ կատեգորիան	Ազդեցության կատեգորիան	Փոխհատուցում
Օրինական սեփականատերեր	Գյուղատնտեսական նշանակության հող	(i) կանխիկ շուկայական կամ կադաստրային (որն ավելի մեծ է) արժեքի չափով գումարած 15% դրամական աջակցություն: Այն դեպքերում, երբ գոյություն չունի հողերի առքուվաճառքի ակտիվ շուկա, ապա դրամական փոխհատուցումը հաշվարկվում է նույն գյուղում գտնվող նմանատիպ հողակտորի արժեքի հիման վրա, որն ընդունելի է ԱԵԱ-ց համար՝ գումարած 15% դրամական աջակցություն, կամ (ii) նույն գյուղում գտնվող և նույն արժեքով/ արտադրողականությամբ նմանատիպ հողակտորով փոխարինում՝ որն ընդունելի է ԱԵԱ-ի համար: Փոխհատուցումն ազատված է գործարքային պահումներից և գրանցման ծախսերից:
Վարձակալներ	Հողատարածք	Կստանան փոխհատուցում ինչպես օրինական սեփականատեր՝ սեփականության իրավունքը գրանցելուց հետո, կամ կստանան նոր վարձակալություն: Եթե դա հնարավոր չէ (Եթե ՀՀ օրենսդրության համաձայն վարձակալը չի կարող ստանալ սեփականության իրավունք կամ վերջինս հրաժարվում է սեփականության իրավունքից և նախընտրում է ստանալ փոխհատուցումը) ԱԵԱ կստանա փոխհատուցում ազդակի հողակտորի շուկայական կամ կադաստրային (որը որ ավելի մեծ է) արժեքի չափով:
Օրինականացման ոչ ենթակա ԱԵԱ	Հող (տեղափոխման դեպքում)	Կփոխհատուցվեն ազդակի հողի շուկայական կամ կադաստրային արժեքից (որն ավելի բարձր կլինի) որոշակի տոկոսի չափով միանվագ դրամական նպաստով, որը կհաշվարկվի հիմնվելով օգտագործման անցած տարիների վրա՝ 1) < 1 տարի – 5%, 2) < 15 տարի – 14%, 3) < 25 տարի – 20%, 4) 25 տարի և ավել – 25%: Նրանք նաև իրավունք կունենան ստանալ խոցելիության նպաստ, եթե ընդգրկվեն խոցելի մարդկանց խմբում: Այս մասում Օրինականացման ոչ ենթակա ԱԵԱ-երի տեղափոխման դեպքեր չկան:
Բոլոր տիպի ԱԵԱ, անկախ իրավական կարգավիճակից	Մշակաբույսեր	Կորցրած բերքի դիմաց կանխիկ փոխհատուցումը հաշվարկվում է մեկ տարվա համախառն բերքի շուկայական արժեքի չափով: Մշակաբույսերի դիմաց փոխհատուցումը վճարվում է ինչպես հողի սեփականատերերին, այնպես էլ վարձակալներին՝ հաշվի առնելով երկուսի միջև վարձակալության հետ կապված հատուկ համաձայնագիրը: Անօրինական հողօգտագործողները նույնպես իրավունք ունեն ստանալ մշակաբույսերի համար փոխհատուցում, համաձայն ՀՔ 4.12 (Հարկադիր վերաբնակեցում), նույն պայմաններով ինչ որ վարձակալները:
Բոլոր տիպի ԱԵԱ, անկախ իրավական կարգավիճակից	Ծառեր	Դրամական փոխհատուցում շուկայական գներով՝ կախված ծառերի տեսակից, տարիքից և բերքատվությունից: Այլ ընդունելի վայրում երկու անգամ ավելի մեծ թվով տնկիների տնկում՝ պետական կամ համայնային ծառերի դեպքում:
Բոլոր տիպի ԱԵԱ, անկախ նրանց իրավական կարգավիճակից	Ցանկացած գույք և կառուցվածքներ	ԱԵԱ կստանան հետևյալ ֆինանսական աջակցությունը՝ (ա) լիազորագրի համար ծախսեր/տուրքեր (տրամադրված արտերկրից/ՀՀ տարածքում), (բ) անձնագրի (նույնականացման քարտի) վերանայման հետ կապված ծախսերը/տուրքերը, այն դեպքում, երբ ժամկետը լրացել է, (գ) ժառանգության ճանաչման հետ կապված ծախսերը/տուրքերը, (դ) գործարքային հարկերի ծախսերը և հողի ձեռքբերման հետ կապված տուրքերը կվճարվեն Ծրագրի կողմից, որպես փոխհատուցման մաս:
Պետական/ համայնքային/ քաղաքային	Հողատարածք	Պետական և համայնքային/մունիցիպալ հողերը կօտարվեն «Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների» կատեգորիայի հողերի կադաստրային արժեքով: Պետական և համայնքային հողերի կատեգորիաները փոխելու հետ կապված ծախսերը կվճարվեն ԲԷՑ կողմից:
Զգալի կորուստների դրամական աջակցություն	Զգալի ազդեցության ենթարկված ԱԵԱ	Այն ԱԵԱ, ովքեր կորցրել են գյուղատնտեսական հողի ավելի քան 10%-ը (սեփականատերեր, վարձակալներ) կստանան Զգալի վնասների նպաստ գյուղատնտեսական եկամտի կորստի համար, որը հավասար է կորցրած հողամասի մեկ տարվա համախառն բերքի շուկայական արժեքին: Գնահատումը կիրականացվի լիցենզավորված կազմակերպության կողմից գյուղատնտեսական հողամասի գույքագրման և չափագրման տվյալների հիման վրա:
Փոխհատուցում սոցեյլի SS-ների համար	Ցանկացած գույք	Սոցիալապես խոցելի խմբերին (աղքատության շեմից ներքև և այրիների կամ տարեցների գլխավորությամբ տնային տնտեսությունները) կտրամադրվի խոցելիության նպաստ, որը հավասար է նվազագույն աշխատավարձի՝ 55000 ՀՀ դրամ (ՀՀ օրենսդրությամբ սահմանված) վեցապատիկին և նախապատվություն ծրագրի

ԱԵԱ կատեգորիան	Ազդեցության կատեգորիան	Փոխհատուցում
		իրականացման հետ կապված թափուր աշխատատեղերի համալրման ժամանակ:

7.4 Վնասված գույքի գնահատում

110. ՎԳՊ իրականացման ընթացքում Գամ Արակը ընդգրկել է իրագել և տեղեկացված/լիցենզավորված գնահատող, ով պատասխանատու է ազդեցության ենթարկված գույքի փոխարինման արժեքն որոշելու համար: Գնահատման գործընթացի ընթացքում ԱԵԱ, ՏԻՄ և համապատասխան պետական գրասենյակներին (օրինակ ՀՀ Կառավարությանն առընթեր ԱԳԿՊԿ) խորհրդատվություն է տրամադրվել: Գնահատումն իրականացվել է գնահատմանը վերաբերող ՀՀ օրենսդրության համապատասխան, ինչպես նաև ըստ Ծրագրի ՎՔՇ պահանջների: Որտեղ ներպետական օրենքը չի համապատասխանել փոխարինման ամբողջ արժեքով փոխհատուցելու ստանդարտին, կիրառվել են փոխարինման արժեքի փոխհատուցման ՀԲ քաղաքականությունը, ուղեցույցները և տեխնիկական պահանջները: Հավելված 6-ում ներկայացված են Գնահատող ընկերության կողմից կիրառված միավոր գների գնահատման մանրամասն մեթոդաբանությունը այս ՎԳՊ-ի համար:

111. ԱԵԱ վճարման ենթակա փոխարինման արժեքը որոշելիս գույքի մաշվածությունը և պիտանի նյութերի արժեքը հաշվի չի առնվել, ոչ էլ ազդակիր գույքի գնահատումից հանված ծրագրից ստացվելիք շահույթների արժեքը:

112. Ինչ վերաբերում է մասնավոր հողերին՝ փոխարինման արժեքը (հողի համար շուկայական գինը՝ գումարած ցանկացած գրանցման տուրքերը կամ հարկերը) որոշվել է՝ հիմնվելով համեմատության մեթոդի վրա, ըստ ՀՀ գնահատման ստանդարտների: Երբ հողի շուկայական գինը ավելի ցածր էր, քան կադաստրային արժեքը, կադաստրային արժեքը պետք է հիմք հանդիսանա փոխհատուցման համար: Այնուամենայնիվ, այսպիսի դեպքեր այս ՎԳՊ չեն եղել:

113. Հողում առկա մշակաբույսերը գնահատվել են մեկ տարվա բերքի շուկայական արժեքով: Ազդակիր հասուն ծառերը գնահատվել են հիմնվելով իրենց տարեկա բերքատվության, շուկայական գնի (յուր. 1կգ համար) և պտղաբերության տարիքի հասնելու համար տարիների քանակի վրա: Մատղաշ ծառերը գնահատվել են յուրաքանչյուր տնկիի շուկայական գնով:

Անշարժ գույքի գնահատումից հետո գնահատողը պատրաստում է գնահատման հաշվետվություն: Օրենքով սահմանվում է հաշվետվության պարտադիր տարրերը՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականությունը և այլ իրավունքները, դրա քանակական և որակական նկարագրությունը, անշարժ գույքի գնահատման մեթոդները, նպատակները և անշարժ գույքի գնահատումը, այս կոնկրետ գնահատման գործընթացով կարգավորվող իրավական ակտերի վկայակոչումները, գնահատողի որոշման հիմքերը: Այն դեպքում, եթե ԱԵԱ համաձայն չեն հաշվետվության հետ, նրանք կարող են հարցերը կամ բողոքներն ուղղել անշարժ գույքի կադաստր: Վեճերի դեպքում խնդիրը կարող է լուծվել դատական կարգով:

8. Վերաբնակեցման բյուջեն

8.1 Ներածություն

114. Այս բաժինը նկարագրում է մեթոդաբանությունը, որն ընդունվել է միավոր գները, հողի ձեռքբերման ծախսը և փոխհատուցումը որոշելու համար, որը պետք է վճարվի ԱԵԱ գծի այս Հատվածի պատճառով՝ վերաբնակեցման ազդեցությունների համար: Այս գլխում ներկայացված տարբեր կատեգորայի ԱԵԱ փոխհատուցման վճարումները որոշվել են, համաձայն ՎՔԾ¹³ (փետրվար, 2017թ.) ընդունված սկզբունքների: Փոխհատուցման չափը որոշվել է լիցենզավորված անկախ գնահատողի կողմից՝ օգտագործելով Հավելված 6-ում նկարագրված թափանցիկ մեթոդաբանությունը: Գնահատման մեթոդաբանությունը հիմնված է ՀՀ «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» օրենքի, ՀՀ անշարժ գույքի գնահատման ստանդարտների և ՎՔԾ վրա:

8.2 Աղբյուրների և դրամական միջոցների բաշխում

115. ՎԳՊ իրականացման ծախսերը, ներառյալ փոխհատուցումները և դրամական աջակցությունները, ինչպես նաև չնախատեսված, գրանցման և վարչարարական ծախսերը կֆինանսավորվեն ՀԲ կողմից տրամադրվելիք վարկով: ԲԷՑ այն կստանա ՀՀ կառավարության հետ կնքված ենթավարկային համաձայնագրի շրջանակներում: ԲԷՑ միջոցներ կձեռնարկի ՀՀ Ֆինանսների նախարարությունից գումար ստանալ համար, որն անհրաժեշտ է ՎԳՊ իրականացման համար:

8.3 Փոխհատուցում հողի, մշակաբույսերի, ծառերի և այլ կորուստների դեպքում

8.3.1 Գնահատման և փոխհատուցման հաշվարկային մոտեցումը

116. Համաձայն ՎՔԾ, հողատերերը, վարձակալները, հողօգտագործողները, որոնք ենթակա են օրինականացման, ինչպես նաև չգրանցված հողօգտագործողները իրավասու են ստանալ փոխհատուցում կամ դրամական աջակցություն: Փոխհատուցման/դրամական աջակցության հաշվարկի մանրամասները ներկայացված են հետևյալ աղյուսակում:

Աղյուսակ 17 Փոխհատուցում/ դրամական աջակցություն գյուղատնտեսական և ոչ-գյուղատնտեսական հողերի համար

Գրանցված մասնավոր հողեր Փոխարինման արժեք +15%	Համայնքային կամ պետական հողեր՝ Կադաստրային գին	Օրինականացման ենթակա հողօգտագործող Փոխարինման արժեք+15% (օրինականացումից հետո)
Վարձակալները կստանան փոխհատուցում ինչպես օրինական սեփականատեր՝ սեփականության իրավունքը գրանցելուց հետո, կամ կստանան նոր վարձակալություն: Եթե դա հնարավոր չէ ԱԵԱ		<u>Օրինականացման ոչ ենթակա ԱԵԱ</u> (տեղափոխման դեպքում) կփոխհատուցվեն ազդակիր հողի շուկայական կամ կադաստրային արժեքից (որն ավելի բարձր կլինի) որոշակի տոկոսի չափով միանվագ դրամական նպաստով,

¹³ ՎՔԾ-ն մշակվել և հաստատվել է ՀԲ կողմից 2014 թվականի սեպտեմբերին Հրագրան ջեկից Շինուհայր ենթակայան էլեկտրահաղորդման գծի վերակառուցման ծրագրի համար և այնուհետև, հաշվի առնելով նախկին փորձը և նոր ծրագրի առանձնահատկությունները, վերջինս վերանայվել է և հաստատվել 2017 թվականի փետրվարին՝ Լավար և Նոյեմբերյան 110 կՎ գծերի վերակառուցման ծրագրի համար:

կատանա փոխհատուցում ազդակի հողակտորի շուկայական կամ կադաստրային (որը որ ավելի մեծ է) արժեքի չափով:	որը կհաշվարկվի հիմնվելով օգտագործման անցած տարիների վրա՝ 1) < 1 տարի – 5%, 2) < 15 տարի – 14%, 3) < 25 տարի – 20%, 4) 25 տարի և ավելի – 25%:
--	--

117. Սեփական/վարձակալած հողերի փոխհատուցման հաշվարկման համար հիմք է հանդիսացել հողի շուկայական գինը: Հողի շուկայական արժեքը գնահատվել է՝ օգտագործելով համեմատության գնահատման մեթոդը: Համեմատության մեթոդը¹⁴ հիմնված է նմանատիպ հողերի (առնվազն երեք վաճառքի օրինակներ) վաճառքի վերաբերյալ հուսալի շուկայական տեղեկատվության վրա: Հիմնվելով այս մեթոդի վրա՝ որոշվել է վերջին շրջանում վաճառված հողերի ճշգրտված միջին վաճառքի գինը (նույն տարածքում և նույն/նմանատիպ կիրառման նպատակով/բնույթով: Յուրաքանչյուր հողի գինը որոշվում է առանձին, քանի որ շատ գործոններ են ազդում հողի գնի տարբերության վրա, նույնիսկ ճշգրտված հողատարածքի համար: (Մանրամասն գնահատման մեթոդաբանությունը տես Հավելված 6-ում)¹⁵:

8.3.2 Փոխհատուցում մասնավոր հողատարածքների կորստի համար

118. Փոխհատուցումը, որը պետք է վճարվի մասնավոր հողերի կորստի համար, հաշվարկվել է փոխարինման արժեքով՝ գումարած լրացուցիչ 15%, որը «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի համաձայն է: Փոխհատուցման համար ընդհանուր գումարը (ներառյալ վարձակալված հողերը), ինչպես ներկայացված է աղյուսակ 18 և 19-ում, կազմում է **1 586 635 ՀՀ դրամ**:

Աղյուսակ 18 Փոխհատուցում մասնավոր հողերի կորստի համար*

Հողի սեփականության կարգավիճակ	Մարզ	Հողի կատեգորիան	Ազդակի հող		Միավոր գին (միջին)	Ամբողջ հողի արժեքը	Հողի ընդհանուր փոխհատուցումը (ներառյալ 15%)
			No	մ2	ՀՀ դրամ/ մ2	ՀՀ դրամ	ՀՀ դրամ
Մասնավոր հող	Տավուշ	Գյուղատնտեսական	1	142.6	250	35 650	40 998
	Լոռի	Գյուղատնտեսական	30	3 304.6	270	891 186	1 024 864
	Ընդհանուրը		31	3447.2	-	926 836	1 065 862
Առանց պետական գրանցման հող	Տավուշ	Գյուղատնտեսական	-	-	-	-	-
	Լոռի	Գյուղատնտեսական	13	1,400	262	365 201	419 981
	Ընդհանուրը		13	1400	-	365 201	419 981
Ընդամենը			44	4847.2	-	1 292 037	1 485 843

* Նշում՝ Փոխհատուցումն այս հողերի համար հաշվարկվել է ինչպես մասնավոր հողերի համար, քանի որ այս հողերը տրամադրվել են ԱԵԱ-երին սակայն չեն գրանցվել: Այս հողերը կգրանցվեն իրականացման փուլում կամ կճանաչվեն համայնքային սեփականություն, եթե սեփականատերը չգտնվի:

Աղյուսակ 19 Փոխհատուցում վարձակալության համար

Հողի կատեգորիան	Հողակտոր	Ազդակի մակերես	Միավոր գին	Հողամասի շուկայական արժեքը	Ընդամենը փոխհատուցում
Գյուղատնտեսական	3	369.2	273	100 792	100 792
Ընդամենը	3	369.2	-	100 792	100 792

¹⁴ Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին ՀՀ օրենք, հոդված 11

119. ՀՀ հողային օրենսգրքի 66 հոդվածի 2 մասի համաձայն, հողերը կօտարվեն «Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների» կատեգորիայի հողերի կադաստրային արժեքով: Պետական և համայնքային հողերի ձեռք բերման (ներառյալ հողի արժեքը) հետ կապված ծախսերը կվճարվեն ԲԷՑ կողմից՝ կազմակերպության սեփական միջոցներից:

Աղյուսակ 19.1՝ Համայնքային հողերի ձեռք բերման բյուջեն

n/n	Համայնք	Համայնքային հող		Միավորի գին	Ընդհանուր գին
		Հողակտոր (N)	Մակերես (M2)	ՀՀ դրամ/ m ²	ՀՀ դրամ
1	Այրում (Հաղթանակ)	3	298	144	42 912
2	Ալավերդի	2	112	342	38 304
3	Ճոճկան	9	1 031	222	228 882
4	Մեծ Այրում	5	602	222	133 644
	Ընդամենը	19	2 043	-	443 742

120. Հողերի ձեռք բերման ընդհանուր բյուջեն (ներառյալ վարձակալված և համայնքային հողերը) կազմում է՝ **2 030 377** ՀՀ դրամ:

8.3.3 Փոխհատուցում մշակաբույսերի համար

Մշակաբույսերի համար փոխհատուցումը կվճարվի կանխիկ շուկայական գնով, այսինքն յուրաքանչյուր 1մ² ազդակիր մշակաբույսերի համար նախատեսված գնով: Միավոր գները որոշվել են՝ հիմնվելով 2017թ-ի ընթացքում հիմնական մշակաբույսերի բերքի և գների վրա: Մշակաբույսերի համար ընդհանուր փոխհատուցումը կազմում է **133,998** ՀՀ դրամ (տես աղյուսակ 20.1):

Աղյուսակ 20.1 Փոխհատուցում մշակաբույսերի համար

n/n	Մշակաբույսի տեսակը	Տարեկան բերքատվությունը Kg/մ2	Ազդակիր տարածքը (մ2)	Ընդամենը կորուստ (Kg)	Գինը յուր Kg համար (ՀՀ դրամ)	Գինը յուր մ2 համար (ՀՀ դրամ)	Փոխհատուցումը (ՀՀ դրամ)
1	Wheat (ցորեն)	0.30	1471.8	441.54	180	54,0	79 477
2	Barley (գարի)	0.28	266.1	74.508	178.57	50,0	13 305
3	Corn (Եգիպտացորեն)	0.60	94.1	56.46	730	438,0	41 216
	Ընդամենը		1832	572.508		-	133 998

8.3.4 Փոխհատուցում ծառերի համար

Այս հատվածում կան ազդեցության ենթարկված տնկիներ և հասուն ծառեր: Տնկիների համար փոխհատուցումը կվճարվի կանխիկ շուկայական գնով, այսինքն 1 տնկիի գնով (տես աղյուսակ 20.2): Հասուն ոչ մրգատու ծառերի համար փոխհատուցումը կվճարվի առձեռն մեկ ծառի համար որոշված գնով յուրաքանչյուր հասուն ոչ մրգատու ծառի համար (տես աղյուսակ 20.3): Հասուն մրգատու ծառերի համար փոխհատուցումը կվճարվի առձեռն՝ հիմնվելով տարեկան բերքի վրա (ծավալը կգ-ով), հաշվելով միավոր գինը յուրաքանչյուր 1կգ բերքի և տարիների քանակի համար, մինչև ծառը դառնա բերքատու (տես աղյուսակ 20.4): Ծառերի համար ընդհանուր փոխհատուցումը կազմում է **1,455,020** ՀՀ դրամ:

Աղյուսակ 20.2 Փոխհատուցում տնկիների համար

Տեսակը	Մածիլների արժեքը	Ծառեր	Ընդհանուր փոխհատուցումը
	ՀՀ դրամ/ծառ	No	ՀՀ դրամ
Pear (տանձենի)	1,500	1	1,500
Peach (դեղձեն)	1,500	1	1,500
Ընդամենը	-	2	3,000

Աղյուսակ 20.3 Փոխհատուցում հասուն ոչ բերքատու ծառերի համար

Տեսակը	Տնկիի շուկայական արժեքը	Ծառի արդյունաբերական բերք տալու տարվան նախորդող տարիների ծախս ՀՀ դրամ					Ազդակի ր ծառեր	Փոխհատուցումը
		1-ին տարի	2-րդ տարի	3-րդ տարի	4-րդ տարի	5-րդ տարի		
		ՀՀ դրամ	ՀՀ դրամ	ՀՀ դրամ	ՀՀ դրամ	ՀՀ դրամ		
Pear (տանձենի)	1 500	1 710	1 450	1 450	1 450	1 450	1	9010
Apple tree (խնձորենի)	1 000	1 710	1 450	1 450	1 450	1 450	1	8510
Ընդամենը	-						2	17 520

Աղյուսակ 20.4. Փոխհատուցում հասուն բերքատու ծառերի համար

n/n	Տեսակը	Տարեկ ան բերք	Միավոր արժեքը	Տարիները բերքատվությ ան մակարդակի վերաձեցնելու համար	Յուր ծառի համար միավոր արժեքը	Ազդակի ր ծառեր	Ընդհանուր փոխհատու ցումը
		կգ	ՀՀ դրամ/կգ	No	ՀՀ դրամ	No	ՀՀ դրամ
1	Ficus (թզենի)	25	800	4	80000	1	80 000
2	Cerasus (բալենի)	20	320	4	25600	1	25 600
3	Mulberry tree (թթենի)	90	420	4	151200	1	151 200
4	Rubus (մոշ)	2	630	3	3780	20	75 600
5	Grape (խաղող)	25	330	4	33000	9	297 000
6	Punica granatum (նռնենի)	10	1030	5	51500	1	51 500
7	Pear (տանձենի)	30	720	6	129600	5	648 000
8	Peach (դեղձենի)	40	330	3	39600	1	39 600
9	Cherry (կեռասենի)	30	550	4	66000	1	66 000
	Ընդամենը	-	-	-	-	40	1 434 500

8.3.5 Զգալի ազդեցության համար դրամական աջակցություն

121. Ըստ ՎՔԾ-ի, SS-ները, որոնք կորցնում են իրենց գյուղատնտեսական հողի ավելի քան 10%, կստանան զգալի ազդեցության համար դրամական աջակցություն գյուղատնտեսական եկամտի կորստի համար, որը համարժեք կլինի կորցրած հողի տարեկան բերքի շուկայական արժեքին: Ծրագրի այս Հատվածում զգալի ազդեցության ենթարկվածներ չկան:

8.3.6 Դրամական աջակցություն խոցելի խմբերին

122. Լրացուցիչ դրամական աջակցություն է նախատեսվել խոցելի խմբերի, մասնավորապես այն տնային տնտեսությունների համար, որտեղ կան կանայք, տարեցներ, ինչպես նաև աղքատ տնային տնտեսությունների համար: Այսպիսի դրամական նպաստները համարժեք են 6 ամսվա նվազագույն աշխատավարձին՝ 55 000 ՀՀ դրամ: Ընդհանուր դրամական նպաստները, որոնք պետք է հատկացվեն 11 խոցելի տնային տնտեսություններին, կազմում է **3 630 000** ՀՀ դրամ (տես աղյուսակ 22): Եթե ՎԳՊ իրականացման ընթացքում SS, որոնք համարվում են աղքատ, մարդահամարի անցկացման ընթացքում կգրանցվեն Ընտանեկան նպաստների համակարգում և կդառնան իրավասու դրամական նպաստ ստանալու համար, նրանք կփոխհատուցվեն չնախատեսված ծախսերից:

Աղյուսակ 22 Դրամական աջակցություն սոցիալապես խոցելի խմբերին

Խոցելիության կարգավիճակը	SS (N)	Աղքատության նպաստ	Ընդամենը
A. Աղքատ SS	5	330 000	1 650 000
B. Կանանց գլխավորությամբ SS	1	330 000	330 000
C. Տարեցների գլխավորությամբ SS	3	330 000	990 000
D. Կրկնակի խոցելիությամբ SS (աղքատ և կանանց գլխավորությամբ)	2	330 000	660 000
Ընդամենը	11		3 630 000

8.4 Գրանցման ծախսերը

123. ՎՔԾ-ի ներքո չեն լինի պահումներ (հանումներ) ԱԵԱ վճարված փոխհատուցումներից, ինչպես նաև բոլոր հարկերը և տուրքերը լիովին կվճարվեն ԲԷՑ կողմից: Ձեռքբերման պայմանագրերի ստորագրման և գույքերի վերագնահատման ընթացքում հարկերը և տուրքերը պետք է վճարվեն, համաձայն ՀՀ օրենքի: Բոլոր տուրքերը տարբեր չափի ֆիկսված գումարներ են՝ կախված հողամասի կատեգորիայից: Հետևյալ հարկերը և տուրքերը պետք է վճարվեն համաձայն ՀՀ օրենսդրության:

- Անշարժ գույքի կադաստրում իրավունքների պետական գրանցման, փոփոխման հետ կապված տուրքեր¹⁶,
- Անշարժ գույքի կադաստրի կողմից վկայականի տրամադրման հետ կապված տուրք¹⁷,
- Անշարժ գույքի¹⁸ գրանցման և անշարժ գույքի օտարման պայմանագրերի¹⁹ համար պետական տուրքեր:

¹⁶ Իրավունքի պետական գրանցում կադաստրում

¹⁷ Նույնը

¹⁸ Պետական տուրքերի վերաբերյալ ակտ.

124. Եթե ձեռքբերման գործընթացի ընթացքում կիրառելի կլինեն որևէ լրացուցիչ ծախսեր գրանցման համար, որը հիմա չի կարող նախատեսված լինել, այն կվճարվի ՎԳՊ բյուջեի չնախատեսված ծախսերից: Լրացուցիչ կանխիկացման գումարը հաշվարկվել է և կավելացվի ՎԳՊ տրվելիք փոխհատուցման/դրամական միջոցների գումարին:

125. ԲԷՑ կաջակցի ԱԵԱ Հայաստանից դուրս գտնվող սեփականատերերի համար նոտարական լիազորագրերի, անձնագրերի վերանայման, ժառանգության բացման հարցում և ԱԵԱ կտրամադրի լրացուցիչ դրամական միջոցներ ՎԳՊ իրականացման գործընթացի ընթացքում: Քանի որ յուրաքանչյուր դեպքը յուրահատուկ է, և պահանջվող վճարները կարող են լինել շատ տարբեր, միջին գումարն է վերցվել, որպես բյուջեի պլանավորման հիմք:

126. Ընդհանուր առմամբ, հողի ձեռքբերման համար գրանցման բյուջեն՝ հողերի ձեռք բերման իրավաբանական ծախսերը, կազմում է **1 477 000** ՀՀ դրամ:

Աղյուսակ 22.1՝ Մասնավոր հողերի ձեռք բերման գրանցման բյուջեն

Փուլ	Վճարումներ	Արժեք (դրամ/հողակտոր)
Հողի անջատում և ձեռք բերում	Անշարժ գույքի կադաստրում իրավունքների պետական գրանցման, փոփոխման հետ կապված տուրքեր (2000x2, 2000 ՀՀ դրամ մեկ հողակտորի համար)*	4 000
	Անշարժ գույքի կադաստրի կողմից վկայականի տրամադրման հետ կապված տուրք	500
	Անշարժ գույքի գրանցման և անշարժ գույքի օտարման պայմանագրերի համար պետական տուրքեր	1 000
	Ընդամենը մեկ հողի համար	5 500
	Ընդամենը մասնավոր և չգրանցված հողեր	44 հատ
	Ընդամենը	242 000

* Երկու վկայական՝ մեկը ԱԵԱ-ի անունով, մյուսը ԲԷՑ-ի

127. Պետական և համայնքային/մունիցիպալ հողերն օտարվում ՀՀ Հողային օրենսգրքի 66-րդ Հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն, և միայն համայնքների կողմից հողի կատեգորիան «Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների» (այսուհետ՝ Էներգետիկ կատեգորիա) կատեգորիայի փոխելուց հետո:

Աղյուսակ 22.2՝ Համայնքային հողերի ձեռք բերման գրանցման բյուջեն

Փուլ	Վճարումներ	Արժեք (դրամ/հողակտոր)
Հողի անջատում	Անշարժ գույքի գրանցման և անշարժ գույքի օտարման պայմանագրերի համար պետական տուրքեր	1 000
	Անշարժ գույքի կադաստրում իրավունքների պետական գրանցման, փոփոխման հետ կապված տուրք	2 000
Կատեգորիայի փոփոխություն	Անշարժ գույքի գրանցման և անշարժ գույքի օտարման պայմանագրերի համար պետական տուրքեր	1 000
	Անշարժ գույքի կադաստրում իրավունքների պետական գրանցման, փոփոխման հետ կապված տուրք	25 000
Ձեռք բերում	Անշարժ գույքի կադաստրի կողմից վկայականի տրամադրման հետ կապված տուրք	10 000

	Անշարժ գույքի գրանցման և անշարժ գույքի օտարման պայմանագրերի համար պետական տուրքեր	1 000
	Անշարժ գույքի կադաստրում իրավունքների պետական գրանցման, փոփոխման հետ կապված տուրք	25 000
	Ընդամենը մեկ հողի համար	65 000
	Ընդամենը մասնավոր և չգրանցված հողեր	19 հատ
	Ընդամենը	1 235 000

8.5 Բյուջեի ամփոփում

128. Այս Հատվածի համար ՎԳՊ-ի իրականացման ընդհանուր ծախսը կազմում է **11 809 993** ՀՀ դրամ, որը համարժեք է **24 553** ԱՄՆ դոլարին, ինչպես ներկայացված է հետևյալ աղյուսակում (Աղյուսակ 23):

Աղյուսակ 23 Բյուջեի ամփոփում

n/n	Միավոր	Գումար	
		ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար*
1	Հողի փոխհատուցում (մասնավոր հողի համար)	1 485 843	3 089
2	Հողի փոխհատուցում (վարձակալություն)	100 792	210
3	Համայնքային հողերի բյուջեն	443 742	923
4	Փոխհատուցում մշակաբույսերի համար	133 998	279
5	Փոխհատուցում ծառերի համար	1 455 020	3 025
6	Խոցելիության դրամական աջակցություն	3 630 000	7 547
7	Գրանցման (իրավաբանական) ծախսեր հողի ձեռքբերման համար (մասնավոր հողեր)	242 000	503
8	Գրանցման (իրավաբանական) ծախսեր հողի ձեռքբերման համար (համայնքային հողեր)	1 235 000	2 568
9	Կանխիկացման ծախս (փոխհատուցման դեպոզիտների 0.3%-ը) տող 1-6	21 748	45
10	Վարչական ծախսեր (20%) տող 1-9	1 749 629	3 637
11	Չնախատեսված ծախսեր (15%) տող 1-9	1 312 221	2 728
	Ընդամենը	11 809 993	24 553
*Օանուցում՝ ԱՄՆ դոլար փոխարժեք 24.10.2017թ-ի դրությամբ, 1ԱՄՆ դոլար = 481 ՀՀ դրամ			

9. Վերաբնակեցման Գործողությունների պլանի իրականացման գործընթաց

9.1 Ներածություն

129. Այս գլխում նկարագրվում են նախապատրաստական քայլերը, որոնք պետք է ձեռնարկվեն ՎԳՊ իրականացման համար և հետագա գործողությունները երաշխավորելու համար ՎԳՊ հաջող իրականացումը: Այս գլխի վերջում ներկայացված է իրականացման ժամանակացույցը համապատասխան պատասխանատու կազմակերպություններով:

9.2 Վերաբնակեցման Գործողությունների Պլանի նախապատրաստական աշխատանքները

130. ՎԳՊ կազմման ընթացքում ԲԷՑ-ն արդեն հաջող կերպով ավարտին է հասցրել մի քանի առաջադրանքներ: Մինչ այժմ վերջնականացրած հիմնական նախապատրաստական առաջադրանքների առանձնահատկությունները հետևյալն են՝

- Վերջնական մանրամասն նախագծման ավարտում,
- Ազդակիր տարածքներում նախնական ուսումնասիրության վերաբերյալ ՀՀ Կառավարության Որոշման հաստատում,
- ԱԵԱ հետ Հանրային գնարկումներ,
- Վերջնաժամկետի սահմանելն ու հրապարակելը (տես բաժին 1.6),
- Մանրամասն չափագրում, կորուստ կրած ունեցվածքի գույքագրում,
- Մարդահամարի անցկացում
- Գույքին հասցված վնասի գնահատում
- Գույքի նկարագրման արձանագրությունների կազմում և հրապարակում բոլոր ԱԵԱ , ըստ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընթացակարգի,
- Հանրային և պետական նպատակներով (Գերակա հանրային շահ) սեփականության օտարման վերաբերյալ ՀՀ Կառավարության որոշման մշակումը սկսվել է:
- ՎԳՊ կազմում, ներառյալ բյուջեն և իրականացման ժամանակացույցը,
- ՎԳՊ հաստատումը ԲԷՑ կողմից և դրա տրամադրումը ՀԲ հաստատման համար:

9.3 Վերաբնակեցման Գործողությունների Պլանի իրականացման նախապատրաստական աշխատանքները

131. ՎԳՊ իրականացման գործընթացն արագացնելու նպատակով ԲԷՑ արդեն սկսել է որոշ գործողություններ/աշխատանքներ, որպես հիմք և կոնկրետ նախապատրաստական միջոցառումներ ՎԳՊ իրականացման համար:

132. **Բողոքների Կարգավորման Մեխանիզմի հիմնում՝** ԲԿՄ որոշվել և ներկայացվել է ԱԵԱ հանրային քննարկումների ժամանակ: ԲԿՄ վերաբերյալ մանրամասն տեղեկատվությամբ գրքույկներ կտրամադրվեն հանրային լսումների ժամանակ, ինչպես նաև ԲԿՄ վերաբերյալ կոնտակտային տվյալներով քարտեր կբաժանվեն համայնքներում ծրագրի ներկայացուցիչների կողմից համայնք կատարած յուրաքանչյուր այցելության ընթացքում:

133. **ՎԳՊ իրականացնող միավորի հիմնում՝** ՎԳՊ-ն իրականացնող միավորը հիմնվել է ԲԷՑ-ում (մանրամասները ներկայացված են Բաժին 5.2.3-ում):

134. **Առանց պետական գրանցման հողերի գրանցում՝** ԲԷՑ արդեն սկսել է անշարժ գույքի կադաստրի և ՏԻՄ հետ աշխատել չօգտագործված հողերի սեփականատերերին հայտնաբերելու համար (առանց պետական գրանցման հողերի վերաբերյալ մանրամասները ներկայացված են սույն ՎԳՊ Ազդեցություն Գլխում):

135. **Առևտրային Բանկերի որոշում և համաձայնագրեր՝** ըստ ՀԲ ԳԶ 4.12. (Հարկադիր վերաբնակեցում), ԱԵԱ պետք է ստանան փոխհատուցում ամբողջական վերականգնման արժեքի չափով, առանց որևէ նվազեցման, ներառյալ կանխիկացված գումարի վճարները: ԲԷՑ սկսել է առևտրային բանկ(եր)ի որոշման գործընթացը, որը կապահովի լավագույն պայմանները ԱԵԱ համար և կգտնվի ազդակիր տարածքի մոտակայքում, եթե հնարավոր է ԱԵԱ համար հաշվեհամարներ բացել և փոխհատուցման գումարներն ու դրամական նպաստները փոխանցել վերջիններիս հաշվին:

136. **ԱԵԱ հետ ձեռքբերման պայմանագրերի և համաձայնագրերի կազմում՝** ԲԷՑ-ը, Իի աջակցությամբ, մշակել է գրանցված հողից և գույքային իրավունքներից բացի այլ ակտիվների դիմաց փոխհատուցման վճարման համաձայնագրի օրինակելի ձևը (Հավելված 4): Գրանցված հողի և գույքային իրավունքների ձեռք բերման համար կօգտագործվի կադաստրի կողմից հաստատված օրինակելի ձևը: Օրինակելի ձևը ներկայացված է Հավելված 7-ում:

137. **ՏԻՄ ներկայացուցչի և ԲԿԶ անդամների ուսուցում՝** Տեղական մակարդակով բոլոր ազդակիր համայնքներում ԲԷՑ կկազմակերպի ուսուցում ՏԻՄ-ի ներկայացուցիչների համար, ովքեր ներգրավված կլինեն ԲԿԶ մեջ: Ուսուցումը կանցկացվի ՎԳՊ նախագծի հրապարակման ժամանակ և ամբողջությամբ կավարտվի մինչև ՎԳՊ վերջնական հաստատումն ու իրականացումը: ԲԿԶ անդամները կուսուցանվեն Երևանում նախքան ՎԳՊ իրականացումն սկսելը:

9.4 Վերաբնակեցման Գործողությունների պլանի իրականացման կարևորագույն փուլերը

138. **Արտաքին/անկախ մշտադիտարկման խորհրդատուի վարձում՝** ՀԲ կողմից ՎԳՊ հաստատումից անմիջապես հետո ԲԷՑ կսկսի դրա իրականացումը: Իրականացումը կավարտվի, երբ փոխհատուցումներն ամբողջովին կվճարվեն բոլոր ԱԵԱ-ին և կհաստատվեն արտաքին/անկախ մշտադիտարկման

խորհրդատուի կողմից: ՎԳՊ իրականացման գործընթացը, համաձայն ՎՔՇ, ՀՀ օրենքների և նորմերի, ներկայացված է ստորև:

139. **ՎԳՊ-ի իրականացման համար բյուջեի բաշխում**՝ ՎԳՊ-ի իրականացման բյուջեի միակ աղբյուրը վարկն է: Հենց որ ՎԳՊ հաստատվի, ԲԷՑ հարցում կուղարկի ՀՀ Գառավարություն/Պետական Գանձապետարան վերաբնակեցման գործողություններն իրականացնելու նպատակով գումար տրամադրելու համար: Տեղաբաշխումները կդիտարկվեն եռամսյակային հիմունքներով՝ հիմնվելով ՎԳՊ կողմից նշված բյուջեի պահանջների վրա:

140. **Պայմանագրերի նախագծի ուղարկում**՝ Ըստ ՎՔՇ ԱԵԱ հետ փոխհատուցման շուրջ բանակացությունները կսկսվեն ՎԳՊ իրականացման փուլում, հենց որ ՎԳՊ, ներառյալ փոխհատուցման հաշվարկման մեթոդաբանությունը և համապատասխան բյուջեն հաստատվեն ՀԲ կողմից: Այս փուլում ձեռքբերողը փորձում է բանակցել սեփականատիրոջ և/կամ վարձակալի հետ՝ ուղարկելով պայմանագրի նախագիծ գույքի օտարման վերաբերյալ: ԱԵԱ կարող են տրամադրել իրենց բանկային հաշվեհամարները կամ ներկայացնել իրենց մեկնաբանությունները պայմանագրի նախագծի վերաբերյալ 3 ամսվա ընթացքում:

141. **Հողի հանդեպ իրավունքի պատշաճ գրանցում**՝ սկսած ՎԳՊ կազմման ժամանակահատվածից, այն ԱԵԱ, որոնք չունեն հողի իրավունքի պատշաճ գրանցում, ԲԷՑ կաջակցի վերջիններիս իրավունքն անշարժ գույքի կադաստրում գրանցելու հարցում: Առանց պետական գրանցման հողատարածքները կուսումնասիրվեն պետական կադաստրի կողմից և կգրանցվեն:

142. **Պայմանագրերի և համաձայնագրերի ստորագրում**՝ այն դեպքում, երդ բանակցությունները հաջող են անցում, ԲԷՑ պայմանագիր կստորագրի ԱԵԱ հետ օրինական գույքերի դիմաց փոխհատուցում կատարելու և առանց նոտարական հաստատման կստորագրի համաձայնագրեր դրամական աջակցություն տրամադրելու համար: Պայմանագրի նախագիծը տարածելուց հետո երեք ամսվա ընթացքում ԲԷՑ պետք է ԱԵԱ հետ ստորագրի գույքի օտարման պայմանագիր:

143. **Ձեռքբերման գործընթաց**՝ պայմանագրի նախագիծն ուղարկելուց հետո 3 ամսվա ընթացքում բանակացությունների ձևափոխման դեպքում ԲԷՑ պետք է մեկ ամսվա ընթացքում գրավադրի փոխհատուցման գումարը ԱԵԱ անունով դատարանի դեպոզիտային հաշվին: Ձեռքբերման ենթակա գույքի փոխհատուցման գումարը կհաշվարկվի (անհրաժեշտության դեպքում կվերահաշվարկվի) մեկ շաբաթ առաջ մինչև գումարը հաշվի վրա փոխանցելը: ԱԵԱ ԲԷՑ կողմից 3 օրացուցային օրվա ընթացքում կծանուցվեն փոխհատուցման գումարը հաշվեհամարին փոխանցելու վերաբերյալ: ԱԵԱ իրավունք ունեն դեպոզիտային հաշվից հանել գումարը 7 օրացուցային օրվա ընթացքում: Այս դեպքում պայմանագիրը կհամարվի ստորագրված: Հակառակ դեպքում, ԲԷՑ կսկսի ձեռքբերման գործընթացը և գործը կուղարկի դատարան: Այսպիսի դեպքում կոնկրետ հողատարածքներում ոչ մի շինարարական աշխատանք չի կարող սկսվել, մինչև դատարանի կողմից որոշման կայացումը, վերջինիս ուժի մեջ մտնելը և սեփականության նկատմամբ ԲԷՑ իրավունքը անշարժ գույքի կադաստրում գրանցելը:

144. **Փոխհատուցումների/դրամական միջոցների վճարում**՝ պայմանագիրը ստորագրելուց հետո 15 օրացուցային օրվա ընթացքում փոխհատուցման գումարը կվճարվի, որը կփոխանցվի ԱԵԱ բանկային հաշվեհամարի վրա: Եթե ԱԵԱ չունի բանկային հաշվեհամար, ապա Ծրագրի շրջանակներում նրա համար կբացվի հաշվեհամար Ծրագրի/ՎԳՊ բյուջեի ծախսերով:

145. **Տեղանքն ազատելը**՝ լրիվ փոխհատուցումը/դրամական աջակցությունն ստանալուց հետո ԱԵԱ կունենան 30 օրացուցային օր գույքը ազատելու համար:

146. **Բացակա ԱԵԱ՝** եթե սեփականատերը Հայաստանում չէ, ապա գործարքը կարող է կատարել ԱԵԱ պաշտոնական ներկայացուցիչը՝ հիմնվելով լիազորագրի վրա: Եթե ոչ մի ներկայացուցիչ չի նշանակված, ապա ունեցվածքը պետք է օրինական ձևով ձեռք բերվի դատական գործընթացի միջոցով, և փոխհատուցումը պետք է փոխանցվի դատարանի դեպոզիտային հաշվին, ինչպես ներկայացված է վերևում: Դատարանը կվճարի այս փոխհատուցումը ցանկացած անձի, ով կհաստատի իր օրինական իրավունքը այն ստանալու համար:

147. **Շինարարական աշխատանքների սկիզբը՝** շինարարական աշխատանքներն սկսելու նպատակով ԲԷՑ չի կարող իր տնօրինության տակ վերցնել ոչ մի հողատարածք առանց ազդակիր հողի սեփականատերերին և նրանց վարձակալներին փոխհատուցման ենթակա ամբողջ վճարումը կատարելու և անշարժ գույքի կադաստրում սեփականության իրավունքը գրանցելու: Ձեռքբերման ենթակա հողատարածքներում շինարարական աշխատանքները կարող են սկսվել միայն դատարանի որոշումն ուժի մեջ մտնելուց և ազդակիր գույքը ԲԷՑ անունով անշարժ գույքի կադաստրում գրանցելուց հետո: Սա պետք է կարգավորվի բողոքների վերաբերյալ հաշվետվությունով՝ կազմված Իրականացմանն Աջակցող Խորհրդատուի և հաստատված ՀԲ կողմից:

148. **Բողոքները կամ առարկությունները** (եթե կան) պետք է կարգավորվեն, ըստ այս ՎԳՊ-ում ընդունված բողոքների կարգավորման գործընթացի: ՎԳՊ-ի շարունակական առաջադրանքները, որպես բողոքների կարգավորում և մշտադիտարկում կշարունակվի շինարարական աշխատանքների իրականացման փուլում, որպեսզի ապահովի ԱԵԱ պահանջներին ժամանակին պատասխանելը և վերաբնակեցման գործընթացի ճշգրիտ իրականացումը:

9.5 Վերաբնակեցման Գործողությունների Պլանի իրականացման ժամանակացույց

149. Հետևյալ ժամանակացույցում ներկայացված ժամկետները պարզորեն ցույց են տալիս ՎԳՊ-ի կազմման, վերջնականացման և իրականացման փուլերը:

Աղյուսակ 24 Վերաբնակեցման Գործողությունների Պլանի իրականացման ժամանակացույց

N	Գործողություն	Պատասխանատու կողմ	Սկիզբ	Վերջ
A	<u>Վերաբնակեցման Գործողությունների Պլանի մշակում (ՎԳՊ)</u>			
1	ՎՔՇ-ի գնահատում	ԻԱԽ	09.01.2017	11.02.2017
2	Վերջնական Նախագծման վերջնականացում	ՇԿ	01.02.2017	14.04.2017
3	Մարդահամարի, գույքագրման հարցաթերթիկների, ՀՔՀՊ-ի և ժամանակացույցի մշակում ՎԳՊ պատրաստելու համար, սա ներառում է կադաստրային տեղեկատվության և հատակագծերի ձեռք բերում և ստուգում	ՇԿ	11.11.2016	11.01.2017
4	ԱԵԱ և Համայնքային ղեկավարների հետ անմիջական խորհրդատվություն և քննարկում	ՇԿ /ԲԷՑ	09.01.2017	31.01.2017
5	Նախնական ուսումնասիրության մասին Կառավարության որոշման ընդունում	ՀՀ կառավարություն	26.01.2017	
6	Չափագրման անցկացում	ՇԿ (լիցենզավորված չափագրողի)	27.02.2017	10.03.2017

N	Գործողություն	Պատասխանատու կողմ	Սկիզբ	Վերջ
		միջոցով)		
7	ԱԵԱ հետ հանրային քննարկումների անցկացում	ՇԿ/ԲԷՑ	22.03.2017	23.03.2017
8	Մարդահամարի և գույքագրման անցկացում	ՇԿ	22.03.2017	21.04.2017
9	Հողի սեփականության իրավունքների ճշտում ու ոչ օրինական հողօգտագործողների հայտնաբերում, հողի օրինականացման հարցում անկախ իրավական խորհրդատուների կողմից աջակցության ցուցաբերում՝ որտեղ անհրաժեշտ է:	ՇԿ /անկախ իրավաբան	22.03.2017	20.10.2017
10	Ազդակիր ակտիվների գնահատում	ՇԿ (լիցենզավորված գնահատողի միջոցով)	01.04.2017	21.04.2017
11	Գույքի նկարագրման արձանագրությունների ստորագրում	ՇԿ	10.04.2017	30.04.2017
12	Կադաստրային տեղեկատվության ուղղում	Կադաստր	06.05.2017	31.08.2017
13	Գերակա հանրային շահ ճանաչելու մասին որոշման ընդունում	ՀՀ կառավարություն	Մինչև 30.11.2017	
14	ՎԳՊ (Մաս 1) մշակում	ՇԿ	17.04.2017	27.04.2017
15	Վերահսկող Խորհրդատուի կողմից վերանայում	ԻԱԽ	27.04.2017	30.04.2017
16	ՀԲ կողմից ՎԳՊ հաստատում	ՀԲ	30.11.2017	
17	Հանրային քննարկում և ՎԳՊ հրապարակում	ՇԿ/ԻԱԽ	01.12.2017	31.12.2017
18	Շահագրգիռ կողմերի մեկնաբանությունների հիման վրա ՎԳՊ վերանայում	ՇԿ/ԻԱԽ	01.01.2018	10.01.2018
19	Աղքատ ՏՏ-երի ցուցակի ճշտում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ	ԲԷՑ	11.08.2017	30.11.2017
20	ՀԲ վերանայում և հաստատում	ՀԲ	31.01.2018	
B	ՎԳՊ իրականացում			
1	Փոխահատուցման վճարներ	ԲԷՑ	31.01.2018	30.04.2018
2	Արտաքին/անկախ մշտադիտարկման խորհրդատուի (ԱՄԽ) վարձում	ԲԷՑ	01.04.2018	20.04.2018
3	Համապատասխանության հաշվետվության կազմում ՎԳՊ համար և տրամադրում ՀԲ	ԱՄԽ	20.04.2018	20.05.2018
4	Համապատասխանության հաշվետվության հաստատում ՀԲ կողմից	ՀԲ	Մինչև 30.06.2018	

10. Մշտադիտարկում

10.1 Ներածություն

150. Վերահսկողության մեխանիզմները նախատեսված են փոխհատուցման և վերաբնակեցման գործողությունները ժամանակին և արդյունավետ իրականացնելու համար: ՎԳՊ իրականացումը ենթակա կլինի ներքին և արտաքին մշտադիտարկման:

10.2 Ներքին մշտադիտարկում

151. Վերաբնակեցման գործողությունները բոլոր բաղադրիչներով պետք է կանոնավոր կերպով վերահսկվեն և մշտադիտարկման ենթարկվեն ԲԷՑ կողմից: Ներքին մշտադիտարկման վերաբերյալ հաշվետվությունները պետք է ներկայացվեն ԲԷՑ կողմից, որի համար ԲԷՑ պայմանագիր է կնքել Գամ Արակի հետ, որը պատասխանատու կլինի ՎԳՊ կազմման և իրականացման մշտադիտարկման վերաբերյալ կանոնավոր հաշվետվությունների մշակման համար, ներառյալ ցանկացած առաջացած բողոք և վերջիններիս կարգավորման ուղին: Բոլոր ներքին հաշվետվությունները պետք է ընդգրկվեն Ծրագրի առաջընթացի հաշվետվության մեջ: Ներքին մշտադիտարկման ցուցիչները կլինեն գործընթացի, անհապաղ եզրակացությունների և արդյունքների հետ կապված ցուցիչները, որոնք թույլ կտան գնահատել ՎԳՊ իրականացման առաջընթացը և աշխատանքային ծրագրի կարգավորումը: Մշտադիտարկման հատուկ չափանիշները կլինեն.

- Տեղեկատվության տարածման և ԱԵԱ հետ ունեցած քննարկումների քանակը
- Ժամանակին ուղարկված նախագծային պայմանագրերի քանակը
- Ժամանակին ստորագրված վերջնական պայմանագրերի/համաձայնագրերի քանակը
- Ժամանակին կատարված վճարումները
- Ժամանակին անշարժ գույքի կադաստրում գրանցված հողերի քանակը
- Ստացված, լուծված, չլուծված բողոքների քանակը

10.3 Արտաքին մշտադիտարկում

152. Այս առաջադրանքը կիրականացվի յուրաքանչյուր ՎԳՊ գործողության իրականացմանը գուգահեռ և կընդգրկի այցելություններ տեղանք և հաղորդակցություն ԱԵԱ հետ: ՎԳՊ կազմման վերջում ՎԳՊ Համապատասխանության հաշվետվությունը պետք է կազմվի արտաքին մշտադիտարկման խորհրդատուի կողմից (վարձված ԲԷՑ-ի կողմից) և պետք է ներկայացվի ՀԲ՝ նշելով, արդյոք փոխհատուցման ծրագիրն իրականացվել է համաձայն ՎՔԾ, այս ՎԳՊ և ՀԲ ԳՁ 4.12 (Հարկադիր վերաբնակեցում) դրույթների, և արդյոք ԱԵԱ գոհ են եղել: ՀԲ կողմից Համապատասխանության հաշվետվության հաստատումը ԲԷՑ համար կլինի նախապայման կապալառուին տրամադրելու համապատասխան հատվածում աշխատանքները սկսելու վերաբերյալ գրություն: Արտաքին մշտադիտարկողի պարտականություններն են՝ գտնել ՎԳՊ դրույթների անհամապատասխանություններ և ապահովել վերջիններիս կարգավորումը՝ հայտնաբերելով և գրառելով անհամապատասխանության խնդիրները և խորհուրդ տալով Պատվիրատուին թե ինչպես գործել նման դեպքերում: Հիմնական գործողություններն են՝ գնահատել և հաշվետվություն ներկայացնել ՎԳՊ առաջընթացի վերաբերյալ; հաստատել, որ համաձայնեցված փոխհատուցման վճարումները լիովին տրամադրվել են ազդակիր անձանց և, որ բողոքարկման մեխանիզմներն իրականացվել են արդյունավետ ձևով:

- Ճշտել, որ մարդահամարն իրականացվել է բոլոր ԱԵԱ համար,

- Որ ՎԳՊ և նախնական վիճակի ուսումնասիրությունը (պատշաճ կերպով) պատրաստվել է, ըստ պահանջի,
- Գույքի գնահատումն իրականացվել է ՎՔՇ դրույթների համաձայն և ՎԳՊ համապատասխան,
- Հետևել, որ վերաբնակեցման գործողություններն իրականացվել են, ինչպես սահմանված է ՎԳՊ-ում,
- Վերանայել բողոքարկման դեպքերը, ներառյալ գնահատումը, թե արդյոք բողոքների կարգավորումն իրականացվել է ըստ ՎԳՊ դրույթների և բավարարում է ԱԵԱ պահանջները,
- Անհրաժեշտության դեպքում, վերաբնակեցման իրականացումը բարելավելու նպատակով, ներկայացնել առաջարկներ ծրագրի ՎՔՇ-ում և այս ՎԳՊ-ում նշված սկզբունքները և նպատակները առավել արդյունավետ իրականացումը երաշխավորելու համար:

Հավելված 1

ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՀԱՐՑԱԹԵՐԹ N _____

1. ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ N _____	2. ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՀՈՂԱԿՏՈՐԻ ԼՈՏ-ԿՈՂ _____
--	---

3. ՆԱԽՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Հարցազրույցի ամսաթիվը		4. Հարցազրուցավարի անուն, ազգանուն	
2. Հարցվողի անուն, ազգանուն		5. Բնակության հասցե	
3. Հեռախոսահամար / <i>նշել ցանկացած կոնտակտային տվյալ</i>		6. Համայնք	

Կազմեցին՝

(կազմակերպություն)

(տնօրեն)

(ստորագրությունը)

(կազմակերպություն)

(տնօրեն)

(ստորագրությունը)

4. ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ (հարցվողի հերթական համարը վերցնել շրջանակի մեջ)

No	1. Անուն, ազգանուն 1. նախ լրացնել բոլոր SS անդամների անուն, ազգանունները սկսած տան գլխավորից, 2. ապա յուրաքանչյուր անդամի մասին տալ 2-7 հարցերը, 3. ապա յուրաքանչյուր անդամի մասին տալ 8-րդ հարցը)	2. Կապը SS գլխավորի հետ 1. Գլխավորը 2. Ամուսին/ կին 3. Աղջիկ/ տղա 4. Հայր/ մայր 5. Քույր/ եղբայր 6. Տատիկ/ պապիկ 7. Փեսա/ հարս 8. Թոռնիկ 9. Սկեսուր/ սկեսրայր 10. Այլ	3. Սեռը	4. Ծննդյան ամսաթիվը (օր/ամիս/ տարի)	5. Էթնիկ պատկանելիությունը 1. Հայ 2. Եզդի 3. Քուրդ 4. Ասորի 5. Այլ /նշել/	6. Ավարտած կրթամակարդակը 1. չունի տարրական 2. տարրական 3. հիմնական 4. միջնակարգ/ ավագ դպրոց 5. միջնակարգ մասնագիտական 6. բարձրագույն (բակալավր կամ մագիստրոս) 7. հետբուհական 98. կիրառելի չէ /մինչև 6 տարեկան/	7. Հաշմանդամության կարգավիճակը 1. I աստիճան 2. II աստիճան 3. III աստիճան 4. Այլ 5. Կիրառելի չէ	8. Զբաղվածություն /Հնարավոր են մի քանի պատասխաններ/ 1. Աշխատող 2. Տարիքային կենսաթոշակառու 3. Աշակերտ 4. Ուսանող (ցերեկային) 5. Հեռակա ուսանող 6. Չի աշխատում և չի փնտրում 7. Գործազուրկ (փնտրում է աշխատանք) 8. Պարտադիր զինծառայող 9. Կիրառելի չէ /մինչև 6 տարեկան և այլ դեպքեր/
			1. Իգական 2. Արական					
1								
2								
3								
4								
5								

5. SS-ի ընդհանուր եկամուտը	Եկամուտի տեսակը (ՀՀ դրամ) Նշել տարեկան եկամուտը (երբ հարցվողը դժվարանում է պատասխանել տարվա համար, հարցնել 1ամսվա համար, ճշել համապատասխան ամիսների քանակը և բազմապատկել)							
	1. Գյուղատնտեսական (արտադրություն և վաճառք)			6. Կրթաթոշակ			11. Աշխատանք արտերկրում	
	2. Անասնապահական (արտադրություն և վաճառք)			7. Տարիքային կենսաթոշակ			12. Այլ	
	3. Վարձու աշխատանք			8. Հաշմանդամության նպաստ				
	4. Ինքնազբաղվածություն			9. Աղքատության ընտանեկան նպաստ			Ընդամենը	
	5. Ձեռնարկատիրական գործունեություն			10. Այլ նպաստ /նշել/				

Հավելված 2

Հրագրանից Շինուհայր միջանցքի էլեկտրահաղորդման վերակառուցման ծրագրի համար հանրային քննարկում և հրապարակման պլան

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԲԷՑ	Բարձրավորտ էլեկտրացանցեր ՓԲԸ
ԿՎ	Կիլովոլտ
ԿՎԺ	Կիլովատտ/ժամ
ՄԺ	Մեգավատտ/ժամ
ԷԲՂՆ	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն
ՀԿ	Հասարակական Կազմակերպություն
ԱԵԱ	Ազդեցության ենթարկված անձ
ՆՄԱ	Նյութական մշակութային արժեքներ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՎԳՊ	Վերաբնակեցման գործողությունների պլան
ՀՎԳՊ	Հակիրճ վերաբնակեցման գործողությունների պլան
ԱԳ	Անվտանգության Գոտի
ՎՔՀ	Վերաբնակեցման քաղաքականության հայեցակարգը
ՏԱ	Տեխնիկական Առաջադրանք
ՀԲ	Համաշխարհային Բանկ

1. Նկարագրություն

Համաձայն Համաշխարհային Բանկի ԳՁ 4.12 ուղեցույցների, ԱԵԱ պետք է լիովին խորհրդատվություն տրամադրվի և հնարավորություն տրվի մասնակցելու ՎԳՊ-ն պատրաստելու և իրականացնելու բոլոր փուլերին: Նույն սկզբունքով, ԱԵԱ պետք է պատշաճ կերպով և ժամանակին տեղեկացվի պլանավորման գործընթացի արդյունքների, ինչպես նաև ՎԳՊ-ի իրականացման ժամանակացույցի և գործընթացների վերաբերյալ:

Հանրային տեղեկատվական և խորհրդատվական քարոզարշավները պետք է կատարվեն ԲԷՑ կողմից ՎԳՊ իրականացման գործընթացի բոլոր փուլերի ընթացքում, որը պետք է կատարվի ծրագրի շինարարական կապալառուի՝ Գամ Արակ ընկերության վերաբնակեցման և սոցիալական հարցերով խմբի աջակցությամբ: Ազդեցության ենթարկված կողմերին հնարավորություն կտրվի ներկայացնել իրենց գաղափարները և առաջարկությունները, որպես ներդրում վերաբնակեցման գործողությունների պլանավորման և իրականացման մեջ: Այս հարցով հետաքրքրված տարբեր հասարակական կազմակերպություններ ԲԷՑ կողմից ակտիվորեն կընդգրկվեն հանրային քննարկումների և տեղեկատվության հրապարակման մեջ:

Հանրային քննարկումների և հրապարակումների պլանը (ՀՔՀՊ) նախատեսված է հանրային քննարկումների (ՀՔ) կիրառելի գործընթացներ, մեխանիզմներ և սկզբունքներ, ինչպես նաև տեղեկատվության հրապարակումներ մշակելու համար:

2. Հանրային քննարկումներ

Ա. Ոչ պաշտոնական հանրային քննարկումներ

ՎԳՊ կազմման գործընթացի ժամանակ ԱԵԱ-ի ներկայացուցիչների և տեղական ինքնակառավարման մարմինների հետ չափման, գույքագրման և մարդահամարի ընթացքում և դրանցից առաջ ոչ պաշտոնական լուումներ կիրականացվեն գույքագրող և գնահատող ընկերության կողմից: ԱԵԱ կտեղեկացվեն վերաբնակեցման վերաբերյալ կապված տեղազննման և ժամանակացույցի հետ:

Բ. Վերջնաժամկետի վերաբերյալ հայտարարություն

Վերջնաժամկետի վերաբերյալ ԱԵԱ կտեղեկացվեն տեղազննումն սկսելուց մեկ շաբաթ առաջ: Հայտարարությունը կփակցվի Տեղական Ինքնակառավարման Մարմինների (ՏԻՄ) գրասենյակում (Հավելված 1):

Գ. ՎԳՊ-ի կազմման ընթացքում պաշտոնական հանրային քննարկումներ

ԱԵԱ հետ փոխհատուցման, վերաբնակեցման և տեղեկատվության հրապարակման մասին հանրային քննարկումները կապահովվեն ՀՀ կառավարության կողմից նախնական ուսումնասիրության մասին որոշումն ընդունելուց հետո:

Վայրը՝ Բոլոր ազդակիր համայնքներում հանրային քննարկումները կկազմակերպվեն այնպիսի վայրերում, որոնք հասանելի կլինեն ԱԵԱ համար, օրինակ ՏԻՄ գրասենյակում, մշակույթի կենտրոններում, դպրոցներում և այլն: Վայրը կընտրվի և կհամաձայնեցվի ՏԻՄ հետ:

Կազմակերպչական գործողություններ՝ նախքան լուումները մի քանի կազմակերպչական գործողություններ կիրականացվեն, որոնք են՝

- Ազդեցության ենթարկված բոլոր համայնքների ղեկավարները պաշտոնապես կծանուցվեն ՀՔ ամսաթվերի և օրակարգի վերաբերյալ (ներկայացված է Հավելված 4-ում) և վերջիններիս կառաջարկվի աջակցել կազմակերպչական հարցերով (վայր, ԱԵԱ մասնակցություն):
- ԱԵԱ վերջնական ցանկը մինչև լուումները կուղարկվի համայնքների ղեկավարներին ապահովելու ԱԵԱ կամ նրանց ներկայացուցիչների լիարժեք մասնակցությունը: Հատուկ ուշադրություն պետք է դարձվի կանանց և խոցելի խմբերին՝ ապահովելով նրանց ներկայությունը:
- ՀՔ-երի վերաբերյալ հայտարարությունը պետք է հրատարակվի նախքան ՀՔ սկսելը:
 - Հայտարարությունը պետք է հրատարակվի տեղական լրատվամիջոցներում (եթե այդպիսին կա)
 - Հայտարարություն ՏԻՄ գրասենյակում
- Գամ Արակ ընկերության ներկայացուցիչը կգանգահարի ազդեցության ենթարկված տնային տնտեսության յուրաքանչյուր գլխավորին կամ անդամին (եթե հեռախոսահամարներն առկա են) և կհրավիրի նրան, ինչպես նաև ընտանիքի ցանկացած այլ անդամի, ով ցանկանում մասնակցել:
- ՀԿ նույնպես կտեղեկացվեն ՀՔ ժամանակացույցի վերաբերյալ (տարածաշրջանում ակտիվորեն ընդգրկված ՀԿ-ների ցանկը կոնտակտային տվյալներով հանդերձ ներկայացված է Հավելված 2-ում):

ՀՔ փաստաթղթերը՝ Բոլոր հանրային լուումների վերաբերյալ փաստաթղթերը պետք է կազմվեն Կալպատարու ընկերության կողմից և ներկայացվեն ԲԷՑ:

- Հանրային լուսմները պետք է ձայնագրվեն և հանդիպման արձանագրություն պետք է կազմվի:
- Մասնակիցների ցանկը պետք է ներկայացվի, որպես արձանագրության մի մաս:
- ԱԵԱ կողմից բարձրացված խնդիրների, հանդիման ընթացքում պատասխանած հարցերի և անպատասխան մնացած հարցերի ամփոփ նկարագրություն պետք է կազմվի յուրաքանչյուր ՀՔ հետո: Անհրաժեշտության դեպքում գործողության պլան կկազմվի բարձրացված խնդիրները լուծելու համար: Վերջնական որոշումների վերաբերյալ պետք է տեղեկացվեն համայնքները կամ կոնկրետ ԱԵԱ և գրանցվեն:
- ՀՔ ժամանակ պետք է լուսանկարներ արվեն:
- ՎԳՊ մեջ կներկայացվի քննարկումների ամփոփումը: Հանդիպման արձանագրությունը կկցվի ՎԳՊ:

Ներկայացվելու ենթակա տեղեկատվություն՝ ԱԵԱ կտեղեկացվեն ծրագրի, ժամանակացույցի, փոխհատուցման վճարումների, գնահատման մեթոդաբանության և հողի ձեռքբերման գործընթացների վերաբերյալ: Առաջարկված օրակարգը ներկայացված է Հավելված 4-ում: Հանրային տեղեկատվական գրքուկները վերջնաժամկետի, իրավասության չափանիշների և իրավունքների, փոխհատուցման միջոցների, բողոքների կարգավորման մեխանիզմի գործընթացի հետ միասին կտրամադրվեն ազդեցության ենթարկված յուրաքանչյուր տնային տնտեսության (Հավելված 3): Այս նյութերը, ինչպես նաև ՎՔՀ հայերեն պատճենը նույնպես կտրամադրվի ՏԻՄ, այնպես որ բոլոր ԱԵԱ և/կամ համայնքների ղեկավարները կունենան դրանք:

Մասնակիցներ՝ ՀՔ կիրականացվեն ԲԷՑ կողմից, Գամ Արակ ընկերության մասնագետների (սոցիալական հարցերով մասնագետի և ճարտարագետի) աջակցությամբ: Գնահատող կազմակերպության գնահատման հարցերով մասնագետը կներկայացնի Գնահատման Մեթոդաբանությունը:

Դ. ՎԳՊ կազմման և շինարարության ընթացքում ՀՔ

ԱԵԱ հետ լրացուցիչ ոչ պաշտոնական լուսմներ կիրականացվեն ՎԳՊ կազմման փուլում, մասնավորապես ՎԳՊ կազմման մասնագետի/խմբի հետ պայմանագրի ստորագրման ժամանակ: Շինարարական հարցերով կապալառուն բոլոր համայնքներում ՀՔ կկազմակերպի ընդհանուր բնակչության համար նախքան շինարարությունն սկսելը, որպեսզի համայնքների անդամներին տեղեկացնի շինարարության ժամանակացույցի, մոտեցումների, անվտանգության մեխանիզմների և բողոքների կարգավորման մեխանիզմի վերաբերյալ:

3. Վերաբնակեցման հետ կապված փաստաթղթերի հրապարակումը

ՀՔ ժամանակ Գամ Արակ ընկերությունը կբաժանի Ծրագրի վերաբերյալ տեղեկատվական գրքուկներ՝ իրավասության աղյուսակի հետ միասին, որում ծրագրի նկարագրությունը, բողոքների կարգավորման մեխանիզմը, իրավասությունները և փոխհատուցումները, ինչպես նաև հաճախակի տրվող հարցերի պատասխանները կներկայացվեն (Հավելված 3):

ՀՔ ժամանակ ՎՔՀ կհրապարակվի համայնքներում:

ՀԲ կողմից ՎԳՊ հաստատումից հետո պատճենը կհրապարակվի մեկ շաբաթով, որը ժամանակ կտա բոլոր շահագրգիռ կողմերին ներկայացնելու ՎԳՊ վերաբերյալ իրենց մեկնաբանությունները և բողոքները: ՎԳՊ կհրապարակվի՝

- ԱԵԱ համար ՏԻՄ գրասենյակներում
- Պատճենը կհրապարակվի ԲԷՑ կայքում (www.hven.am)

Վերջնական ՎԳՊ հայերենով կիրատարակվի ԲԷՑ և ՀԲ կայքերում: ՎԳՊ հաստատված պատճենը առկա կլինի նաև տարածաշրջանային լիազոր մարմինների գրասենյակներում, ինչպես նաև ազդեցության ենթարկված համայնքների ՏԻՄ գրասենյակներում:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն տեղեկացնում է, որ 110կՎ Լավար և Նոյեմբերյան օղային գծերի փոխարինման ծրագրի շրջանակներում ազդակիր անձանց մարդահամարը և ազդեցության ենթարկված սեփականության գույքագրումը կմեկնարկի **2017թ. մարտի 22-ին**:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ օտարվող սեփականության/գույքի նկարագրության արձանագրությունը կազմելու օրը, իսկ ապօրինի օգտագործման համար **2017թ. մարտի 22-ը** հանդիսանում է մարդահամարի և գույքագրման վերջնաժամկետ, որից հետո սեփականության վրա կատարված բարելավումների դիմաց փոխհատուցում չի տրվելու:

Ազդակիր անձանց մարդահամարը և ազդեցության ենթարկված սեփականության գույքագրումն իրականացնելու է «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ն:

ՀՔՀՊ Հավելված 2

Տարածաշրջանում գործող ՀԿ-ների ցանկ

#	Մարզ	Անուն	Կոնտակտային անձ	Տվյալներ
1	Լոռի	Ալավերդու օրհուս կենտրոն	Անուշ Էվոյան	info_alaverdi@aarhus.am anushevoyan@rambler.ru +374 91 19 93 24 anushevoyan (Skype)
2	Լոռի	Դեբետ ՀԿ	Ռաֆիկ Ղազիսյան	+374 94 79 17 03 +374 94 57 07 57
3	Լոռի	CCMS ՀԿ, Ալավերդի, Ճոճկան մասնաճյուղ	Օլեգ Դուլգարյան Տիգրան Մկրտչյան Ռուզան Վարդումյան	+374 99 93 50 53, +374 0253 2 44 43 ardulgar@gmail.com +374 94 19 88 12 +374 77 27 97 16
4	Լոռի	ՀԿ Կենտրոն, Վանաձոր	Արփինե Հակոբյան	+374 0322 4 33 15 +374 91 64 33 17 ngocenter@ngo.am
5	Լոռի	Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեա /Վանաձորի մասնաճյուղ	Արթուր Սախունց	+374 322 4 22 68 +374 322 4 12 36 asakunts@hcav.am hcav@hcav.am
6	Տավուշ	Դիլիջանի օրհուս կենտրոն	Ալբերտ Հարոյան	+374 94 76 35 94 info_dilijan@aarhus.am albertharoyan@gmail.com
7	Տավուշ	Իջևանի երիտասարդների պլանս ՀԿ	Արարատ Գևորգյան	+374 93 78 10 90 +374 99 00 51 90 araratgm@rambler.ru

ՀՔՀՊ Հավելված 3

ԾՐԱԳՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԳՐՔՈՒՑԿ

110կՎ Լավար և Նոյեմբերյան օդային գծերի փոխարինման ծրագրի փոխհատուցման միջոցառումների տեղեկատվական գրքույկ

Ծրագրի նկարագրությունը

«Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ»-ի կողմից ֆինանսավորվող «Էլեկտրամատակարարման հուսալիություն» ծրագրի շրջանակներում «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն իրականացնում է «Նոյեմբերյան» և «Լավար» 110կՎ բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծերի փոխարինման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր):

Ծրագիրը ներառում է նոր հենարանների մոնտաժում, ներառյալ հիմքերի, գոյություն ունեցող հաղորդալարերի, մեկուսիչների և ենթակառուցվածքների, ինչպես նաև սարքավորումների այլ կարևոր մասերի փոխարինում: Նոր գիծը հիմնականում անցնելու է առկա գծին զուգահեռ 50մ հեռավորության վրա որոշ շեղումներով՝ շեղումներ կպահանջվեն տները, անտառները և այլն շրջանցելու համար:

Այս Ծրագիրը շատ կարևոր քայլ է էլեկտրահաղորդման որակի բարելավման և Հայաստանում էներգահամակարգի անվտանգության բարձրացման համար: Ծրագրից կշահեն ինչպես այս էլեկտրահաղորդման գծով սպասարկվող համայնքները, այնպես էլ ամբողջ երկիրը:

Ծրագրի ազդակիր համայնքներն են՝ Ալավերդի, Մեծ Այրում, Հաղպատ, Նեղոց, Ճոճկան (ՀՀ Լոռու մարզ) և Այրում (ՀՀ Տավուշի մարզ):

Նախագծային աշխատանքների ընթացքում հիմնական նպատակն էր հնարավորիս խուսափել մասնավոր հողերի օգտագործումը: Ինչպես նշվեց, էլեկտրահաղորդման գիծը կանցկացվի հիմնականում գոյություն ունեցող գծին զուգահեռ: Վերջինից շեղումները կատարվել են միայն բնակավայրերը, շենք շինությունները, օգտագործելի մասնավոր հողակտորները և հետագայում նախատեսվող բնակելի տարածքները շրջանցելու նպատակով: Սակայն, որոշ դեպքերում հենարանների տեղադրումը մասնավոր հողերում անխուսափելի է: Այս պատճառով էլ նախատեսվում է համայնքային և մասնավոր որոշ փոքր հողակտորների ձեռքբերում (օտարում)՝ հենարանների հիմքերի համար: Նման դեպքերի համար ձեռքբերողը («Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ) փոխհատուցելու է այդ հողատարածքների ձեռքբերման, և այլ կորուստների (մշակաբույս, ծառ, շինություն և այլն) դիմաց: Որոշ դեպքերում մոտեցման ճանապարհների կամ շինարարական աշխատանքների արդյունքում կարող են վնասվել մշակաբույսեր, ծառեր: Շինարարական աշխատանքների ընթացքում հասցրած ցանկացած վնասի համար ևս նախատեսված է համապատասխան փոխհատուցում:

Փոխհատուցումների հաշվարկման և տրամադրման մոտեցումները և սկզբունքները մշակվել են ՀՀ օրենսդրության և Համաշխարհային բանկի սոցիալական ապահովության քաղաքականությանը համապատասխան և արտացոլված են վերաբնակեցման քաղաքականության շրջանակում: Այդ փաստաթղթի պատճենը հասանելի է տեղական ինքնակառավարման մարմինների գրասենյակներում:

Այս գրքույկի նպատակն է տեղեկացնել ծրագրի ազդակիր անձանց նրանց իրավունքների, բողոքները ներկայացնելու ընթացակարգի, փոխհատուցումների հաշվարկման սկզբունքների, օտարման գործընթացի փուլերի մասին: Գրքույկի վերջում անդրադարձ է արվել մարդկանց կողմից փոխհատուցման գործընթացի վերաբերյալ հաճախակի տրվող հարցերին և Ծրագրի աշխատակազմի կոնտակտային տվյալներին լրացուցիչ տեղեկատվություն ստանալու կամ բողոքներ ու առաջարկներ ուղարկելու համար:

ՈՐՈՆՔ ԵՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՁԵՆՔԲԵՐՄԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ ԷԼԵԿՏՐԱՆԱԴՐՈՂՄԱՆ ԳԾԻ ՀԱՄԱՐ

Ընդհանուր առմամբ Ծրագիրն ազդեցություն չի ունենա ամբողջ հողատարածքի վրա: Էլեկտրահաղորդման գծի շինարարության համար հողատարածքն անհրաժեշտ է հենարանի հիմքի տեղադրման և հենարանին ժամանակավոր մոտեցման համար: Հետագայում հենարանների մոնտաժումը և էլեկտրահաղորդման գծի անցկացումը կարող է ժամանակավոր ազդեցություն ունենալ մշակաբույսերի կամ ծառերի վրա:

Ծրագիրը կունենա հողերի վրա մշտական և ժամանակավոր ազդեցություն:

Մշտական ազդեցության պարագայում, հողի ձեռքբերումն անհրաժեշտ կլինի հենարանների հիմքերի կառուցման համար: Ձեռքբերվող հողերը, ինչպես նաև դրան հարակից այլ վնասները կփոխհատուցվեն ստորև նկարագրված սկզբունքների համապատասխան:

Ժամանակավոր ազդեցություն կարող է լինել հետևյալ դեպքերում՝

- հողի ուսումնասիրման ընթացքում մշակաբույսերը/ծառերը վնասելու դեպքում,
- մուտքի ճանապարհների շինարարության համար մշակաբույսերը/հողատարածքը վնասելու դեպքում,
- գիծն անցկացնելու ժամանակ մշակաբույսերը վնասելու դեպքում:

Ժամականավոր ազդեցության արդյունքում հասցված բոլոր վնասները կփոխհատուցվեն:

ԱԳ-ում հնարավոր է կատարել գյուղատնտեսական աշխատանքներ (բարձրության սահմանափակումով) կամ օգտագործել որպես արտավայրեր, բացառությամբ հենարանի հիմքի տարածքից:

ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Ծրագրի շրջանակներում փոխհատուցմը տրամադրվելու է՝

- բոլոր տնային տնտեսություններին, ովքեր կորցնում են իրենց օրինական (կադաստրում գրանցված), օրինականացման ենթակա (կադաստրում չգրանցված, սակայն գրանցման ենթակա) կամ օգտագործվող հողերը,
- վարձակալներին,
- հողին կցված կառույցների, բույսերի, ծառերի կամ այլ օբյեկտների տերերին:

Փոխհատուցման ենթակա կորուստների համար սահմանվում է վերջնաժամկետ: Վերջնաժամկետը մանրամասն մարդահամարի և կորուստների գույքագրման սկիզբն է: Ծրագրի ազդեցության տակ գտնվող տարածքներում նոր բնակեցումները, բարելավումները կամ գործողությունների սկսումը վերջնաժամկետից հետո ենթակա չեն փոխհատուցման:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՅԸ. ԻՆՉՊԵՄ ԿԱՐԵԼԻ Է ԲՈՂՈՔ ՆԵՐԿԱՑԱՑՆԵԼ

Եթե Դուք, որպես Ազդեցության ենթարկված անձ (ԱԵԱ), ունեք դժգոհություն կամ բողոք ծրագրի իրականացման, փոխհատուցման գործընթացի կամ ցանկացած այլ հարցի վերաբերյալ, ապա ստեղծված բողոքարկման մեխանիզմը հնարավորություն է տալիս արտահայտելու Ձեր բողոքը/դժգոհությունը: Բողոքարկման մեխանիզմը սահմանված է այս Ծրագրի համար և կազմված է երեք հիմնական քայլերից, որի նպատակն է ժամանակին և պատշաճ կերպով լուծել խնդիրները: Փորձ կարվի բոլոր խնդիրները լուծել առաջին քայլի շրջանակում:

Քայլ 1. Բարձրավոլտ էլեկտրացանցերի բողոքարկման հարցերով համակարգող

Առաջին ատյանում Ձեր համայնքի տեղական ինքնակառավարման մարմնի ներկայացուցիչը կընդունի Ձեր բողոք-դիմումները և կփոխանցի դրանք ԲԷՑ-ի բողոքարկման համակարգողին: Դուք կարող եք նաև ուղղակիորեն կապ հաստատել ԲԷՑ-ի բողոքարկման համակարգողի հետ հետևյալ կոնտակտային հեռախոսահամարով և հասցեով:

- N 1 Վարկային բաժնի մասնագետ՝ Վահան Գրիգորյան, ԲԷՑ-ի ներկայացուցիչ, էլ. փոստ՝ projectibrd@hven.am, հեռ.՝ + 374 10 72 02 70:

ԲԷՑ-ի բողոքարկման հարցերով համակարգողը գրավոր կպատասխանի գրանցված բողոքներին ոչ ուշ, քան 15 օրացուցային օրվա ընթացքում:

Քայլ 2. Բողոքների Կարգավորման Հանձնաժողով

Եթե ԲԷՑ-ի բողոքարկման համակարգողը չի կարողանում լուծել խնդիրը կամ Դուք բավարարված չեք խնդրի լուծման առաջարկված տարբերակով, Դուք կարող եք գրավոր բողոք ներկայացնել հատուկ այդ նպատակով ստեղծված բողոքարկման հանձնաժողովին: Այդ բողոքները պետք է ուղարկվեն ԲԷՑ-ի գրասենյակ (հասցեն նշված է «Շտապարձ կապ բաժնում») կամ էլեկտրոնային փոստին: Բողոքը պետք է մակագրել/ուղղել «Էլեկտրամատակարարման հուսալիություն ծրագրի բողոքարկման հանձնաժողովին»:

Քայլ 3. Դատարան

Եթե Ձեզ չի բավարարվում Բողոքարկման Կարգավորման Հանձնաժողովի որոշումը և Դուք ցանկանում եք շարունակել գործընթացը, ապա Դուք կարող եք դիմել դատարան, որի կայացրած որոշումը կլինի վերջնական:

Անկախ ներկայացված բողոքարկման մեխանիզմից և ընթացակարգերից, ԱԵԱ իրավունք ունեն իրենց բողոքները դատարան ներկայացնել ծրագրի իրականացման ցանկացած պահի:

ՓՈՒՆՀԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ՀԱՃԱԽԱԿԻ ՏՐՎՈՂ ՀԱՐՑԵՐ

- ***Որտեղի՞ց ես կարող եմ ձեռք բերել Վերաբնակեցման քաղաքականության շրջանակը և Վերաբնակեցման գործողությունների պլանը:***

Վերաբնակեցման քաղաքականության շրջանակը և վերաբնակեցման գործողությունների պլանը (ՎԳՊ) հասանելի կլինեն Տեղական Ինքնակառավարման մարմինների գրասենյակում: Ինչպես նաև Բարձրավոլտ էլեկտրացանցերի կայքում (www.hven.am): Համապատասխան կոնտակտային անձի մանրամասն տվյալները կարող եք տեսնել Տեղեկատվական Գրքույկի վերջում:

- ***Ինչպե՞ս է վճարվելու փոխհատուցումը:***

Փոխհատուցման վճարումը ՎԳՊ-ի իրականացման կարևորագույն փուլերից մեկն է: Նախատեսված քայլերն են՝

- Ձեզ համար լավագույն պայմաններ ապահովող առևտրային բանկերի ընտրությունը (աշխարհագրական դիրքը և գործարքի արժեքը): Դուք կարող եք նաև գործել իրենց առկա բանկային հաշիվների միջոցով:
- ԱԵԱ հետ հողի օտարման պայմանագրի ստորագրում:
- Փոխհատուցման, նպաստների գումարի փոխանցումը ԱԵԱ հաշվեհամարներին:
- Փոխհատուցումը վճարելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում ԱԵԱ կողմից գույքի ազատում և հանձնում ԲԷՑ-ին:
- Հողի/կառույցի տիրապետումը ԲԷՑ-ի կողմից:

- ***Եթե սեփականատերը մահացած է, ինչպե՞ս է տրամադրվում փոխհատուցումը:***

Եթե սեփականատերն ունի ժառանգներ, ապա փոխհատուցումը կվճարվի նրանց համապատասխան ժառանգության փաստաթղթերը ձևակերպելուց հետո: Եթե ժառանգներ չկան, ապա փոխհատուցումը կփոխանցվի դատարանի դեպոզիտային հաշվին: Խնդրում ենք դիմել նոտարներին կամ իրավաբաններին փաստաթղթերի ձևակերպման գործընթացի վերաբերյալ խորհրդատվություն ստանալու համար:

- ***Հողի ձեռքբերման համար պայմանագիրը ստորագրելու ժամանակ ի՞նչ պետք է ունենամ ինձ հետ:***

Բոլոր անձինք, ովքեր ունեն հողի նկատմամբ սեփականության իրավունք, պետք է ներկայանան Անշարժ գույքի կադաստրի գրասենյակ: Եթե սեփականատերը չի կարող ներկայանալ, ապա պետք է ներկայացվի լիազորագիր մեկ այլ սեփականատիրոջ անունով:

Պետք է տրամադրվեն ստորև նշված փաստաթղթերի բնօրինակները՝

- Անձնագիրը
- Սեփականության վկայականը
- Եթե բացի սեփականատիրոջից կան գույքի նկատմամբ իրավունք ունեցող այլ անձինք, ապա պետք է ներկայացվի գույքային իրավունքի վկայականը (օրինակ՝ վարձակալության վկայականը, գրավի վկայականը)
- Ամուսնության վկայական. ամուսիններից մեկի ներկայությունը պահանջվում է Համաձայնագիրը ստորագրելու համար (անկախ փաստաթուղթը կտրամադրվի նոտարի կողմից) հողի/անշարժ գույքի ձեռքբերման նպատակով կամ պետք է առկա լինի ամուսինների կողմից տրվալիս լիազորագիրը²⁰

- ***Եթե սեփականատերը գտնվում է Հայաստանից դուրս, ինչպե՞ս նա կարող է ստանալ փոխհատուցումը:***

²⁰ Ամուսինները համարվում են համասեփականատերեր, եթե սեփականությունը ձեռք է բերվել համատեղ կյանքի ընթացքում, նույնիսկ եթե նրանցից մեկի անունը նշված չէ սեփականության վկայականում:

Եթե սեփականատերը գտնվում է Հայաստանից դուրս, ապա նա կարող է ուղարկել լիազորագիր այլ անձի անունով, օրինակ՝ իր հարազատի կամ մոտ ընկերոջ, հողի օտարման պայմանագիրը ստորագրելու և փոխհատուցումը ստանալու համար: Կարող էք խորհրդակցել նոտարների կամ իրավաբանների հետ լիազորագրի ձևի վերաբերյալ: Եթե չկնքվի օտարման պայմանագիրը, ապա Ձեր գույքը կօտարվի դատական կարգով, և փոխհատուցումը կփոխանցվի դատարանի դեպոզիտային հաշվեհամարին: Եթե ոչ մի ներկայացուցիչ չի նշանակված, սեփականությունը օրինական ձևով կօտարվի դատական գործընթացի միջոցով, և փոխհատուցումը կփոխանցվի դատարանի դեպոզիտային հաշվին: Հետագայում դատարանը այդ փոխհատուցումը կվճարի ցանկացած անձի, ով կհաստատի իր իրավական հիմքերը այդ գումարը ստանալու համար:

- **Եթե ես չունեմ բանկային հաշիվ, պարտավո՞ր եմ արդյոք փոխհատուցումը ստանալու համար վճարել բանկային հաշվի բացման համար:**

Դուք կարող եք ստանալ փոխհատուցում անմիջապես Ձեր անձնական բանկային հաշվեհամարի վրա: Համոզվեք, որ այդ հաշվեհամարը նշված է հողի օտարման պայմանագրում: Եթե դուք չունեք բանկային հաշվեհամար, ապա Ձեզ համար Ծրագիրը կբացի անվճար հաշվեհամար:

- **Ո՞վ ունի լրացուցիչ անվճար իրավաբանական աջակցության իրավունք՝ Վերաբնակեցման գործողությունների պլանի մշակման և փոխհատուցումների վճարման ընթացքում:**

Խոցելի տնային տնտեսությունները ունեն լրացուցիչ անվճար իրավաբանական խորհրդատվության կամ սոցիալական աշխատողների աջակցության իրավունք:

- **Ո՞վ է համարվում խոցելի տնային տնտեսություն:**

Խոցելի խմբեր են համարվում՝

- Աղքատ տնային տնտեսությունները, որոնք գրանցված են ՀՀ ԱՍՀՆ Ընտանեկան Նպաստների Համակարգում և ստանում են համապատասխան դրամական նպաստ՝ սահմանված ՀՀ օրենսդրությամբ:
 - Միայնակ, այրի կամ ընտանիքի կերակրողին կորցրած կանանցից բաղկացած տնտեսությունները, որտեղ բացի թոշակառուից, ՀՀ զինված ուժերում ծառայողից, 1-ին և 2-րդ կարգի հաշմանդամից կամ մինչև 23 տարեկան առկա համակարգում սովորող ուսանողից բացի ուրիշ աշխատունակ տարիքի անձ չկա:
 - Թոշակառուներից բաղկացած տնտեսությունները, որտեղ թոշակառուից, ՀՀ զինված ուժերում ծառայողից, 1-ին և 2-րդ կարգի հաշմանդամից կամ մինչև 23 տարեկան առկա համակարգում սովորող ուսանողից բացի ուրիշ աշխատունակ տարիքի անձ չկա:
- **Հնարավո՞ր է արդյոք, որ շինարարությունը սկսվի մինչ փոխհատուցումների տրամադրումը:**

Կապալառուն չի սկսելու շինարարություն Ծրագրի հողերի օտարման ազդեցությունների շրջանակում գտնվող որևէ հատվածում, մինչև՝ ա) վերաբնակեցման պլանը ամբողջովին իրականացված է, բ) բոլոր նախատեսված փոխհատուցումները և նպաստները վճարված են, գ) ազդեցության ենթակա տարածքները վերաձևակերպված են, դ) անկախ մոնիտորինգային խորհրդատուի կողմից պատրաստվել է համապատասխանության հաշվետվություն, որը հաստատվել է Համաշխարհային բանկի կողմից:

- **Ի՞նչ կարող է լինել, եթե սեփականատերը հրաժարվում է պայմանագիրը ստորագրելուց:**

Տվյալ դեպքում կսկսվի հարկադիր օտարման գործընթացը: Ծրագրի համար հարկադիր օտարումներ կկիրառվեն միայն բացառիկ դեպքերում, երբ ԱԵԱ և ԲԷՑ-ի միջև բանակցությունները ձախողվեն: ԲԷՑ-ը չի գբաղեցնի անհրաժեշտ հողակտորները մինչև՝

- օրենքով սահմանված պատշաճ դատական գործընթացի նախաձեռնումը,
- դատարանի որոշումը ուժի մեջ է մտել և ԱԵԱ-երը պատշաճ կերպով տեղեկացվել են,
- փոխհատուցման/վերականգնման գումարները փոխանցվել են դատարանի դեպոզիտային հաշվին:

Համաձայն «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի՝ դատական կարգով սեփականության օտարման գործընթացը հետևյալն է՝

- Ձեռքբերողը պետք է ուղարկի սեփականության օտարման պայմանագրի նախագիծը (ներառյալ վերագնահատումը, եթե կա) գույքի սեփականատիրոջը և բոլոր այն անձանց, ովքեր ձեռք բերվող գույքի նկատմամբ ունեն որևէ գույքային իրավունք:
- Եթե օտարման պայմանագրի նախագիծը ուղարկելուց հետո 3 ամսվա ընթացքում չի ստորագրվում օտարման պայմանագիրը, ապա ԲԷՑ-ը կարող է սկսել դատարան դիմելու գործընթացը՝ սեփականության իրավունքի հարկադիր օտարման համար:

- Գործընթացն սկսելու համար ԲԷՑ-ը պետք է դատարանի դեպոզիտային հաշվին փոխանցի փոխհատուցման հաշվարկված արժեքը, որը պետք է վճարվի ԱԵԱ և պետք է ծանուցի այդ մասին սեփականատիրոջը և սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցող անձանց: Եթե ԱԵԱ-ն ստանում է դեպոզիտ հանձնված գումարը, ապա սեփականության օտարման պայմանագիրը համարվում է կնքված:
 - Եթե Օտարման պայմանագիրը չի ստորագրվում փոխհատուցման գումարը դեպոզիտ հանձնելուց հետո 7 օրացուցային օրվա ընթացքում, ապա ԲԷՑ-ը պետք է մեկամսյա ժամկետում սեփականության օտարման հայց ներկայացնի դատարան: Այս դեպքում դատարանի քննարկման առարկա կարող է լինել միայն փոխհատուցման չափի հարցը: ԲԷՑ-ն իրավունք ունի սեփականությունն օտարել միայն դատարանի որոշման ուժի մեջ մտնելու պահից:
- **Ի՞նչ կարող եմ անել, եթե ես իմ բողոքը, հարցը էլեկտրոնային նամակով ուղարկելու, կամ էլ Երևան գրասենյակ բերելու հնարավորություն չունեմ:**

Խնդրում եմք, կապ հաստատել Ձեր համայնքում Տեղական ինքնակառավարման մարմիններում նշանակված պատասխանատուի հետ և նա կօգնի Ձեզ նամակ ուղարկել ԲԷՑ-ի էլ. փոստին:

Փոխհատուցման հետ կապված իրավասությունները նշված են ստորև ներկայացված աղյուսակում՝

No.	Ազդեցության կատեգորիան	ԱԵԱ կատեգորիան	Փոխհատուցում
1	Գյուղատնտեսական նշանակության հող	Օրինական սեփականատեր էր	(i) կանխիկ շուկայական կամ կադաստրային (որն ավելի մեծ է) արժեքի չափով գումարած 15% դրամական աջակցություն: Այն դեպքերում, երբ գոյություն չունի հողերի առքուվաճառքի ակտիվ շուկա, ապա դրամական փոխհատուցումը հաշվարկվում է նույն գյուղում գտնվող նմանատիպ հողակտորի արժեքի հիման վրա, որն ընդունելի է ԱԵԱ-ց համար՝ գումարած 15% դրամական աջակցություն, կամ (ii) նույն գյուղում գտնվող և նույն արժեքով/ արտադրողականությամբ նմանատիպ հողակտորով փոխարինում՝ որն ընդունելի է ԱԵԱ-ի համար: Փոխհատուցումն ազատված է գործարքային պահումներից և գրանցման ծախսերից:
		Օրինականացման էթալա ԱԵԱ, հողօգտագործող	Կգրանցվեն որպես օրինական սեփականատեր և կփոխհատուցվեն որպես օրինական սեփականատեր:
		Օրինականացման ոչ ենթակա ԱԵԱ	Կստանան միանվագ դրամական փոխհատուցում մեկ այլ տեղ վերաբնակեցվելու համար: Նրանք նաև իրավունք կունենան ստանալ խոցելիության նպաստ, եթե ընդգրկված են խոցելի տնային տնտեսության խմբում, ինչպես նաև տեղափոխման դեպքում կստանան տեղափոխման համար դրամական աջակցություն:
2	Ոչ գյուղատնտեսական նշանակության հող (Բնակելի/ առևտրային նշանակության հողակտոր)	Օրինական սեփականատեր էր	Կանխիկ հողակտորի շուկայական արժեքի չափով գումարած 15% դրամական աջակցություն: Այն դեպքերում, երբ գոյություն չունի հողերի առքուվաճառքի ակտիվ շուկա, ապա դրամական փոխհատուցումը հաշվարկվում է նույն գյուղում գտնվող նմանատիպ հողակտորի արժեքի հիման վրա, որն ընդունելի է ԱԵԱ-ց համար՝ գումարած 15% դրամական աջակցություն:
		Օրինականացման էթալա ԱԵԱ	Կգրանցվեն որպես օրինական սեփականատեր և կփոխհատուցվեն որպես օրինական սեփականատեր:
		Օրինականացման ոչ ենթակա ԱԵԱ	Կստանան միանվագ դրամական փոխհատուցում մեկ այլ տեղ վերաբնակեցվելու համար: Նրանք նաև իրավունք կունենան ստանալ խոցելիության նպաստ, եթե ընդգրկված են խոցելի մարդկանց խմբում, ինչպես նաև տեղափոխման դեպքում կստանան տեղափոխման համար դրամական աջակցություն:
3	Վարձակալներ	Հողատարածք	Կստանան փոխհատուցում ինչպես օրինական սեփականատեր՝ սեփականության իրավունքը գրանցելուց հետո, կամ կստանան նոր վարձակալություն: Եթե դա հնարավոր չէ (Եթե ՀՀ օրենսդրության համաձայն վարձակալը չի կարող ստանալ սեփականության իրավունք կամ վերջինս հրաժարվում է սեփականության իրավունքից և նախընտրում է ստանալ փոխհատուցումը) ԱԵԱ կստանա փոխհատուցում ազդակի հողակտորի շուկայական կամ կադաստրային (որը որ ավելի մեծ է) արժեքի չափով:

No.	Ազդեցության կատեգորիան	ԱՇԱ կատեգորիան	Փոխհատուցում
4	Օրինականացման ոչ ենթակա ԱՇԱ	Հող (տեղափոխման դեպքում)	Կլոխհատուցվեն ազդակիր հողի շուկայական կամ կադաստրային արժեքից (որն ավելի բարձր կլինի) որոշակի տոկոսի չափով միանվագ դրամական նպաստով, որը կհաշվարկվի հիմնվելով օգտագործման անցած տարիների վրա՝ 1) < 1 տարի – 5%, 2) < 15 տարի – 14%, 3) < 25 տարի – 20%, 4) 25 տարի և ավելի – 25%: Նրանք նաև իրավունք կունենան ստանալու խոցելիության նպաստ, եթե ընդգրկվեն խոցելի մարդկանց խմբում: Այս մասում Օրինականացման ոչ ենթակա ԱՇԱ-երի տեղափոխման դեպքեր չկան:
5	Անվտանգության գոտու Բնակավայրերի հողեր	Օրինական սեփականատերեր	Էլկտրահաղորդման գծի անվտանգության գոտու սահմաններում հայտնված և «Բնակավայրերի» նշանակության հողերի օրինական սեփականատերերին կտրամադրվի ազդակիր հողամասի արժեքի մասն (նույն համայնքում «Գյուղատնտեսական» և «Բնակավայրերի» հողամասերի շուկայական արժեքների միջև տարբերությունը) չափով փոխհատուցում: Եթե ԱՇԱ-ն հրաժարվի փոխհատուցումից, ապա անվտանգության գոտում հայտնվող հողամասի ազդակիր մասը կօտարվի ՎՔԾ-ին համապատասխան:
6	Մշակաբույսեր	Բոլոր ԱՇԱ	Կորցրած բերքի դիմաց կանխիկ փոխհատուցումը հաշվարկվում է մեկ տարվա համախառն բերքի շուկայական արժեքի չափով: Մշակաբույսերի դիմաց փոխհատուցումը վճարվում է ինչպես հողի սեփականատերերին, այնպես էլ վարձակալներին՝ հաշվի առնելով երկուսի միջև վարձակալության հետ կապված հատուկ համաձայնագիրը: Անօրինական հողօգտագործողները նույնպես իրավունք ունեն ստանալ մշակաբույսերի համար փոխհատուցում, համաձայն ՀՔ 4.12 (Հարկադիր վերաբնակեցում), նույն պայմաններով ինչ որ վարձակալները:
7	Ծառեր	Բոլոր ԱՇԱ	Կանխիկ փոխհատուցում շուկայական գներով՝ կապված ծառերի տեսակից, տարիքից և բերքատվությունից: Կանխիկ փոխհատուցում փայտանյութ ստանալու նպատակով տնկված մասնավոր և բերքատու (միրգ/ընկույզ) ծառեր: Պետական/համայնքային հողատարածքների դեպքում այլ ընդունելի վայրում երկու անգամ ավելի մեծ թվով տնկիների տնկում:
8	Զգալի կորուստների դրամական աջակցություն	Զգալի ազդեցության ենթարկված ԱՇԱ-ք	Այն ԱՇԱ-ց, ովքեր կորցրել են գյուղատնտեսական հողի ավելի քան 10%-ը (սեփականատերեր, վարձակալներ) կստանան Զգալի վնասների նպաստ գյուղատնտեսական եկամտի կորստի համար, որը հավասար է կորցրած հողամասի մեկ տարվա համախառն բերքի շուկայական արժեքին: Գնահատումը կիրականացվի լիցենզավորված կազմակերպության կողմից գյուղատնտեսական հողամասի գույքագրման և չափագրման տվյալների հիման վրա:
9	Խոցելության դրամական աջակցություն	Խոցելի ԱՇԱ-ք/աղքատության շեմից ցածր ԱՇԱ	Խոցելի տնային տնտեսություններին (աղքատության շեմից ցածր ԱՇԱ-ը և այրիներից կամ տարեց գլխավորներից բաղկացած տնային տնտեսությունները) կտրամադրվեն խոցելիության նպաստ, որը հավասար կլինի նվազագույն աշխատավարձի վեցապատիկին և կտրվի ծրագրի իրականացման հետ կապված աշխատանքի ընդունվելու նախապատվություն: Կանանց գլխավորությամբ տնային տնտեսությունները, տարեցներից, չքավորներից կամ հաշմանդամներից բաղկացած տնային տնտեսությունները ներառվում են խոցելի տնային տնտեսությունների մեջ: Խոցելի տնային տնտեսությունները կստանան միանվագ դրամական աջակցություն 6 ամիս ժամանակահատվածի համար, ամսական 55 000 ՀՀ դրամ (նվազագույն աշխատավարձ):
10	Այլ ֆինանսական աջակցություն	Բոլոր ԱՇԱ	ԱՇԱ կստանան հետևյալ ֆինանսական աջակցությունը՝ (ա) լիազորագրի համար ծախսեր/տուրքեր (տրամադրված արտերկրից/ՀՀ տարածքում), (բ) անձնագրի (նույնականացման քարտի) վերանայման հետ կապված ծախսերը/տուրքերը, այն դեպքում, երբ ժամկետը լրացել է, (գ) ժառանգության ճանաչման հետ կապված ծախսերը/տուրքերը, (դ) գործարքային հարկերի ծախսերը և հողի ձեռքբերման հետ կապված տուրքերը կվճարվեն Ծրագրի կողմից, որպես փոխհատուցման մաս:

ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊ

Եթե Դուք ունեք հարցեր կամ խորհրդատվության կարիք, կարող եք կապ հաստատել ԲԷՑ-ի ներկայացուցչի հետ.

ԲԷՑ-ի բողոքարկման հարցերով համակարգող՝ N 1 Վարկային բաժնի մասնագետ՝ Վահան Գրիգորյան
 հեռ. 010.72.02.70

Տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ՝ _____

ՀՔՀՊ Հավելված 4

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՕՐԱԿԱՐԳ

- ծրագրի նպատակները, շահառուները, իրականացման ընթացակարգը և այլ տեղեկատվություն
- ծրագրի շրջանակում վերաբնակեցման հիմնական խնդիրները
- վերաբնակեցման գործողությունների պլանի իրականացման ընթացակարգը՝ փուլերը, ժամկետները
- տեղեկատվություն հիմնական իրավական փաստաթղթերի մասին (ՎՔՇ, ՎԳՊ, Գերակա հանրային շահի վերաբերյալ օրենք)
- փոխհատուցման ենթակա իրավունքները
- փոխհատուցման իրավասությունները (հիմնվելով ՎՔՇ իրավունքների աղյուսակի վրա)
- հողի, կառույցների, գյուղատնտեսական մշակաբույսերի, ծառերի և այլնի գնահատման մեթոդաբանությունը
- հարցեր, պատասխաններ:

ՀՔՀՊ Հավելված 5

Հանրային Քննարկումների Ժամանակացույցը

Համայնքների ցանկը համապատասխան հանրային քննարկումների ամսաթվերով

N	Համայնք	Հանրային լսումների ամսաթիվը
1	Ալավերդի	Մարտի 22, 2017թ. 11:00
2	Մեծ Այրում	Մարտի 22, 2017թ. 14:00
3	Ճոճկան	Մարտի 23, 2017թ. 12:30
4	Այրում/ Հաղթանակ	Մարտի 22, 2017թ. 09:30

Հավելված 3

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՍՓՈՓՈՂ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

110 կՎ Լավար և Նոյեմբերյան օդային գծերի փոխարինման ծրագրի

Հանրային քննարկումների վայրը`

N	Ամսաթիվը	Վայրը	Ժամը
1	Մարտ 22, 2017	Ալավերդու քաղաքապետարան, Լոռու մարզ	11:00
2	Մարտ 22, 2017	Մեծ Այրումի գյուղապետարան, Լոռու մարզ	14:00
3	Մարտ 23, 2017	Ճաճկանի գյուղապետարան, Լոռու մարզ	12:30
4	Մարտ 23, 2017	Այրումի/Հաղթանակի գյուղապետարան, Տավուշի մարզ	9:30

Օրակարգը`

- Ծրագրի նպատակները, շահառուները, իրականացման ընթացակարգը և այլ տեղեկատվություն /Բանախոս` Արամ Պետրոսյան (ԲԷՑ)/
- Ծրագրի շրջանակում վերաբնակեցման հիմնական խնդիրները /Բանախոս` Արսեն Հայրիյան (Գամ Արակ)/
- Վերաբնակեցման գործողությունների պլանի իրականացման ընթացակարգը` փուլերը, ժամկետները /Բանախոս` Ռոբերտ Առաքելյան (ԲԷՑ)/
- Տեղեկատվություն հիմնական իրավական փաստաթղթերի մասին (ՎՔՇ, ՎԳՊ, Գերակա Շահի վերաբերյալ օրենք) /Բանախոս` Արսեն Հայրիյան (Գամ Արակ)/
- Փոխհատուցման ենթակա իրավունքները /Բանախոս` Տիգրան Գրիգորյան (Ալտա Վիպ)/
- Փոխհատուցման իրավասությունները (հիմնվելով ՎՔՇ-ի իրավունքների աղյուսակի վրա) /Բանախոս` Տիգրան Գրիգորյան (Ալտա Վիպ)/
- Հողի, կառույցների, գյուղատնտեսական մշակաբույսերի, ծառերի և այլնի գնահատման մեթոդաբանությունը /Բանախոս` Տիգրան Գրիգորյան (Ալտա Վիպ)/
- Հարցեր, պատասխաններ

Հանրային քննարկումը կազմակերպվել էր «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ (Գամ Արակի ենթակապալառու) կողմից ծրագիրը և վերաբնակեցման ընթացակարգը ազդակիր անձանց ներկայացնելու նպատակով: Քննարկումներին մասնակցում էին ազդակիր անձինք, քաղաքապետարանի աշխատակիցները և ԲԷՑ-ի ու հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները:

Բանախոսները ներկայացրեցին Ծրագիրը` փոխհատուցման սկզբունքները և հիմնական կարգավորող փաստաթղթերը, և հայտնեցին, որ ԱԵԱ պետք է ակտիվորեն համագործակցեն Ծրագրի հետ և մասնակցեն չափազրման ու հողերի և այլ սեփականության գույքազրման աշխատանքներին:

1. ՀՔ Ալավերդիում

Հարցեր և պատասխաններ

Հարց 1: Գառնիկ Ծատինյան, Ալավերդի քաղաքի Ակներ թաղամասի թաղապետ.

Երբ է սկսելու հողերի ձեռք բերումը:

Պատասխան: Ռ. Առաքելյան (ԲԷՑ)

Համայնքային և պետական հողերի ձեռք բերումը կսկսվի համապատասխան հողակտորների չափագրումն ավարտելուց անմիջապես հետո: Մասնավոր հողերի ձեռք բերումը կսկսվի ՎԳՊ վարչնականացնելուց և ՀԲ կողմից հաստատվելուց հետո:

Պատասխան: Ա. Հայրիյան (Գամ Արակ)

Համաձայն Ծրագրի շրջանակներում հաստատված Վերաբնակեցման քաղաքականության շրջանակի, հողերի ձեռք բերումից առաջ անհրաժեշտ է անցկացնել մանրամասն չափագրում, մարդահամար և գույքագրում: Ստացված տեղեկատվության հիման վրա անհրաժեշտ է մշակել և հրապարակել Վերաբնակեցման գործողությունների պլան: Այս գործընթացը՝ ներառյալ հաստատումը, կտևի մոտ 2-3 ամիս:

Հարց 2: Անուշ Էվոյան, Ալավերդու Օրհուս կենտրոնի ներկայացուցիչ.

Շնորհակալ եմ Ձեզ Ծրագիրը մանրամասն ներկայացնելու համար: Իսկ եթե սեփականատերը հրաժարվի հողամասն օտարելուց:

Պատասխան: Ռ. Առաքելյան (ԲԷՑ)

Ազդակիր հողամասերն որոշելուց հետո, բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին որոշում է մշակվելու և ներկայացվելու ՀՀ կառավարություն: Համաձայն ՀՀ օրենսդրության, եթե սեփականատերը հրաժարվում է հողամասը օտարելուց, ապա ԲԷՑ-ը պետք է փոխհատուցման գումարը փոխանցի դեպոզիտ հաշվին և դիմի դատարան:

Պատասխան: Ա. Հայրիյան (Գամ Արակ)

Ըստ ընթացակարգի, բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին որոշումը ընդունվում է բոլոր մասնավոր հողերի վերաբերյալ: Մակայն, անկախ այդ հանգամանքից, ԲԷՑ-ը կփորձի ձեռք բերել հողը փոխադարձ համաձայնությամբ: Միայն այն դեպքում, երբ դա հնարավոր չէ, ԲԷՑ-ը կդիմի դատարան: Դատական գործընթացը շատ երկարատև է և վերջինս ԲԷՑ-ի շահերից չի բխում: Այսպիսով, բոլոր ջանքերը կգործադրվեն, որպեսզի հողամասը ձեռք բերվի փոխադարձ համաձայնությամբ:

Հարց 3: Մ. Մեսրոպյան, Ռեդինետ ՍՊԸ

Եթե հողը օգտագործվում է անօրինական, ով է ստանալու փոխհատուցումը:

Պատասխան: Տ. Գրիգորյան (Ալտա Վիպ)

Օրինական սեփականատերը կստանա փոխհատուցում հողամասի համար, իսկ անօրինական օգտագործողը՝ մշակաբույսի համար:

Հարց 4: Մ. Մեսրոպյան, Ռեդինետ ՍՊԸ

Ինչ փոխհատուցում է տրամադրվելու խոցելի տնային տնտեսություններին:

Պատասխան: Տ. Գրիգորյան (Ալտա Վիպ)

Խոցելի տնային տնտեսությունները կստանան փոխհատուցում ՎՔՇ-ին համապատասխան: ՎՔՇ-ով սահմանվում են խոցելի երեք խմբեր:

Հարց 5: Դավիթ Լալայան, սեփականատեր

Որոնք ուսումնասիրություն անց է կացվել պարզելու էլեկտրոմագնիսական դաշտի ազդեցությունը գծերի տակ գտնվող մշակաբույսերի վրա:

Պատասխան: Ռ. Առաքելյան (ԲԷՑ)

Էլեկտրահաղորդման գծերի մոտակայքում գտնվող մշակաբույսերի վրա որևէ ազդեցություն չկա: Այդ մշակաբույսերը անվտանգ են:

Հարց 6: Սամսոն Հակոբյան, սեփականատեր

Ինչ պետք է արվի, եթե հողի սեփականատերը մահացած է:

Answer: Ա. Հայրիյան (Գամ Արակ)

Ժառանքը կստանա իրավական, տեխնիկական և ֆինանսական աջակցություն ժառանգության ճանաչման հարցում:

Մասնակիցների ցանկը

N	Անուն, ազգանուն	Կարգավիճակ/պաշտոն
1	Կարեն Շավինյան	Սեփականատեր
2	Դավիթ Լալայն	Սեփականատեր
3	Սամսոն Հակոբյան	Իրավահաջորդ
4	Արսեն Մուրադյան	Սեփականատեր
5	Արման Մուրադյան	Հողօգտագործող
6	Գառնիկ Ծատինյան	Ակներ թաղամասի թաղապետ
7	Սարգիս Երիցյան	Սեփականատեր
8	Արծրուն Երիցյան	Մանահինի թաղապետ/վարձակալ
9	Տիգրան Մխիթարյան	ՀՀԱԿ ՀԿ սոցիալական աշխատող
10	Զոնիկ Թադևոսյան	ԲԷՑ-ի ներկայացուցիչ
11	Արսեն Հարությունյան	ԲԷՑ-ի ներկայացուցիչ
12	Մեսրոպ Պետրոսյան	Ռեդինետ ՓԲԸ-ի ներկայացուցիչ
13	Վահե Յուզբաշյան	ԲԷՑ-ի ներկայացուցիչ
14	Արամ Պետրոսյան	ԲԷՑ-ի ներկայացուցիչ
15	Ռոբերտ Առաքելյան	ԲԷՑ-ի ներկայացուցիչ
16	Անուշ Էվոյան	Ալավերդու Օրհուս կենտրոնի ներկայացուցիչ
17	Շուշան Քոչարյան	Ալտա Վիպ ՄՊԸ-ի ներկայացուցիչ
18	Արսեն Հայրիյան	Գամ Արակ
19	Աննա Համբարձումյան	Ալտա Վիպ ՄՊԸ-ի ներկայացուցիչ
20	Տիգրան Գրիգորյան	Ալտա Վիպ ՄՊԸ-ի տնօրեն



ՀՔ Ալավերդիում

2. ՀՔ Մեծ Այրում համայնքում

Հարցեր և պատասխաններ

Հարց 1: Նազարյան Սահակ, Մեծ Այրում համայնքի ղեկավար

Ինչ է արվելու, եթե հողամասն օտարելուց հետո մնացող հատվածն այլևս չի կարող օգտագործվել գյուղատնտեսական նպատակներով: Ինչի ԲԷՑ-ը չի գնում հողամասն ամբողջությամբ:

Պատասխան: Ռ. Առաքելյան (ԲԷՑ)

Հողամասի սեփականատերը կարող է դիմել ԲԷՑ չօտարված մասը օտարելու պահանջով. Եթե չօտարված մասը կորցնում է իր տնտեսական և գործառնական նշանակությունը, ապա ԲԷՑ-ը կգնի հողն ամբողջությամբ:

Հարց 2: Վահրամ Պետրոսյան, ազդակիր անձի բարեկամ

Իսկ եթե հողամասի սեփականատերն երկրում չէ: Ինչպես է կատարվելու հողի օտարումը:

Պատասխան: Ռ. Առաքելյան (ԲԷՑ)

Հողի սեփականատերը պետք է լիազորագիր ուղարկի որևէ մեկի անունով: ԲԷՑ կկատարի լիազորագրի հետ կապված ծախսերը:

Մասնակիցների ցանկը

N	Անուն, ազգանուն	Կարգավիճակ/պաշտոն
1	Սահակ Նազարյան	Համայնքի ղեկավար
2	Սամվել Միրզոյան	Սեփականատիրոջ բարեկամ
3	Տիգրան Նազարյան	Հողօգտագործող
4	Գրիգոր Ալեքսանյան	Գյուղի բնակիչ
5	Արթուր Թամազյան	Գյուղի բնակիչ
6	Վահրամ Պետրոսյան	Սեփականատիրոջ ընտանիքի անդամ
7	Միմոն Ալեքսանյան	Սեփականատիրոջ ժառանգ
8	Սեդա Թումասյան	Սեփականատեր
9	Էռնեստ Ղահրամանյան	Սեփականատեր
10	Զոնիկ Թադևոսյան	ԲԷՑ-ի ներկայացուցիչ
11	Արսեն Հարությունյան	ԲԷՑ-ի ներկայացուցիչ
12	Մեսրոպ Պետրոսյան	Ռեդիներտ ՓԲԸ-ի ներկայացուցիչ
13	Վահե Յուզբաշյան	ԲԷՑ-ի ներկայացուցիչ
14	Արամ Պետրոսյան	ԲԷՑ-ի ներկայացուցիչ
15	Ռոբերտ Առաքելյան	ԲԷՑ-ի ներկայացուցիչ
16	Շուշան Քոչարյան	Ալտա Վիպ ՍՊԸ-ի ներկայացուցիչ
17	Արսեն Հայրիյան	Գամ Արակ
18	Աննա Համբարձումյան	Ալտա Վիպ ՍՊԸ-ի ներկայացուցիչ
19	Տիգրան Գրիգորյան	Ալտա Վիպ ՍՊԸ-ի ներկայացուցիչ
20	Սահակ Նազարյան	համայնքի ղեկավար



ՀՔ Մեծ Այրում համայնքում

**3. ՀՔ ճոճկան համայնքում
Հարցեր և պատասխաններ**

Հարց 1: Սարգիս Գրիգորյան, սեփականատեր

Ինչքան է տևում գործընթացը:

Answer: Ռ. Առաքելյան (ԲԷՑ)

Մոտ 4-5 ամիս: Ձեր հետ պայմանագիր է կնքվելու: Պայմանագիրը ստորագրելուց հետո 3 աշխատանքային օրյա ժամկետում փոխհատուցումը կփոխանցվի ձեր բանկային հաշվին:

Հարց 2: Ռոբերտ Ալեկսանյան, սեփականատիրոջ բարեկամ.

Իսկ եթե հողամասի սեփականատերն երկրում չէ: Ինչպես է կատարվելու հողի օտարումը:

Պատասխան: Ռ. Առաքելյան (ԲԷՑ)

Հողի սեփականատերը պետք է լիազորագիր ուղարկի որևէ մեկի անունով: ԲԷՑ կկատարի լիազորագրի հետ կապված ծախսերը

Հարց 3: Սեդրակ Անդրեասյան, սեփականատեր.

Իսկ եթե հողամասի սեփականատերը մահացած է, և երկրորդ հարցս՝ ես պատրաստվում եմ դուրս գալ երկրից, ինչ է պետք անել:

Պատասխան: Ռ. Առաքելյան (ԲԷՑ)

Եթե սեփականատերը մահացած է, ապա դուք պետք է ժառանգության բացման գործընթաց սկսեք: Իսկ եթե հողի սեփականատերը դուրս է գալու երկրից, ապա վերջինս պետք է լիազորագիր թողնի որևէ մեկի անունով: ԲԷՑ կկատարի լիազորագրի հետ կապված ծախսերը

Հարց 3: Արա Միրադեղյան, սեփականատիրոջ բարեկամ.

Իսկ եթե հողամասը գրանցված չէ:

Պատասխան: Ռ. Առաքելյան (ԲԷՑ)

Դուք կստանաք աջակցություն գրանցման հարցում: Հողամասը կօտարվի գրանցման գործընթացն ավարտելուց հետո:

Հարց 4: Կազբեկ Ասատրյան, սեփականատեր.

Իսկ եթե շինարարության ժամանակ վնասվում են մշակաբույսերը: ԲԷՑ-ը վճարելու է այդ վնասի դիմաց:

Պատասխան: Ռ. Առաքելյան (ԲԷՑ)

Այո, շինարարության ժամանակ պատճառված վնասը համարվում է ժամանակավոր ազդեցություն և պետք է փոխհատուցվի: Դուք կստանաք փոխհատուցում վնասված մշակաբույսերի համար:

Հարց 5: Սեյրան Ասլանյան, սեփականատեր.

Ես օգտագործում եմ քրոջս հողամասը: Ես կստանամ փոխհատուցում:

Պատասխան: Ռ. Առաքելյան (ԲԷՑ)

Այո, դուք կստանաք փոխհատուցում մշակաբույսերի համար, իսկ ձեր քույրը հողամասի համար:

Մասնակիցների ցանկը

N	Անուն, ազգանուն	Կարգավիճակ/պաշտոն
1	Սարգիս Գրիգորյան	Սեփականատեր
2	Մայիս Ղազարյա	Սեփականատեր

3	Մուրիկ Չերչինյան	Մեփականատեր
4	Արթուր Վարդումյան	Համայնքի ղեկավարի տեղակալ
5	Փաշիկ Գալստյան	Մեփականատեր
6	Կազբեկ Ասատրյան	Մեփականատեր
7	Սամվել Հովակիմյան	Մեփականատիրոջ իրավահաջորդ
8	Սեդրակ Անդրեասյան	Մեփականատեր
9	Հեղինե Հախվերդյան	Մեփականատիրոջ ընտանիքի անդամ
10	Արկադի Թամազյան	Համայնքի ղեկավար
11	Ժորա Անդրեասյան	Համայնքի ղեկավարի օգնական
12	Սեյրան Ասլանյան	Հողօգտագործող
13	Նորիկ Երիցյան	Մեփականատեր
14	Լյովա Մոսիսյան	Հողօգտագործող
15	Ռուզան Վարդումյան	Համայնքային համախմբող
16	Անժելա Բայան	Մեփականատեր
17	Ազգանուշ Չերչինյան	Հողօգտագործող
18	Գայանե Վարդումյան	Մեփականատեր
19	Արա Սիրադեղյան	Մեփականատիրոջ ընտանիքի անդամ
20	Սերգեյ Չերչինյան	Համայնքի հողաշինարար
21	Հունան Լորասբյան	Համայնքապետարանի ներկայացուցիչ
22	Ռուբեն Ալեքսանյան	Մեփականատիրոջ ընտանիքի անդամ
25	Ռոբերտ Առաքելյան	ԲԷՑ-ի ներկայացուցիչ
26	Մեսրոպ Պետրոսյան	Ռեդիներտ ՓԲԸ-ի ներկայացուցիչ
27	Զոնիկ Թադևոսյան	ԲԷՑ-ի ներկայացուցիչ
28	Վահե Յուզբաշյան	ԲԷՑ-ի ներկայացուցիչ
29	Արամ Պետրոսյան	ԲԷՑ-ի ներկայացուցիչ
30	Շուշան Քոչարյան	ԱԼՏՍ ՎԻՊ ՍՊԸ -ի ներկայացուցիչ
31	Աննա Համբարձումյան	ԱԼՏՍ ՎԻՊ ՍՊԸ-ի ներկայացուցիչ
32	Տիգրան Գրիգորյան	ԱԼՏՍ ՎԻՊ ՍՊԸ -ի ներկայացուցիչ
33	Արսեն Հայրիյան	Գամ Արակ





ՀՔ ճոճկան համայնքում

4. ՀՔ Հաղթանակ/Այրում համայնքում

Հարցեր և պատասխաններ

Հարց 1: Նիյազ Պետիկյան, գյուղի բնակիչ, հողօգտագործողի բարեկամ

Ենթակա են արդյոք փոխհատուցման շինարարական աշխատանքների ժամանակ մշակաբույսերին պատճառված վնասը:

Պատասխան: Ռ. Առաքելյան (ԲԷՑ)

Այո, շինարարության ժամանակ պատճառված վնասը համարվում է ժամանակավոր ազդեցություն և պետք է փոխհատուցվի: Դուք կստանաք փոխհատուցում վնասված մշակաբույսերի համար:

Question 2: Հայկ Լազգյան, հողօգտագործողի ընտանիքի անդամ

Ինչպես են փոխհատուցվելու ծառերը:

Պատասխան: Տ. Գրիգորյան (Ալտա Վիպ)

Մեր թիմում ընդգրկված է փորձառու գյուղատնտես, որը կկատարի ծառերի գնահատումը հիմնվելով ծառերի տարիքի, արտադրողականության, ինչպես նաև հաշվի են առնվելու ծառերի վրա ծախսված ներդրումները:

Մասնակիցների ցանկը

N	Անուն, ազգանուն	Կարգավիճակ/պաշտոն
1	Մուսաննա Մարգարյան	Գյուղի բնակիչ
2	Հայկ Լազգյան	Հողօգտագործողի ընտանիքի անդամ
3	Նիյազ Պետիկյան	Գյուղի բնակիչ, հողօգտագործողի բարեկամ

4	Շուշան Քոչարյան	Ալտա Վիպ ՄՊԸ-ի ներկայացուցիչ
5	Աննա Համբարձումյան	Ալտա Վիպ ՄՊԸ-ի ներկայացուցիչ
6	Մեսրոպ Պետրոսյան	Ռեդիներտ ՓԲԸ-ի ներկայացուցիչ
7	Զոնիկ Թադևոսյան	ԲԷՑ-ի ներկայացուցիչ
8	Արսեն Հարությունյան	ԲԷՑ-ի ներկայացուցիչ
9	Վահե Յուզբաշյան	ԲԷՑ-ի ներկայացուցիչ
10	Ռոբերտ Առաքելյան	ԲԷՑ-ի ներկայացուցիչ
11	Արամ Պետրոսյան	ԲԷՑ-ի ներկայացուցիչ
12	Տիգրան Գրիգորյան	Ալտա Վիպ ՄՊԸ-ի ներկայացուցիչ
13	Բաղասյան Մնացական	Համայնքապետարանի հավաքագրող
14	Արսեն Հայրիյան	Գամ Արակ





ՀՔ Հաղթանակ/Այրում համայնքում

Հավելված 4

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
«ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀՈՒՍԱԼԻՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ
ԼՐԱՑՈՒՑԻՉ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան _____ երկու հազար տասնչորս թվական

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության և «Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ»-ի միջև 2011 թվականի հունիսի 1-ին ստորագրված վարկային համաձայնագրով (այսուհետ՝ Վարկային համաձայնագիր) ստորև նշված Վճարողը մի կողմից և ԱԵԱ-ն մյուս կողմից կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

1. **1.ԱԵԱ՝ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ**-ի կողմից «Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ»-ի աջակցությամբ իրականացվող «Էլեկտրամատակարարման հուսալիություն» վարկային ծրագիրը ՀՀ օրենսդրությամբ և Վարկային համաձայնագրով սահմանված կարգով իրականացման հետևանքով ազդեցության ենթարկված անձինք, որոնք նշված են սույն կետում՝

Անուն, ազգանուն	Ծննդյան թիվ, անձնագրային տվյալներ

1.2. **Վճարող՝ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ**

1.3. **Փոխհատուցում (Նպաստ)՝ «Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ»-ի կողմից** հաստատված «Վերաբնակեցման գործողությունների պլան»-ի դրույթների համաձայն ԱԵԱ-ն կստանա հետևյալ փոխհատուցումները (նպաստները)՝

ա	Էական ազդեցության նպաստ	դրամ
բ	Խոցելի անձանց նպաստ	դրամ
	Էական ազդեցության նպաստ	դրամ
գ	Բերք	դրամ
դ	Ծառեր	դրամ

Փոխհատուցման (Նպաստի) ընդհանուր գումարը կազմում է _____ ՀՀ դրամ:

2. ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ (ՆՊԱՍՏ)

2.1. Սույնով Վճարողը պարտավորվում է ԱԵԱ-ի և Վճարողի միջև _____ թ-ին կնքված «Անշարժ գույքի առուվաճառքի» պայմանագրից բխող պարտավորությունները կատարելուց հետո 15 (տասնհինգ) օրացուցային օրում

ԱԵԱ-ին վճարել 1.3 կետում նշված Փոխհատուցումը (Նպաստը) :

2.2. Սույնով ԱԵԱ-ն հաստատում է, որ համաձայն է սույն համաձայնագրի 1.3 կետում նշված Փոխհատուցման (Նպաստի) գումարի հետ և չունի դրա նկատմամբ որևէ առարկություններ կամ բողոքներ:

2.3. ԱԵԱ-ի համաձայնությամբ սույն համաձայնագրի 1.3 կետում նշված Փոխհատուցման (Նպաստի) վճարումը կատարվում է _____ -ի կողմից ներկայացված _____ բանկում բացված _____ հաշվի համարի վրա:

2.4. Սույն համաձայնագրի 1.3 կետում նշված Փոխհատուցումը (Նպաստը) կայուն է, փոփոխման ենթակա չէ: Հետագայում կողմերը իրավունք չունեն պահանջել ավելացնելու կամ նվազեցնելու նշված գումարը:

3. ԱԵԱ-Ի ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄ

3.1. ԱԵԱ-ն երաշխավորում է, որ սույն համաձայնագրի 1.1 կետում նշված անձանցից բացի չկան այլ անձիք որոնք ունեն Փոխհատուցումը (Նպաստը) կամ դրա մի մասը ստանալու իրավունք: ԱԵԱ-ն երաշխավորում է, որ երրորդ անձանց կողմից պահանջներ ներկայացնելու դեպքում պատասխանատվությունը կկրի ինքը՝ անկախ դրանց բնույթից, ժամկետից, ծավալից հիմնավորվածությունից,

3.2. ԱԵԱ-ն պատասխանատվություն է կրում իր կողմից տրված կեղծ երաշխիքների, ներկայացրած կեղծ տեղեկանքների և տրամադրված կեղծ տեղեկատվության համար, և պարտավորվում է փոխհատուցել Վճարողին բոլոր տեսակի ծախսերը և վնասները, որը կկրի Վճարողը ԱԵԱ-ի կողմից կեղծ երաշխիքներ տալու, տեղեկատվություն տրամադրելու և կեղծ տեղեկանքներ ներկայացնելու հետևանքով:

4. ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1. Վճարողը պարտավորվում է հատուցել շինարարական աշխատանքների ընթացքում ԱԵԱ-ին պատկանող մշակաբույսերին և ծառերին պատճառված վնասը:

4.2. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

4.3. Սույն համաձայնագիրը կազմված է __ (___) օրինակից, որոնցից մեկական տրվում է յուրաքանչյուր ԱԵԱ-ին և Վճարողի կողմից լիազորված անձին:

5. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

6. ԿՈՂՄԵՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6.1 Վճարողի անունից՝

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ -ի անունից համաձայն լիազորագրի հանդես է գալիս _____-ը

ստորագրություն

6.2 ԱԵԱ՝

_____/,որի անունից համաձայն լիազորագրի/կանոնադրության/օրենքի հանդես է գալիս _____-ը/

ստորագրություն

_____/,որի անունից համաձայն լիազորագրի/կանոնադրության/օրենքի հանդես է գալիս _____-ը /

ստորագրություն

Հավելված 5

ՎԳՊ-ն իրականացնող միավորի կառուցվածքը և աշխատանքի նկարագրությունը

Առաջարկվել է, որ 5 հոգուց բաղկացած մասնագետներ աշխատեն ՎԳՊԻՄ-ում: Միավորը կվերահսկվի Ծրագրի ղեկավարի կողմից:

Պաշտոն	Ներգրավվածություն	Հիմնական պարտականությունները
Խմբի ղեկավար	Լրիվ դրույքով	Իրականացման ծրագրի ամբողջ կազմակերպչական և համակարգման գործողությունները Վերահսկող ընկերությանը, ԲԷՑ-ի ղեկավարությանը և ՀԲ-ին հաշվետվություն ներկայացնելը
Իրավաբան	Կես դրույքով	Իրավական խորհրդատվություն խնդրահարույց դեպքերի համար, Բողոքներին պատասխանելու գործընթացին մասնակցություն Դատարանում ներկայացնելու համար հայցերի կազմում Դատական գործերի ղեկավարում
Տեխնիկական հարցերով օգնական*	Լրիվ դրույքով	Փաստաթղթերի ձևակերպում, ներառյալ ծանուցման գրությունների, նախագծային պայմանագրերի և այլն կազմումը
Որակի մասնագետ	Լրիվ դրույքով	ԱԵԱ հրապարակվող բոլոր փաստաթղթերի որակի ստուգում (պայմանագրեր, գրագրություն), հրապարակման գործընթացի կազմակերպում Բողոքներ՝ բողոքների վերաբերյալ պատասխանների համակարգում ԱԵԱ հետ կապի հաստատում պայմանագրի ստորագրման գործընթացը կազմակերպելու համար, ըստ Խմբի ղեկավարի պահանջի
Վերաբնակեցման մասնագետ*	Լրիվ դրույքով	Տեղանքում պայմանագրի ստորագրման կազմակերպում
Վերաբնակեցման մասնագետ*	Լրիվ դրույքով	Տեղանքում պայմանագրի ստորագրման կազմակերպում
Մասնագետների քանակը կարող է ավելացվել իրականացման գործընթացն արագացնելու նպատակով		

Հիմնական առաջադրանքները, որոնք պետք է իրականացվեն ՎԳՊ-ի իրականացման համար, ներառում, բայց չի սահմանափակվում հետևյալով՝

1. Պաշտոնական ծանուցումներ
 - a. Արձանագրությունների ստորագրում
 - b. Յուրաքանչյուր հողի սեփականատիրոջը արձանագրությունների ուղարկում
 - c. Ծանուցման գրությունների պատրաստում և ուղարկում բոլոր մասնավոր և համայնքային հողի սեփականատերերին, հենց որ Կառավարության Որոշումը հաստատվի
 - d. Կառավարության Որոշման հրապարակում լրատվամիջոցներին
 - e. Նախագծային պայմանագրերի կազմում, ներառյալ որակի ստուգումը
 - f. Պայմանագրերի նախագծի ուղարկում
2. Պայմանագրի ստորագրում
 - a. Յուրաքանչյուր հատուկ դեպքի վերլուծություն և այս դեպքերի համար մանրամասն գործողության պլանի մշակում

- b. Իրականացման գործընթացի ժամանակ ԱԵԱ հետ կապի հաստատում (պարզաբանումներ, հանդիպումների կազմակերպում)
 - c. Պայմանագրի ստորագրման համար փաստաթղթի լրակազմի վերանայում փաթեթը ամբողջականացնելու պայմանով
 - d. ԱԵԱ համար տեղափոխման կազմակերպում
 - e. ԱԵԱ հետ կադաստրում աշխատել
 - f. Մահացած և Հայաստանից դուրս սեփականատերերին աջակցություն
 - g. Խնդրահարույց դեպքերի հետ կապված գրանցման/վերագրանցման համար կադաստրի հետ համակարգում
3. Օտարում
- a. Դատարանի հաշվեհամարին կամ նոտարի հաշվեհամարին փոխհատուցման գումարի փոխանցման կազմակերպում.
 - b. Վերագնահատման կազմակերպում, եթե գործը գնում է դատարան
 - c. Գործը ներկայացվում է դատարան
4. Վերահսկման գործընթաց
- a. ԲԷՑ-ի ղեկավարության և ՀԲ-ի համար շաբաթական հաշվետվությունների կազմակերպում
 - b. Վերահսկող ընկերությանը ներկայացվող բողոքների հաշվետվության համար փաստաթղթերի պատրաստում
5. Հողի նպատակի փոփոխում
- a. Գործընթացի համար դիմում
 - b. Գործընթացին հետևում
6. Բողոքներ
- a. Իրականացման գործընթացի ընթացքում բողոքների փաստաթղթայնացում և փոխանցում ԲԷՑ-ի կոնտակտային անձին
 - b. ԱԵԱ պատասխանի փոխանցում

Հավելված 6

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ, ՄՇԱԿԱԲՈՒՅՄԵՐԻ ԵՎ ԾԱՌԵՐԻ ՏԵՂԱԶՆՆՄԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԱԶՆՆՄԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Անշարժ գույքի տեղագնում

Գնահատողի կողմից հասարակ տեսողական զննությամբ և ԱԵԱ-ներին հարցման ենթարկելու միջոցով լրացվել են հողամասերի և շինությունների հիմնական բնութագրիչները արտացոլող տեղագնման ձևաթերթերը: Հետևյալ նկարագրություններն են ընդգրկվել՝

- a. Գույքի ընդհանուր բնութագիրը
 - ենթակառուցվածքների առկայությունը, այդ թվում՝ խմելու ջրի, էլեկտրական հոսանքի, կոյուղու, հեռախոսագծերի, բնական գազի և այլնի հասանելիությունը,
 - հիմնական ծառայություններին հասանելիության հնարավորությունը, այդ թվում՝ մետրոյից, առողջապահական հաստատություններից և առևտրային սրահներից հեռավորությունը,
 - ճանապարհի առկայություն, ինչպես նաև շրջակա միջավայրի գնահատում:
- b. Հողամասի բնութագիրը
 - նպատակային, գործառնական և փաստացի նշանակությունը,
 - իրավունքի տեսակը, օր.՝ սեփականություն հանդիսացող, վարձակալված կամ անօրինական կերպով օգտագործվող,
 - լայնությունը, երկարությունը և երկրաչափական կառուվածքը,
 - տրանսպորտի առկայությունը և երկաթգծին հասանելիությունը,
 - դիրքը, տեղադրությունը, քարքարոտությունը և այլն,
 - բարելավումների առկայությունը և դրանց նկարագրությունը:
- c. Շինությունների և բարելավումների նկարագրություն
 - շինության անվանումը, նպատակային, գործառնական և փաստացի նշանակությունը
 - ենթակառուցի առկայությունը
 - հիմքի, միջհարկային ծածկերի, արտաքին պատերի համար օգտագործված նյութերը,
 - դռների և պատուհանների առկայությունը
 - տեղափոխման ենթակա կահույքի և կենցաղային իրերի առկայությունը և այլն

Այս փուլում իրականացվում էր գույքերի ապամոնտաժման ենթակա տարբեր կոնստրուկցիաներ ունեցող շենքեր և շինություններ կամ անշարժ լինելու կարգավիճակի որոշումը: Անշարժ են որակվել այն գույքերը, որոնք անհնար է հողամասից անջատել՝ առանց այդ գույքին կամ հողամասին վնաս պատճառելու: Գույքի մնացած մասը հաշվի է առնվել որպես շարժական:

Այս փուլում իրականացվել է հողամասերի, ինչպես նաև արտաքին և ներքին շինությունների ֆոտոլուսանկարումը:

Մշակաբույսեր և ծառեր

Որակավորում և փորձառություն ունեցող գյուղատնտեսը հաշվառել է առկա ծառերը և մշակաբույսերը հողամասի ազդեցության ենթակա հողամասերում: Հաշվառվել են բոլոր մշակաբույսերը, թփերը, պտղատու, դեկորատիվ, ինչպես նաև փայտանյութ տվող ծառերը:

Պտղատու ծառեր և թփատեսակներ

Պտղատու ծառերի տարիքը որոշվում է փորձառու գյուղատնտեսի փորձագիտական կարծիքի հիման վրա, որից հետո ծառերը դասակարգվում են՝ ըստ հետևյալ խմբերի.

- տնկիներ,
- ոչ պտղատու ծառեր,
- պտղատու ծառեր:

Ղեկորատիվ ծառեր, փայտանյութ տվող ծառեր և թփատեսակներ

Գյուղատնտեսը չափել է փայտանյութ տվող ծառերի բնի հաստությունը, ինչպես նաև դեկորատիվ ծառերի, գեղազարդ թփերի ու ծառերի, պտղատու թփերի բարձրությունը:

Մշակաբույսեր

Մանրամասն չափագրման հետազոտությունների ընթացքում գյուղատնտեսը որոշել է մշակաբույսերի տեսակը՝ հիմնվելով տեսողական հետազոտման վրա:

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿ

Գործընթացը կարգավորող փաստաթղթեր

Փոխհատուցումների հաշվարկի և միավորի գնի հաշվարկի մեթոդաբանությունը մշակվել է՝ ըստ հետևյալ փաստաթղթերի.

- Համաշխարհային Բանկ, ԳՔ 4.12 – Հարկադիր վերաբնակեցում, 2001թ-ի դեկտեմբեր
- Վարկային համաձայնագիր («Էլեկտրամատակարարման հուսալիություն»-ն ծրագիր) Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման ու Զարգացման Միջազգային Բանկի միջև, (ամսաթիվ 01.06.2011թ.)
- Վերաբնակեցման Քաղաքականության Շրջանակ (ՎՔՇ)՝ հաստատված Վերակառուցման ու Զարգացման Միջազգային Բանկի կողմից
- 2005թ-ի հոկտեմբերի 1-ին ընդունված «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-189-Ն)
- «Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույքի գնահատման ստանդարտը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում թիվ. 955-Ն առ 08.06.2006թ.
- ՀՀ քաղաքաշինության նախարարի 14.01.2008թ-ի «ՀՀ տարածքում կառուցվող շենքերի, կառուցվածքների և շինարարական աշխատանքների տեսակների արժեքի խոշորացված ցուցանիշների ժողովածուն հաստատելու մասին» թիվ 09-Ն հրաման:

Գնահատման Շրջանակ

Օրագրի շրջանակներում գնահատվել են՝

- Ազդեցության ենթակա սեփական և համայնքային օրինականացված հողամասերը, որոնք վարձակալական հիմունքներով կամ ինքնակամ օգտագործվում են անհատների կողմից: Ազդեցության ենթակա հողամասի օտարվող և ընդհանուր մասի վրա գտնվող շենքեր, շինությունները, պարխսպները,
- Ազդեցության ենթակա հողամասի օտարվող և ընդհանուր մասի վրա գտնվող բարելավումները,
- Ազդեցության ենթակա հողամասի օտարվող և ընդհանուր մասի վրա գտնվող մշակաբույսերը, պտղատու, դեկորատիվ և գեղազարդ ծառերն ու թփատեսակները:

ՀՈՂԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ընդհանուր մոտեցում

ՎՔՇ-ի համաձայն, ազդեցության ենթակա հողի դիմաց փոխհատուցում կստանան հողամասի սեփականատերերը, վարձակալները, հողօգտագործողները, որոնց գույքի նկատմամբ համապատասխան իրավունքներն ենթակա են պետական գրանցման, ինչպես նաև անօրինական հողօգտագործողները: Յուրաքանչյուր խմբի համար սահմանվել է փոխհատուցման հաշվարկի հատուկ մոտեցում: Ընդհանրացված տեսքով այն ներկայացված է ստորև՝

Աղյուսակ 1

Գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական հողերի փոխհատուցում

Սեփականատեր	Հողօգտագործողներ, որոնց գույքի նկատմամբ համապատասխան իրավունքներն ենթակա են պետական գրանցման
փոխարինման արժեք +15%	փոխարինման արժեք +15% (օրինական կարգավիճակ ստանալուց հետո)

Հողի փոխարինման արժեքի գնահատում

Հողի գնահատումն իրականացվել է փոխարինման արժեքով՝ հիմք ընդունելով շուկայական սակագները: Շուկայական սակագները գնահատվել են համեմատական մեթոդի միջոցով, ինչպես սահմանվում է ՀՀ կառավարության սահմանված կարգով: Սույն մեթոդի հիման վրա որոշվել է հողի արժեքը՝ հաշվի առնելով միևնույն տեղակայություն և նույն կիրառման նպատակ/հատկանիշներ ունեցող վերջերս վաճառված առնվազն երեք համեմատման ենթակա հողամասերի վաճառքի ճշգրտված միջին արժեքը: Եթե գնահատվող հողամասի նույն վայրում ընդունելի համեմատիչներ առկա չէին, մեկ կամ ավելի համեմատման ենթակա հողամասեր են ընտրվել այլ վայրերից: Համայնքային և պետական հողերի համար ընտրվել է կադաստրային արժեքը, համաձայն ՀՀ կառավարության 24.12.2003թ. թիվ 1746-Ն որոշման:

Գնահատվող հողամասի և համեմատման ենթակա հողամասի հատկանիշների/որակի միջև փոքր տարբերություններն արտացոլելու նպատակով համեմատման ենթակա հողամասերի միջին շուկայական վաճառքի գները ճշգրտվել են՝ ըստ մի քանի համեմատության պարամետրերի և համապատասխան գործակիցների:

Գնահատման ընթացակարգը

Հողի գնահատման համեմատական մեթոդը կիրառվել է հետևյալ կերպով.

- i) Համանման անշարժ գույքի շուկաները վերլուծվել են:
- ii) Առնվազն երեք համեմատության միավորներ են սահմանվել:
- iii) Տարբերակվել են համեմատության անհրաժեշտ տարրերը:
- iv) Համեմատության միավորների արժեքը ճշգրտվել է՝ ըստ համեմատության տարրերի և համեմատվող անշարժ գույքի համար միջինացված մի քանի փոփոխված գնային ցուցանիշների:
- v) Ստացված շուկայական արժեքը համեմատվել է կադաստրային արժեքի հետ:
- vi) Որոշվել է հողի գինը:

Քայլ 1

Համանման անշարժ գույքի համար շուկայական իրավիճակը վերլուծելու և վերլուծության համար արժանահավատ տեղեկատվություն ընտրելու նպատակով՝ գնահատողը օգտվել է հրապարակային աղբյուրներից (մասնագիտական ամսագրեր, կայքեր, արտաքին գովազդներ), անհատական տվյալների բազայից, ինչպես նաև ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ Տեղեկատվական Տեխնոլոգիաների Կենտրոն ՊՈԱԿ-ից ձեռքբերված տեղեկատվությունից: Ստացված տեղեկատվության հիման վրա Գնահատողը օգտագործել է ամենահամադրելի/համապատասխան տեղեկատվությունը (իր համեմատության տարրերով):

Քայլ 2

Սկզբունքորեն համեմատիչ արժեքների աղբյուր են հանդիսացել կատարված վաճառքների արձանագրությունները՝ ստացված ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ Տեղեկատվական Տեխնոլոգիաների Կենտրոն ՊՈԱԿ-ից: Եթե որոշակի հողամասի համար արձանագրությունները չեն ներառել օգտագործելի համեմատիչներ, ապա համեմատիչների ձևավորման նպատակով օգտագործվել են ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից ստացված շուկայական գների ցանկը կամ հողամասի վաճառքի առաջարկները (լրատվական թերթերում ու կայքերում): Յուրաքանչյուր գնահատված հողամաս համեմատվել է առնվազն (3) երեք համեմատման ենթակա հողամասերի հետ:

Քայլ 3

Համեմատման հողամասերի իդենտիֆիկացումից հետո մի քանի այլ լրացուցիչ պարամետրեր նույնպես հաշվի են առնվել՝ գնահատված հողամասերի և համեմատման հողամասերի հարաբերական որակի/հատկությունների համեմատության նպատակով: Գնային ճշգրտումների պարամետրերը և գործակիցները թվարկված են ստորև՝

Վաճառքի պայման և շուկայի վիճակ

Սրանք շուկայական գնի փոփոխություններն են, որ տեղի են ունեցել համեմատվող հողամասերի շուկայական վաճառքների և գնահատման ժամանակահատվածի միջև: Գնահատողը նաև հաշվի է առել գույքի՝ տարածամկետ վճարման պայմանով գնվելու հանգամանքը: Քանի որ անշարժ գույքի իրականացված վաճառքների շուկայի ուսումնասիրությունն իրականացվել է թարմ և ճշգրտված տեղեկատվության հիման վրա, և տարածամկետ վճարման պայմանով դեպքեր չեն եղել, կիրառվել է 1,0 գործակիցը:

Նպատակային և գործառնական նշանակությունը

Այս տարրերը ցույց են տալիս, թե ինչպես կարելի է օգտագործել տվյալ հողամաս՝ բնակելի կառուցապատման, հասարակական կառուցապատման, գյուղատնտեսական նպատակով և այլն: Գնահատողն ուղղում չի կատարել, քանի որ գնահատումն իրականացվում է փաստացի նշանակությունից ելնելով:

Փաստացի նշանակություն

Սա ցույց է տալիս, թե ինչպես է օգտագործվում տվյալ հողամասն իրականում՝ անկախ դրա կադաստրային, նպատակային և գործառնական նշանակությունից: Գնահատողն ուղղում չի կատարել այն դեպքերում, երբ օրինակ գնահատվող հողամասի փաստացի նշանակությունն այգի էր, սակայն հողամասը պաշտոնապես դասակարգվել էր որպես բնակելի կառուցապատում, քանի որ գնահատողը հողամասերը դիտարկել է որևէ բարելավումներից ազատ, ինչպես նաև ծառերից ու մշակաբույսերից: Հողամասի փաստացի նշանակությունն այգի որակելով՝ Գնահատողը ցանկանում է նշել, որ տվյալ հողամասի վրա ծառեր են առկա:

Տեղադրություն և դիրք

Գնահատվող և համեմատման հողամասերը ներկայացվել են ըստ թաղամասերի: Գլխավոր ճանապարհից հեռավորությունը նույնպես ցույց է տրվել: Տվյալ դեպքում կիրառվել են 20 % քայլով նվազեցնող կամ բարձրացնող գործակիցներ:

Տրանսպորտի հասանելիություն

Սույն գործակիցը բնութագրել է գնահատվող և համեմատման հողամասերի հեռավորությունը տրանսպորտային գլխավոր հանգույցներից: Պարզվել է, որ տրանսպորտի հասանելիությունը նույնն էր գնահատվող և համեմատման հողամասերի համար, և որևէ գործակից չի կիրառվել:

Ընդհանուր մակերեսը

Ազդեցության ենթակա հողամասերի ընդհանուր մակերեսն ազդեցություն չի ունեցել հողամասի գնի վրա, քանի որ այն նման էր համեմատման հողամասերի մակերեսներին:

Ճակատային մաս

Սա ցույց է տալիս, թե տվյալ հողամասը գլխավոր ճանապարհի վրա քանի մետր ճակատային մաս ունի: Քանի որ ճակատային մասի մակերեսները համապատասխանել են շուկայում ձևավորված չափանիշներին, ուղղիչ գործակից չի կիրառվել:

Ենթակառուցվածքների առկայությունը

Բնութագրում է գնահատված հողամասի հեռավորությունը գլխավոր ենթակառուցվածքներից (ճանապարհ, ռոտաման և խմելու ջրատար, էլեկտրական հոսանքի գիծ, գազատար, կոյուղի): Եթե ենթակառուցվածքները մոտ էին հողամասին կամ առկա էին հողամասում, ապա նշվել է, որ տվյալ հողամասին ենթակառուցվածքները հասանելի են կամ հողամասը համալրված է տվյալ

ենթակառուցվածքով: Եթե հողամասը գտնվում էր այնպիսի թաղամասում, որտեղ բացակայում էր տվյալ ենթակառուցվածքը, և դրա առկայությունը քաղաքաշինական խնդիր է, ապա նշվում էր, որ հողամասը չունի տվյալ ենթակառուցվածքը: Առաջին համեմատման հողամասը ենթակառուցվածքների առկայության տեսակետից ավելի նպաստավոր դիրք ուներ, և գնահատողը 15 %-ի ուղղում է կիրառել:

Թեքություն

Շուկայի համակարգված դիտարկումները ցույց են տալիս, որ թեքություն ունեցող և չունեցող հողամասերը տարբեր գներ ունեն: Քանի որ գնահատվող և համեմատման հողամասերը հարթ էին, տվյալ տարրի շտկման անհրաժեշտությունը չի եղել:

Գույքային իրավունքներ

Կախված նրանից՝ տվյալ հողամասի նկատմամբ գույքային իրավունքը սեփականություն է թե վարձակալություն, կամ ընդհանրապես տվյալ հողօգտագործողը որևէ իրավունք չունի տվյալ գույքի նկատմամբ (անօրինական հողօգտագործող) հողամասի գները տարբերվել են: Գնահատողն իրավունքների ճշգրտման գործակից չի կիրառել, քանի որ գնահատման ենթակա հողամասերը մասնավոր են:

Բարելավումներ

Սա ցույց է տալիս, թե ինչ բարելավումներ ունի տվյալ հողամասը՝ բացի հիմնական շինություններից և ծառերից, օրինակ՝ մետաղական, փայտյա կամ քարե պարիսպ, բետոնապատված կամ ասֆալտապատ տարածք և այլն: Սակայն այս տարրով Գնահատողն ուղղում չի կատարել, քանի որ տվյալ բարելավումների արժեքն առանձին է հաշվարկվում և գումարվում է փոխհատուցման արժեքին:

Քայլ 4

Հողամասերի շուկայական գնի միավորը ճշգրտվել է՝ ըստ թվարկված համեմատության տարրերի: Ճշգրտման տրամաբանությունը ներկայացված է ստորև աղյուսակում՝

**Աղյուսակ 2
Ընդհանուր հողամասի 1 քմ արժեքի հաշվարկը**

Համեմատության տարրեր	Գնահատվող անշարժ գույք	Համանման անշարժ գույք 1	Համանման անշարժ գույք 2	Համանման անշարժ գույք 3
Մեկ քմ գին (ՀՀ դրամ)		300	133	129
Սակարկում (Վաճառքի պայման)		Վաճառք	Վաճառք	Վաճառք
Ճշգրտման գործակից		1.00	1.00	1.00
Ճշգրտումը ՀՀ դրամով		0	0	0
Ժամանակ (Շուկայի միճակ)	07.2014	04.2014	02.2014	02.2014
Ճշգրտման գործակից		1.00	1.00	1.00
Ճշգրտումը ՀՀ դրամով		0	0	0
Նպատակային նշանակություն	Գյուղատնտես.	Գյուղատնտես.	Գյուղատնտես.	Գյուղատնտես.
Ճշգրտման գործակից		1.00	1.00	1.00
Ճշգրտումը ՀՀ դրամով		0	0	0
Գործառնական նշանակություն	Վարելահող	Վարելահող	Վարելահող	Վարելահող
Ճշգրտման գործակից		1.00	1.00	1.00
Ճշգրտումը ՀՀ դրամով		0	0	0
Փաստացի նշանակություն	Պտղատու այգի	Վարելահող	Վարելահող	Վարելահող
Ճշգրտման գործակից		1.00	1.00	1.00
Ճշգրտումը ՀՀ դրամով		0	0	0
Տեղադրություն	Լավ	Գերազանց	Բավարար	Բավարար
Ճշգրտման գործակից		0.80	1.20	1.20
Ճշգրտումը ՀՀ դրամով		-60	26	25
Դիրք	Գերազանց	Գերազանց	Լավ	Լավ
Ճշգրտման գործակից		1.00	1.20	1.20
Ճշգրտումը ՀՀ դրամով		0	26	25
Տրանսպորտի հասանելիություն	Լավ	Լավ	Լավ	Լավ
Ճշգրտման գործակից		1.00	1.00	1.00
Ճշգրտումը ՀՀ դրամով		0	0	0
Ֆիզիկական մնութագրեր՝ այդ թվում				
Ընդհանուր մակերես (քմ)	400.0	266.10	300.0	300.0
Ճշգրտման գործակից		1.00	1.00	1.00

Ճշգրտումը ՀՀ դրամով		0	0	0
Ճակատային մաս (մ)	9.65	14.50	12.0	12.0
Ճշգրտման գործակից		1.00	1.00	1.00
Ճշգրտումը ՀՀ դրամով		0	0	0
Ենթակատարների առկայություն	Բավարար	Լավ	Բավարար	Բավարար
Ճշգրտման գործակից		0.85	1.00	1.00
Ճշգրտումը ՀՀ դրամով		-45	0	0
Թերություն	Հարթ	Հարթ	Հարթ	Հարթ
Ճշգրտման գործակից		1.00	1.00	1.00
Ճշգրտումը ՀՀ դրամով		0	0	0
Գույքային իրավունքներ	Մեփականութ.	Մեփականութ.	Մեփականութ.	Մեփականութ.
Ճշգրտման գործակից		1.00	1.00	1.00
Ճշգրտումը ՀՀ դրամով		0	0	0
Բարելավումներ	Առկա չեն	Առկա չեն	Առկա չեն	Առկա չեն
Ճշգրտման գործակից		1.00	1.00	1.00
Ճշգրտումը ՀՀ դրամով		0	0	0
Ընդհանուր ճշգրտում (ՀՀ դրամ)		-105	52	50
Ճշգրտված մեկ քմ գին (ՀՀ դրամ)		195	185	179
Կշռային գործակից		0.33	0.34	0.33
Գնահատվող անշարժ գույքի մեկ		186		

Քայլ 5

Անշարժ գույքի արժեքի վերաբերյալ վերջնական որոշումը սահմանվել է վաճառքների համեմատության միջոցով՝ վերլուծելով անշարժ գույքի համեմատման ենթակա վաճառքների ճշգրտված գները: Գնահատողը երեք համանման հողամասերի ճշգրտված գները միջինացրել է, քանզի գտնում էր, որ բոլոր երեք համանման հողամասերը գնահատվող հողամասին նմանություն ունեն, և տվյալների ստացման աղբյուրներն արժանահավատ են:

Քայլ 6

Այս մեթոդով ստացված շուկայական արժեքը համեմատվել է կադաստրային արժեքի հետ: Այն դեպքերում, երբ համեմատական մեթոդով ստացված շուկայական արժեքն ավելի բարձր էր, քան հողամասի կադաստրային արժեքը՝ հիմք են ընդունվել համեմատական մեթոդով ստացված գները:

Քայլ 7

Այնուհետև հաշվարկվել է հողամասի շուկայական արժեքը հետևյալ բանաձևով՝

$$Հս = Հո \times \text{Նս}$$

որտեղ՝

Հս –ն հողամասի շուկայական արժեքն է,

Հո-ն հողամասի մակերեսն է,

Նս-ն համանման հողամասերի 1 քմ շուկայական ճշգրտված արժեքն է:

ԾԱՌԵՐԻ ԵՎ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Տնկիների և հասուն ոչ պտղատու ծառերի գնահատում

Տնկիների և հասուն ոչ պտղատու ծառերի դիմաց փոխհատուցումը պետք է տրամադրվի ներդրված գումարի հիման վրա. Գնահատման համար անհրաժեշտ են հետևյալ ելակետային տվյալները՝

- ա. ծառատեսակ,
- բ. ծառի տարիք,
- գ. ծառի գտնվելու տարածաշրջանը:

Տնկիների Գնահատման Գործընթաց

Տվյալ ծառատեսակի տնկիի գինը հստակեցվել է: Տնկիների շուկայական գինը որոշվել է ՀՀ-ում տնկիների շուկայական միջին գների հիման վրա: Իրականացվել է գների ուսումնասիրությունն ՀՀ Տավուշի և Լոռու մարզերում գտնվող տնկիների շուկայում, այնուհետև տեղեկություններ են ձեռք բերվել մի քանի վաճառողներից, ինչի հիման վրա ձևավորվել է միջին գին:

Տնկիների գնահատման համար կիրառվում է հետևյալ բանաձևը՝

$$ՄՏ = ՏՀԱ + ՏԾ$$

որտեղ՝

ՄՏ - Տնկիի (կանգուն) շուկայական արժեք,

ՏՀԱ - Տնկիի շուկայական արժեք (առանց տնկելու),

ՏԾ - Տնկիի տնկման ծախսեր:

Ոչ պտղատու ծառերի գնահատման գործընթաց

Ոչ պտղատու ծառերի գնահատման համար կիրառվում է հետևյալ բանաձևը՝

$$ԾՈՊ = ՏԵԱ + ՊԵԱ \times ՏԶ$$

որտեղ՝

ԾՈՊ - Հասուն ոչ պտղատու ծառի շուկայական արժեք,

ՏԵԱ - Տնկիի շուկայական արժեք,

ՊԵԱ - Հասուն ոչ պտղատու ծառի պահպանման համար անհրաժեշտ տարեկան միջոցառումների ծախսեր,

ՏԶ - Ծառի արդյունաբերական բերք տալու տարվան նախորդող տարին:

Սահմանված ծառատեսակի տնկիի գինը որոշելուց հետո հաշվարկվել են հասուն ոչ պտղատու ծառի պահպանման համար անհրաժեշտ տարեկան միջոցառումների ծախսերը: Այդ ծախսերը սահմանվեցին որպես այդ տարածքում ընդունված ծախսերի միակցություն, ինչն արտացոլված է ստորև աղյուսակում:

#	Գործողությունը	Տարեկան քանակը
1.	Ծառի էտ	1 անգամ
2.	Ծառի բնի սպիտակեցում	1 անգամ
3.	Ոռոգում	3-8 անգամ (կախված տարածաշրջանից)
4.	Պարարտագում	1 անգամ
5.	Կուլտիվացիա	1 անգամ
6.	Ծառի սրսկում	1 անգամ
7.	Բաժակների փխրեցում	1 անգամ

Պտղատու ծառերի գնահատման մեթոդաբանություն

Պտղատու ծառերի դիմաց փոխհատուցումը պետք է տրամադրվի այնքան, որքան կազմում է մեկ տարվա եկամտի զուտ շուկայական արժեքը՝ բազմապատկած այն տարիների քանակով, որքան անհրաժեշտ է նոր լրիվ պտղատու ծառ աճեցնելու համար: Պտղատու ծառերի գնահատման համար անհրաժեշտ են հետևյալ ելակետային տվյալները

- i. ծառատեսակ
- ii. ծառի արդյունաբերական բերք տալու տարիք,
- iii. բերքատվությունը,
- iv. բերքի արժեքը,
- v. ծառի գտնվելու տարածաշրջանը:

Քայլ 1 Տարիք, երբ ծառը տալիս է բերք արդյունաբերական չափով

Մասնագիտացված հաստատությունների կողմից իրականացված հետազոտությունները, մասնավորապես՝ Հայաստանի ազգային գյուղատնտեսական համալսարանի և մասնագիտական գրականությունը, օգտագործվել են տվյալ ծառի ամբողջական զարգացման համար անհրաժեշտ տարիների քանակը որոշելու համար:

Քայլ 2 Մեկ կիլոգրամ մրգի շուկայական արժեքը

Մրգատու ծառի տարեկան զուտ արժեքը սահմանվել է որպես շուկայական եկամուտ ծառից ստացված տարեկան բերքից: Այսպիսով՝ որոշվել է տվյալ ծառատեսակից ստացվող 1 կիլոգրամ մրգի գինը: Հաշվարկները կատարելիս հաշվի են առնվել մի քանի գործոններ:

Հայաստանի Ազգային Վիճակագրական Ծառայությունից ստացված տեղեկատվությունը: Անհատական հետազոտություն է իրականացվել որոշակի տիպի մրգերի գինը որոշելու համար, քանի որ հնարավոր չէր ճշտել դրանց գները վերը նշված պաշտոնական աղբյուրներից:

Քայլ 3 Ծառատեսակի բերքատվությունը

Որոշվել է ծառի բերքատվությունը: Բերքատվությունը որոշվել է՝ հիմք ընդունելով մասնագիտական գրականությունը, ինչպես նաև տարբեր մասնագիտացված հաստատություններին հարցումները (օրինակ՝ Հայաստանի Ազգային Ագրարային Համալսարան):

Քայլ 4 Փոխհատուցման հաշվարկումը

Բերքատու ծառերի գնահատման համար կիրառվել է հետևյալ բանաձևը.

$$ՄԲ = ՏՔ \times ՏՇՁԵ$$

Որտեղ՝

ՄԲ – Բերքատու ծառի շուկայական գինը

ՏՔ – Այն տարիների քանակը, որն անհրաժեշտ է նոր ծառը լիարժեք պտղատվության տարիքին աճեցնելու համար

ՏՇՁԵ – Տարեկան շուկայական գուտ եկամուտը:

ՄՇԱԿԱԲՈՒՅՄԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Մշակաբույսի փոխհատուցումը որոշվում է մշակաբույսի տարեկան գուտ շուկայական արժեքի հիման վրա: Ստորև բերված են գնահատված մշակաբույսի համար օգտագործված անհրաժեշտ ելակետային տվյալները՝

- i. մշակաբույսի տեսակը,
- ii. բերք,
- iii. մշակաբույսի արժեքը,
- iv. այն տարածաշրջանը, որտեղ մշակաբույս կա

Քայլ 1. Մեկ տարվա եկամտի գուտ շուկայական արժեքի սահմանումը

Մշակաբույսի մեկ տարվա եկամտի գուտ շուկայական արժեքը մշակաբույսից ստացվող մեկ տարվա բերքի շուկայական արժեքն է: Մեկ տարվա եկամտի գուտ շուկայական արժեքի որոշման համար նախ որոշվում է տվյալ մշակաբույսից ստացվող բերքի 1 կգ շուկայական արժեքը: Հաշվարկները կատարելիս հաշվի է առնվել հետևյալը՝

Հայաստանի Ազգային Վիճակագրական Ծառայությունից ստացված տեղեկատվությունը: Անհատական հետազոտություն է իրականացվել որոշակի տիպի մշակաբույսերի գինը որոշելու համար, քանի որ հնարավոր չէր ճշտել դրանց գները վերը նշված պաշտոնական աղբյուրներից:

Քայլ 2. Մշակաբույսի բերքի որոշումը

Բերքը որոշվում է՝ հիմնվելով հետևյալի վրա՝

- i. մասնագիտական գրականություն,
- ii. միջին հաշվով բերքի ցուցիչներ՝ հրատարակված Հայաստանի Հանրապետության Ազգային Վիճակագրական ծառայության կողմից, որի վերլուծությունները կատարվել են վերջին 1 տարվա համար, ինչպես նաև
- iii. հետազոտություններ տարբեր մասնագիտացված հաստատությունների հետ, ինչպես օրինակ՝ Հայաստանի ազգային գյուղատնտեսական համալսարանն է: 1 կգ մշակաբույսի շուկայական գինը բազմապատկվում էր բերքի ցուցիչով:

Քայլ 3 Փոխհատուցման հաշվարկ

Մշակաբույսերի գնահատման համար կիրառվում էր հետևյալ բանաձևը՝

$$ՄՇԳ = ՄՄՁԳ \times Մ$$

Որտեղ՝

ՄՇԳ – Մշակաբույսի շուկայական գինը

ՄՄԶԳ – Մեկ միավորի տարեկան եկամտի գուտ շուկայական գինը

Մ – Մշակաբույսեր ցանելու տարածքի մակերեսը

ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

Գործարքին առնչվող ծախսերը հաշվվում են անշարժ գույքի պետական գրանցման իրականացման դրույքաչափերի հիման վրա, որոնք հաստատված են՝ նոտարական գրասենյակներում սահմանված ՀՀ օրենսդրության, վճարումների և պետական պարտականությունների համաձայն: Նաև հաշվի է առնված մի կտոր ակտիվի/գույքի՝ 2-3 մասերի բաժանվելու (ակտիվների/գույքերի մասնակի օտարման արդյունքում) հավանականությունը:

Հավելված 7

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Կնքման վայրը՝ _____

Գնորդ՝ _____

Վաճառող՝ _____

Սույն պայմանագրով վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով նշված գնի դիմաց գնորդի սեփականությանը հանձնել սույն պայմանագրում նշված անշարժ գույքը:

Պայմանագրի առարկան.

Անշարժ գույքի մակերեսը՝

- հողամաս _____ հա
- շենք, շինություններ _____

(ընդհանուր մակերեսի չափը կամ մակերեսների չափերը ըստ առանձին շենք, շինությունների)

Հասցե՝ _____

Շենքի/շինության նպատակային նշանակությունը _____

Վաճառողը երաշխավորում է, որ սույն պայմանագրով նախատեսված անշարժ գույքի սեփականատերն է, գույքը վաճառված կամ դատական վեճի առարկա չէ:

Վաճառողը երաշխավորում է, որ.

- սույն պայմանագրով նախատեսված անշարժ գույքը վարձակալության կամ անհատույց օգտագործման տրված կամ այլ կերպ ծանրաբեռնված չէ, արգելանքի տակ չի գտնվում:
- գնորդը տեղեկացված է սույն պայմանագրով նախատեսված անշարժ գույքի՝ այլ անձանց իրավունքներով ծանրաբեռնված լինելու մասին:
- Սույն պայմանագրով վաճառողը գնորդի սեփականությանն է հանձնում ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրված _____ թ. N _____ գրանցման վկայականում նշված անշարժ գույքի միավորը ամբողջությամբ:

Սույն պայմանագրով վաճառողը գնորդի սեփականությանն է հանձնում ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրված _____ թ. N _____ գրանցման վկայականում նշված անշարժ գույքի միավորի՝ նախօրոք որպես առանձին գույքային միավոր չառանձնացված մասը, որի հատակագիծը կցվում է սույն պայմանագրին և կազմում է դրա բաղկացուցիչ մասը:

Անշարժ գույքի նշանակությունը՝ <input type="checkbox"/> բնակելի <input type="checkbox"/> հողամաս <input type="checkbox"/> այլ անշարժ գույքի * _____

Գինը

Սույն պայմանագրով նախատեսված անշարժ գույքի գինը կազմում է _____ ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ, եթե կիրառելի է:

Սույն պայմանագրով նախատեսված անշարժ գույքի գինը՝

- վճարվել է ամբողջությամբ,
- վճարվելու է * _____ օրվա ընթացքում:

Անշարժ գույքը գնորդին հանձնելը

- Անշարժ գույքի հանձնման ակտը պետք է կազմվի սույն պայմանագիրը հաստատելուց հետո * _____ ընթացքում:
- Անշարժ գույքը սույն պայմանագիրը հաստատելու պահին հանձնվել է գնորդին:

Սույն պայմանագրով չկարգավորված հարաբերությունների նկատմամբ կիրառվում են պայմանագրի կնքման պահին գործող Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

Ստորագրություններ՝

Գնորդ՝ _____	_____
(անուն, ազգանուն)	(ստորագրություն)
Վաճառող՝ _____	_____
(անուն, ազգանուն)	(ստորագրություն)

(Եթե առկա է) **Անշարժ գույքի համատեղ սեփականության մասնակից**

_____	_____
(անուն, ազգանուն)	(ստորագրություն)

Մույն պայմանագիրը կողմերը ստորագրել են իմ` Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի _____ սպասարկման գրասենյակի աշխատակից` _____ ներկայությամբ: Նրանց (նաև ներկայացուցիչների, եթե պայմանագրի կողմ հանդես են գալիս Հայաստանի Հանրապետությունը, Հայաստանի Հանրապետության համայնքը կամ իրավաբանական անձը) անունը, ազգանունը, ինքնությունը ստուգված են:

_____ (տարեթիվ,ստորագրություն)

Հավելված 8

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N _____

Հասցեն՝ _____

Գույքը տիրապետողը _____

(ազգանունը, անունը)

Հ/հ	Շինության չափը և իրավունքը				Զբաղեցրած հողամասի չափը և իրավունքը				Մեփակա- նությունը հաստա- տող փաս- տաթուղթ	
	ընդ- քմ	սեփ	վարձ	կարգ չունի	ընդ- քմ	օտարվող քմ	սեփ	վարձ		կարգ չունի
1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.	10.	11.

ՕԲՅԵԿՏԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1.	Նպատակային նշանակությունը (հուշարձան հանդիսանալու մասին նշումով)	
2.	Մեփականության/վարձակալության վկայականի համարը և տրման ամսաթիվը	
	<i>Վկայականի տրման հիմքը</i>	
3.	Հարկայնությունը, հարկը	
4.	Տանիքը	
5.	Հիմնական պատերը	
6.	Միջհարկային ծածկը	
7.	Հարկի բարձրությունը /մ/	
8.	Շինության հիմքը	
9.	Հարդարման նկարագիրը	
	<i>սանհանգույց</i>	
	<i>դռներ, պատուհաններ</i>	
	<i>հատակ</i>	
	<i>ատաստաղ</i>	
	<i>տարածքի բարեկարգվածություն</i>	
	<i>պարհսպ</i>	
10.	Բազմամյա տնկարկներ	
	<i>Ընդհանուր հողատարածք</i>	
	<i>Օտարվող հողատարածք</i>	
11.	Խմելու ջուր	
	ռոտզման ջուր	
12.	Էլեկտրաէներգիա	
13.	Կոյուղի	
14.	Հեռախոս	
15.	Լրացուցիչ նշումներ	

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Հ/հ	Ազգանուն, Անուն	Ծննդյան թիվը	Ազգակցական կապը	Նշված հասցեում հաշվառման թվագիրը	Գույքի նկատմամբ իրավունքը	Անձնագրի (ծննդյան վկայականի) համարը
1.	2.	3.	4.	5.	6.	7.

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏՎՅԱԼՆԵՐ

ԿՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

1. Սեփականության վկայականի հատակագծի պատճենը
2. Լուսանկարներ
3. Այլն

Նկարագիրը կազմեցին՝

_____ (ազգանուն, անուն)

_____ (ստորագրությունը)

_____ (ազգանուն, անուն)

_____ (ստորագրությունը)

_____ (ազգանուն, անուն)

_____ (ստորագրությունը)

Գույքի նկատմամբ գույքային իրավունքներ ունեցողներ, փաստացի օգտագործողներ`

_____ (կարգավիճակը)

_____ (ազգանուն, անուն)

_____ (ստորագրությունը)

_____ (կարգավիճակը)

_____ (ազգանուն, անուն)

_____ (ստորագրությունը)

_____ (կարգավիճակը)

_____ (ազգանուն, անուն)

_____ (ստորագրությունը)

_____ (կարգավիճակը)

_____ (ազգանուն, անուն)

_____ (ստորագրությունը)

Ձեռքբերող՝

_____ (պաշտոնը)

_____ (ազգանուն, անուն)

_____ (ստորագրությունը)

« ____ » _____ 20__

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏՎՅԱԼՆԵՐ

Օտարվող հողակտորը կազմում է ամբողջ հողակտորի 10%-ից ավելին	Այո	Ոչ
	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>

Առանց պետական գրանցման փաստացի օգտագործում	Օգտագործման ընդհանուր ժամկետը
	Վարձակալության մնացած ժամկետը
Սահմանված կարգով պետական գրանցում ունեցող վարձակալություն	Վարձակալության մնացած ժամկետը

Ծառերի տեսակը և քանակը

Ծառի տեսակը	Ընդհանուր հողատարածք			Օտարվող հողատարածք		
	Նորատունկ	Դեռ ոչ բերքատու	Բերքատու	Նորատունկ	Դեռ ոչ բերքատու	Բերքատու
1.						
2.						

Աճեցվող բերքի տեսակը և քանակը

Մշակաբույսի տեսակը	Ամբողջ հողատարածքի վրա աճեցվող մակերեսը (քմ)	Օտարվող հատվածի վրա աճեցվող մակերեսը (քմ)
1.		
2.		

Գույքի նկատմամբ գույքային իրավունքներ ունեցողների, փաստացի օգտագործողների կոնտակտային տվյալներ`

Հեռ` _____
 Էլ. Փոստ` _____

Նկարագիրը կազմեցին`

 (ազգանուն, անուն) (ստորագրությունը)

 (ազգանուն, անուն) (ստորագրությունը)

Գույքի նկատմամբ գույքային իրավունքներ ունեցողներ, փաստացի օգտագործողներ`

 (կարգավիճակը) (ազգանուն, անուն) (ստորագրությունը)

 (կարգավիճակը) (ազգանուն, անուն) (ստորագրությունը)

Ձեռքբերող`

 (պաշտոնը) (ազգանուն, անուն) (ստորագրությունը)

Հավելված 9

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

/Լավվար և Նոյեմբերյան 110 կՎ էլեկտրահաղորդման գծերի փոխարինման ծրագրի շրջանակներում մոտեցման ճանապարհների ընտրության և դրանով պայմանավորված վնասի փոխհատուցուման մասին/

Սույն ընթացակարգի նպատակն է Լավվար և Նոյեմբերյան 110 կՎ էլեկտրահաղորդման գծերի փոխարինման ծրագրի (Օրագիր) շրջանակներում կարգավորել մոտեցման ճանապարհների ընտրության և հետևյալ փոխհատուցումների վճարման գործընթացը՝

- հետազոտության ժամանակ մշակաբույսերին/ծառերին պատճառված վնաս.
- մոտեցման ճանապարհների կառուցման ժամանակ մշակաբույսերին/ծառերին պատճառված վնաս.
- հենարանների կանգնեցման և հաղորդալարի ձգման ժամանակ մշակաբույսերին/ծառերին պատճառված վնաս,

1. Մոտեցման ճանապարհը պետք է ընտրվի հետևյալ գործոնների օպտիմալ համադրումից՝

- ԱԵԱ-ի հետ առավելագույն համաձայնություն,
- հողամասի սեփականատերերին հասցվող վնասի նվազագույն չափ,
- մայրուղուց մինչև շինարարության վայր մոտեցման նվազագույն հեռավորություն,
- տեխնիկայի ազատ տեղաշարժման առավելագույն հնարավորություն,
- ճանապարհի հարթեցման, սպասարկման և այլ կառույցների ծախսերի նվազագույն չափ:

2. Կապալառուն շինարարական աշխատանքներից առնվազն 10 (տասը) օրացուցային օր առաջ պետք է գրավոր տեղեկացնի ԲԷՑ-ին, ԱԵԱ և համայնքի ղեկավարին՝ նշելով հենարանների համարները, տեղակայման վայրը և աշխատանքների ամսաթվերը:

3. ԲԷՑ-ի, Կապալառուի ներկայացուցիչները համայնքի ղեկավարի և ԱԵԱ-ի հետ միասին Կապալառուի կողմից ծանուցումը ստանալուց հետո երկու աշխատանքային օրյա ժամկետում կիրավիրվեն աշխատանքների իրականացման տեղամաս: Եթե ԱԵԱ հրաժարվում է տրամադրել մոտեցում դեպի աշխատանքների իրականացման տեղամաս, ապա մեկ այլ մոտեցում պետք է ընտրվի: Եթե դա հնարավոր չէ, ԲԷՑ-ը կդիմի դատարան և կստանա հողամասի սահմանափակ օգտագործման իրավունք (Սերվիտուտ)՝ համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 214-րդ հոդվածի:

4. Այցելության արդյունքում ընտրվում է մոտեցման ճանապարհը և որոշվում է ԱԵԱ-ին պատճառվելիք վնասի չափը: Այցի արդյունքում կազմվում է արձանագրություն, որում արտացոլվում է հենարանին մոտեցման ճանապարհի և աշխատանքների կատարման վայրի ուրվագծային քարտեզը, ինչպես նաև հասցվող վնասը:

5. Կապալառուն պարտավոր է խստորեն ուղղորդվել ուրվագծային քարտեզում նշված մոտեցումներով՝ բացառելով ընտրված մոտեցման ճանապարհից և հատկացված շինարարական տարածքից ցանկացած շեղում:

6. Սույն ընթացակարգի 4-րդ կետում նշված արձանագրության հիման վրա Կապալառուն ԱԵԱ-ի հետ միասին կստորագրեն պատճառված վնասի հատուցման մասին համաձայնագիր (Այս ՎԳՊ-ի Հավելված 4): Մշակաբույսերին և ծառերին պատճառված վնասը կատարվում են Կապալառուի

հաշվին: Փոխհատուցումը կհաշվարկվի և կվճարվի սույն ՎԳՊ դրույթներին համապատասխան: Մինչև ԱԵԱ-ին ամբողջ փոխհատուցման վճարելը ոչ մի աշխատանք չի իրականացվի:

7. ԻԱԽ-ն պատասխանատու կլինի սույն ընթացակարգին համապատասխանության մշտադիտարկման և ԲԷՑ-ին ամսական կտրվածքով հաշվետվություն ներկայացնելու համար: Փոխհատուցումների վճարման բոլոր դեպքերը կներառվեն Ամսական վերահսկողության հաշվետվության մեջ:

Հավելված 10

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿՈՐՈՒՍՆԵՐ ԿՐԱԾ ԱԶԴԱԿԻՐ ՏՏ-ԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

#	Համայնք	Հենարան	Կադաստրային ծածկագիր	Նպատակային նշանակությունը	1.Օգտագործվող 2.Չօգտագործվող	1.Մասնավոր 2.Համայնքային	Ազդակիր տարածք	Մշակաբույսեր	Ծառերի քանակը	SS	Խոցելիության կարգավիճակ
1.	Հաղպատ	S-97/AP-41	11-043-0171-0006	Գյուղատնտեսական	1	2	77.0	-	2	1	-
2.	Հաղպատ	S-97/AP-41	11-043-0171-0006	Գյուղատնտեսական	1	2	78.3	-	33	1	աղքատ
3.	Հաղպատ	S-96	11-043-0176-0007	Գյուղատնտեսական	2	2	143.0	-	-	-	-
4.	Հաղպատ	S-95/AP-40	11-043-0176-0015	Գյուղատնտեսական	2	1	142.6	-	-	1	-
5.	Ճոճկան	S-94/AP-39A	06-069-0221-0001	Գյուղատնտեսական	2	չգրանցված	130.4	-	-	-	-
6.	Ճոճկան	S-93	06-069-0221-0006	Գյուղատնտեսական	2	1	94.1	-	-	2	աղքատ և կանանց կողմից ղեկ. SS
7.	Ճոճկան	S-92/AP-38	06-069-0221-0009	Գյուղատնտեսական	1	1	143.0	Ֆորեն	-	3	աղքատ և կանանց կողմից ղեկ. SS
8.	Ճոճկան	S-91/AP-37	06-069-0221-0033	Գյուղատնտեսական	2	1	143.0	-	-	1	-
9.	Ճոճկան	S-90	06-069-0230-0036	Գյուղատնտեսական	2	1	94.1	-	-	3	-
10.	Ճոճկան	S-89/AP-36	06-069-0231-0063	Գյուղատնտեսական	2	2	130.4	-	-	-	-
11.	Ճոճկան	S-88	06-069-0231-0055	Գյուղատնտեսական	2	1	86.5	-	-	1	-
12.	Ճոճկան	S-87/AP-35	06-069-0232-0009	Գյուղատնտեսական	1	1	130.9	Ֆորեն	-	1	-
13.	Ճոճկան	S-86/AP-34	06-069-0233-0011	Գյուղատնտեսական	2	1	143.1	-	-	1	-


#	Համայնք	Հենարան	Կադաստրային ծածկագիր	Նպատակային նշանակությունը	1.Օգտագործվող 2.Չօգտագործվող	1.Մասնավոր 2.Համայնքային	Ազդակիր տարածք	Մշակաբույսեր	Ծառերի քանակը	SS	Խոցելիության կարգավիճակ
14.	Ճոճկան	S-86/AP-34	06-069-0753-0001	Գյուղատնտեսական	2	2	25.5	-	-	-	-
15.	Ճոճկան	S-85	06-069-0282-0002	Գյուղատնտեսական	2	չգրանցված	94.1	-	-	2	-
16.	Ճոճկան	S-84	06-069-0283-0006	Գյուղատնտեսական	2	1	94.1	-	-	2	տարեցների կողմից դեկ. SS
17.	Ճոճկան	S-83/AP-33	06-069-0280-0019	Գյուղատնտեսական	1	2	119.3	-	9	1	-
18.	Ճոճկան	S-82	06-069-0278-0008	Գյուղատնտեսական	2	1	110.3	-	-	3	աղքատ
19.	Ճոճկան	S-81	06-069-0276-0010	Գյուղատնտեսական	1	1	86.5	Ֆորեն	-	3	աղքատ
20.	Ճոճկան	S-80	06-069-0275-0001	Գյուղատնտեսական	1	1	102.0	Ֆորեն	-	3	-
21.	Ճոճկան	S-79	06-069-0273-0012	Գյուղատնտեսական	2	1	86.5	-	-	2	-
22.	Ճոճկան	S-78	06-069-0271-0013	Գյուղատնտեսական	2	1	86.5	-	-	1	-
23.	Ճոճկան	S-77/AP-32	06-069-0291-0023	Գյուղատնտեսական	2	1	142.6	-	-	1	-
24.	Ճոճկան	S-76	06-069-0292-0005	Գյուղատնտեսական	2	1	102.0	-	-	1	-
25.	Ճոճկան	S-75	06-069-0304-0011	Գյուղատնտեսական	2	1	94.1	-	-	1	տարեցների կողմից դեկ. SS
26.	Ճոճկան	S-74	06-069-0302-0008	Գյուղատնտեսական	2	չգրանցված	94.1	-	-	-	-
27.	Ճոճկան	S-73	06-069-0309-0010	Գյուղատնտեսական	2	1	86.5	-	-	3	-
28.	Ճոճկան	S-72	06-069-0316-0008	Գյուղատնտեսական	1	1	94.1	Ֆորեն	-	3	տարեցների կողմից դեկ. SS
29.	Ճոճկան	S-71	06-069-0318-0008	Գյուղատնտեսական	2	1	143.0	-	-	3	աղքատ

#	Համայնք	Հենարան	Գաղաստրային ծածկագիր	Նպատակային նշանակությունը	1.Օգտագործվող 2.Չօգտագործվող	1.Մասնավոր 2.Համայնքային	Ազդակիր տարածք	Մշակաբույսեր	Օտների քանակը	SS	Խոցելիության կարգավիճակ
30.	Ճոճկան	S-70/AP-31	06-069-0319-0001	Գյուղատնտեսական	2	2	168.5	-	-	-	-
31.	Ճոճկան	S-69	06-069-0319-0001	Գյուղատնտեսական	2	2	110.3	-	-	-	-
32.	Ճոճկան	S-68/AP-30	06-069-0294-0014	Գյուղատնտեսական	2	2	142.6	-	-	-	-
33.	Ճոճկան	S-67	06-069-0294-0014	Գյուղատնտեսական	1	2	102.0	Ցորեն	-	1	-
34.	Ճոճկան	S-66	06-069-0294-0014	Գյուղատնտեսական	1	2	102.0	Ցորեն	-	1	-
35.	Ճոճկան	S-65	06-069-0294-0014	Գյուղատնտեսական	2	2	130.7	-	-	-	-
36.	Մեծ Այրում	S-64	06-073-0205-0006	Գյուղատնտեսական	2	2	155.8	-	-	-	-
37.	Մեծ Այրում	S-63	06-073-0206-0006	Գյուղատնտեսական	1	1	143.0	Ցորեն	-	1	-
38.	Մեծ Այրում	S-62	06-073-0207-0002	Գյուղատնտեսական	2	չգրանցված	94.1	-	-	1	-
39.	Մեծ Այրում	S-61/AP-29	06-073-0208-0015	Գյուղատնտեսական	1	չգրանցված	155.8	Գարի	-	1	-
40.	Մեծ Այրում	S-60	06-073-0217-0007	Գյուղատնտեսական	2	1	110.3	-	-	2	-
41.	Մեծ Այրում	S-59	06-073-0215-0005	Գյուղատնտեսական	1	չգրանցված	94.1	Ցորեն	-	2	-
42.	Մեծ Այրում	S-58	06-073-0226-0005	Գյուղատնտեսական	2	1	94.1	-	-	1	-
43.	Մեծ Այրում	S-57	06-073-0239-0002	Գյուղատնտեսական	1	2	94.1	Ցորեն	-	1	-
44.	Մեծ Այրում	S-56	06-073-0238-0008	Գյուղատնտեսական	1	չգրանցված	110.3	Գարի	-	1	-
45.	Մեծ Այրում	S-55	06-073-0237-0008	Գյուղատնտեսական	2	չգրանցված	102.0	-	-	1	-


#	Համայնք	Հենարան	Գաղաստրային ծածկագիր	Նպատակային նշանակությունը	1.Օգտագործվող 2.Չօգտագործվող	1.Մասնավոր 2.Համայնքային	Ազդակիր տարածք	Մշակաբույսեր	Օտների քանակը	SS	Խոցելիության կարգավիճակ
46.	Մեծ Այրում	S-54A	06-073-0236-0004	Գյուղատնտեսական	1	2	130.4	Յոբեն	-	1	-
47.	Մեծ Այրում	S-54	06-073-0235-0002	Գյուղատնտեսական	1	1	119.3	Յոբեն	-	1	կանանց կողմից դեկ. SS
48.	Մեծ Այրում	S-53A	06-073-0235-0002	Գյուղատնտեսական	1	1	130.4	Յոբեն	-	1	-
49.	Մեծ Այրում	S-53	06-073-0234-0002	Գյուղատնտեսական	2	1	86.5	-	-	1	-
50.	Մեծ Այրում	S-52/AP-28	06-073-0232-0003	Գյուղատնտեսական	2	1	119.3	-	-	1	-
51.	Մեծ Այրում	S-51	06-073-0230-0002	Գյուղատնտեսական	2	չգրանցված	102.0	-	-	1	-
52.	Մեծ Այրում	S-50	06-073-0252-0001	Գյուղատնտեսական	2	2	102.0	-	-	-	-
53.	Մեծ Այրում	S-49/AP-27	06-073-0252-0001	Գյուղատնտեսական	2	2	119.3	-	-	-	-
54.	Ակներ	S-8/AP-5	06-002-0275-0003	Գյուղատնտեսական	2	1	119.4	-	-	1	աղքատ
55.	Ակներ	S-7	06-002-0274-0018	Գյուղատնտեսական	2	1	102.0	-	-	1	-
56.	Ակներ	S-6	06-002-0274-0009	Գյուղատնտեսական	2	1	86.5	-	-	1	-
57.	Ակներ	S-5/AP-4	06-002-0274-0002	Գյուղատնտեսական	2	չգրանցված	119.3	-	-	1	-
58.	Ակներ	S-4	06-002-0273-0002	Գյուղատնտեսական	2	1	130.9	-	-	1	-
59.	Sanahin	S-3/AP-3	06-002-0202-0060	Գյուղատնտեսական	2	չգրանցված	18.6	-	-	1	-
60.	Մանահին	S-3/AP-3	06-002-0202-0070	Գյուղատնտեսական	2	2	31.7	-	-	-	-
61.	Մանահին	S-3/AP-3	06-002-0202-0071	Գյուղատնտեսական	2	2	80.2	-	-	-	-

#	Համայնք	Հենարան	Վաղաստրային ծածկագիր	Նպատակային նշանակությունը	1.Օգտագործվող 2.Չօգտագործվող	1.Մասնավոր 2.Համայնքային	Ազդակիր տարածք	Մշակաբույսեր	Ծառերի քանակը	SS	Խոցելիության կարգավիճակ
62.	Սանահին	S-2/AP-2	06-002-0202-0019	Գյուղատնտեսական	2	չգրանցված	142.6	-	-	1	-
63.	Սանահին	S-1 / AP-1	06-002-0202-0011	Գյուղատնտեսական	2	չգրանցված	142.6	-	-	1	-


Հավելված 11




Վերջնաժամկետի հայտարարություն Ալավերդիում



Վերջնաժամկետի հայտարարություն ճոճկանում



Վերջնաժամկետի հայտարարություն Այրումում (Հաղթանակ)



Վերջնաժամկետի հայտարարություն Մեծ Այրումում

Հավելված 12

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

/Համայնքային և պետական հողամասերը ձեռք բերելու մասին/

Պետական և համայնքային/մունիցիպալ հողերն օտարվում ՀՀ Հողային օրենսգրքի 66-րդ Հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն, և միայն համայնքների կողմից հողի կատեգորիան «Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների» (այսուհետ՝ Էներգետիկ կատեգորիա) կատեգորիայի փոխելուց հետո:

Համայնքային և պետական հողամասերի ձեռք բերման ընթացակարգը (այսուհետ՝ Ընթացակարգ) ներառում է երկու հիմնական փուլ՝

1. Փուլ 1՝ կատեգորիայի փոփոխություն
2. Փուլ 2՝ հողամասի ձեռք բերում:

Փուլ 1՝ կատեգորիայի փոփոխություն

Համայնքային և պետական հողամասերի կատեգորիայի փոփոխությունը կարգավորվում է ՀՀ կառավարության 29.12.2011 թվականի N 1918-Ն և 1920-Ն որոշումներով (այսուհետ՝ Որոշում). Որոշման համաձայն համայնքի ղեկավարը (մարզպետարանի աջակցությամբ) մշակում է կատեգորիայի փոփոխության փաթեթը (այսուհետ՝ Փաթեթ) և ներկայացնում է լիազոր մարմնին (ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտե կամ տարածքային կառավարման նախարարություն). Լիազոր մարմինը փաթեթը ներկայացնում է Միջգերատեսչական հանձնաժողովին՝ դիտարկելու և եզրակացություն տրամադրելու համար: Միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացության հիման վրա համայնքի ավագանին հաստատում է կատեգորիայի փոփոխությունը: Հողամասի անջատումը և կատեգորիայի փոփոխությունը գրանցվում է պետական կադաստրում և դրանից հետո միայն հողամասը կարող է ձեռք բերվել ԲԷՑ-ի կողմից:

Փուլ 2՝ հողամասի ձեռք բերում

ՀՀ հողային օրենսգրքի 66 հոդվածի 2 մասի համաձայն, հողերը կօտարվեն Էներգետիկ կատեգորիայի հողերի կադաստրային արժեքով: Հողմասի ձեռք բերման պայմանագիրը կստորագրվի նոտարական գրասենյակում, որից հետո կգրանցվի պետական կադաստրում: Փոխհատուցման գումարը կվճարվի պայմանագիրը ստորագրելուց հետո 15 օրացուցային օրյա ժամկետում: Փոխհատուցումը կփոխանցվի համայնքի բանկային հաշվին:

ԲԷՑ-ը կտրամադրի ազդակիր համայնքաներին տեխնիկական, ֆինանսական (բոլոր հարկերը և տուրքերը կվճարվեն ԲԷՑ-ի կողմից) և իրավական աջակցություն Փաթեթի մշակման և միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունը ստանալու հարցերում: Պետական և համայնքային հողերի ձեռք բերման (ներառյալ հողի արժեքը) և կատեգորիայի փոփոխման հետ կապված ծախսերը կվճարվեն ԲԷՑ կողմից՝ կազմակերպության սեփական միջոցներից: Այդ միջոցները համայնքների կողմից կօգտագործվեն համայնքային բյուջեին համապատասխան, որը յուրաքանչյուր տարի ընդունվում է համայնքի ավագանու կողմից:

Նշում՝ էթե ԱԵԱ-ն օգտագործում է համայնքային/պետական հողամաս, ապա վերջինս
դասակարգվում է որպես վարձակալ կամ ապօրինի օգտագործող և փոխհատուցվում է
համապատասխանաբար: Այդ հողերում շինարարական աշխատանքները կարող են սկսվել միայն ՀԲ-
ի կողմից Համապատասխանության հաշվետվության հաստատումից հետո: